

**ԲԱՆԲԵՐ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ВЕСТНИК АРМЕНОВЕДЕНИЯ
JOURNAL OF ARMENIAN STUDIES**



ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆԴԵՍ

INTERNATIONAL REVIEW OF ARMENIAN STUDIES



2015 N 3 (9)

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝ Պ. Ա. Զորանյան
Գլխ. խմբ. տեղակալ՝ Վ. Ա. Խաչատուրյան
Պատ. քարտուղար՝ Ռ. Խ. Հակոբյան

Խմբագրական խորհուրդ

Աղասյան Արարատ, Ավետիսյան Պավել, Բարխուդարյան Վլադիմիր, Գևորգյան Համլետ, Իսահակյան Ավետիք, Հարությունյան Վլադիմիր, Հովհաննիսյան Լավրենտի, Մելքոնյան Աշոտ, Զորանյան Պավել, Պողոսյան Գևորգ, Սաֆրաստյան Ռուբեն, Սուվարյան Յուրի

Главный редактор: П. А. Чобанян
Зам. гл. редактора: В. А. Хачатурян
Отв. секретарь: Р. Х. Акобян

Редакционная коллегия

Агасян Арарат, Аветисян Павел, Арутюнян Владимир, Бархударян Владимир, Геворгян Гамлет, Исаакян Аветик, Мелконян Ашот, Оганесян Лаврентий, Погосян Геворг, Сафрастян Рубен, Суварян Юрий, Чобанян Павел.

Editor-in-Chief: P. A. Chobanyan
Vice-Editor: V. A. Khachaturyan
Exec. Secretary: R. Kh. Hakobyan

Editorial Board

Aghasyan Ararat, Avetisyan Pavel, Barkhudaryan Vladimir, Chobanyan Pavel, Gevorgyan Hamlet, Harutyunyan Vladimir, Hovhannisyan Lavrenti, Isahakyan Avetik, Melkonyan Ashot, Poghosyan Gevorg, Safrastyan Ruben, Suvaryan Yuri.

Գիտական խորհուրդ

Աղասյան Արարատ

Ավագյան Արծրուն

Ավետիսյան Պավել

Բարդակչյան Գևորգ

Բարխուդարյան Վլադիմիր

Գևորգյան Համետ

Դանիելյան Էդուարդ

Դեդեյան Ժիրայր

Դեմոյան Հայկ

Դում-Թրագուտ Յասմին

Չերիյան Լևոն

Թամրազյան Հրաչյա

Իսահակյան Ավետիք

Խառատյան Ալբերտ

Կատվալյան Վիկտոր

Հայրապետյան Սերգո

Հարությունյան Վլադիմիր

Հովհաննիսյան Լավրենտի

Հովհաննիսյան Հենրիկ

Հովհաննիսյան Ռիչարդ

Հովսեփյան Լիանա

Մահե Ժան-Պիեռ

Մելքոնյան Աշոտ

Մինասյան Էդիկ

Մուրաֆյան Կլոդ-Արմեն

Պողոսյան Գևորգ

Սաֆրաստյան Ռուբեն

Միմոնյան Արամ

Մուվարյան Յուրի

Տոնապետյան Անահիտ

Научный совет

Ագասյան Արարատ

Աვაգյան Արցրուն

Աветисян Павел

Айрапетян Серго

Арутюнян Владимир

Бардакчян Геворг

Бархударян Владимир

Геворгян Гамлет

Даниелян Эдуард

Дедеян Жирайр

Демоян Айк

Дум-Трагут Ясмин

Зекиян Левон

Исаакян Аветик

Катвалян Виктор

Маэ Жан-Пьер

Мелконян Ашот

Минасян Эдуард

Мутафян Клод-Армен

Овсепян Лиана

Оганесян Генрик

Оганесян Лаврентий

Оганесян Ричард

Погосян Геворг

Сафрастян Рубен

Симонян Арам

Суварян Юрий

Тамразян Рач

Тонапетян Анаит

Харатян Альберт

Scientific council

Aghasyan Ararat

Avagyan Artsrun

Avetisyan Pavel

Bardakchyan Gevorg

Barkhudaryan Vladimir

Danielyan Eduard

Dedeyan Gerard

Demoyan Hayk

Dum-Tragut Jasmine

Gevorgyan Hamlet

Hayrapetyan Sergo

Harutyunyan Vladimir

Hovhannisyan Lavrenti

Hovhannisyan Henrik

Hovannisian Richard

Hovsepyan Liana

Isahakyan Avetik

Katvalyan Viktor

Kharatyan Albert

Mahe Jean-Pierre

Melkonyan Ashot

Minasyan Eduard

Mutafian Claude-Armen

Poghosyan Gevorg

Safrastyan Ruben

Simonyan Aram

Suvaryan Yuri

Tamrazyan Hrach

Tonapetian Anahit

Zekian Levon

ԲԱՆԲԵՐ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ 2015 Թ. N3 (9)

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ

Մանասյան Ա. – Հայոց ցեղասպանություն. քաղաքական վերաիմաստավորման փորձ մեկ դար անց.....	7
Քերթմենջյան Դ. – Հայոց ցեղասպանությանը նվիրված հուշարձանների ճարտարապետական ոճական որոշ առանձնահատկությունների մասին	37

ՀՈՒՎԱԾՆԵՐ

Բարխուդարյան Վ. – «Մատուցի Դավիթ» էպոսը և ազգային ինքնությունը.....	39
Դոլուխանյան Ա. – Լազարյան ճեմարանը և Մկրտիչ Էմինը.....	75
Պողոսյան Ա. – Արցախյան գորգագործական ավանդույթների տարածման արեալների ու կովկասի հարավարևելյան գորգագործական կենտրոնների փոխառնությունների մասին.....	78
Թորոսյան Շ. – Տրապիզոնը Հայաստանի համար որպես Սև ծով ելքի հնարավորություն և Պոնտոսի հույների դիրքորոշումը (1919–1920 թթ.).....	114
Կոստիկյան Ք., Մկրտումյան Գ. – Մուհամմադ մարգարեի ու Ալի իբն Աբու Թալիբ խալիֆայի անունից հայերի հետ կնքված դաշնագրերը որպես պատմական փաստաթղթեր.....	118

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Մսրրեան Չ. – Հայոց ցեղասպանությունը եւ բրիտանական դիւանագիտությունը.....	149
Մեյթիսանյան Փ. – Աստծուն տրված անուններն ու անվանումները Սուրբ գրքում.....	155
Մեշքանբաբյան Ժ. – Արևելյան Հայաստանը Սեֆյան Իրանի վարչական համակարգում ըստ պարսկական աղբյուրների	172

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Տեր-Մաթևոսյան Վ. – Թուրք-վրացական ռազմավարական համագործակցությունը և Հայաստանը (Կարս–Ախալքալակ երկաթուղու նախագիծը).....	184
--	-----

ԸՆԴԴԵՄ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ

Չոբանյան Պ. – Ժողովրդագրական տեղաշարժերը և տեղանունները Արևելյան Հայաստանում XIX դարի առաջին երրորդում	212
--	-----

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Մարգարյան Ն. – «Գրիգոր Սյունի. Խմբերգեր»	221
--	-----

ԼՐԱՏՈՒ

Մարության Հ. – Հայոց ցեղասպանություն – 100. Ճանաչումից՝ հատուցում.....	235
--	-----

ՈՒՂԵՑՈՒՅՑ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

244

ВЕСТНИК АРМЕНОВЕДЕНИЯ 2015 Г. N3(9)

100-ЛЕТИЕ ГЕНОЦИДА АРМЯН

Манасян А. – Геноцид армян. Попытка политического переосмысления век спустя 100 лет...	18
Кертменджян Д. – О некоторых архитектурных стилистических особенностях памятников, посвящённых Геноциду армян.....	35

СТАТЬИ

Бархударян В. – Эпос «Давид Сасунский» и национальная идентичность.....	51
Долуханян А. – Лазаревский институт восточных языков и Никита Эмин	73
Погосян А. – Об ареалах распространения ковроткацких традиций Арцаха и их взаимоотношениях с ковроткацкими центрами юго-восточного Кавказа	100
Торосян Ш. – Трапезунт для Армении как возможность выхода к Чёрному морю и позиция понтийских греков (1919–1920).....	116
Костилян К., Мкртумян Г. – Договоры заключённые от имени пророка Мухаммеда и Халифа Али ибн Абу Талиба с армянами как исторические документы	145

СООБЩЕНИЯ

Мерлян З. – Геноцид армян и британская дипломатия.	149
Мейтиханян П. – Данные богу имена и названия в Священном писании	165
Мешканбарянс Ж. – Восточная Армения в административной системе сефевидского Ирана по персидским источникам.....	173

ОБСУЖДЕНИЯ

Тер-Матевосян В. – Турецко-грузинское стратегическое сотрудничество и Армения (Проект железной дороги Карс–Ахалкалаки)	186
--	-----

ПРОТИВ ФАЛЬСИФИКАЦИИ

Чобанян П. – Демографические перемещения и топонимия Восточной Армении в первой трети XIX века	235
--	-----

РЕЦЕНЗИИ

Саргсян Н. – «Григор Сюни. Хоры».....	221
---------------------------------------	-----

ИНФОРМАЦИЯ

Марутян А. – Геноцид армян – 100: от признания к компенсации.....	235
---	-----

РУКОВОДСТВО ДЛЯ АВТОРОВ

246

JOURNAL OF ARMENIAN STUDIES 2015 N3(9)

THE 100TH ANNIVERSARY OF ARMENIAN GENOCIDE

Manasyan A. – The Genocide of the Armenians: an Effort at Political Reexamination One Century Later	21
Kertmenjian D. – About Some Architectural Stylistic Features of the Armenian Genocide Memorials ...	25

ARTICLES

Barchudaryan V. – “David of Sasun” Epic and Ethnic Identity.....	53
Doloukhanyan A. – L’institut Lazareff des Langues Orientales et Mekertitch Émine.....	55
Poghosyan A. – On Interconnections of Areal Dissemination of Artsakh's rugs Weaving Traditions and Southeastern Rug Weaving Centers of Caucasus	103
Torosyan S. – Trabzon for Armenia as an Opportunity of Access to the Black Sea and Pontic Greeks Position (1919–1920).....	105
Kostikyan K., Mkrtumyan G. – Pacts signed with Armenians on behalf of Prophet Muhammad and the Caliph Ali ibn Abi Talib as the historical documents	147

REPORTS

Messerlian Z. – The Genocide of the Armenians and the British Diplomacy	149
Meytikhanyan P. – The names and titles given to God in the Holy Book (God the Son, Holy spirit) ..	166
Meshkanbarians J. – Eastern Armenia within the Administrative System of the Sefevide Iran According to the Persian Sources.....	167

DISCUSSIONS

Ter-Matevosyan V. – Turkish-Georgian Strategic Partnership and Armenia. (Kars-Akhalkalaki Railway Project).....	174
--	-----

AGAINST FALSIFICATION

Chobanyan P. – Demographic Migration and Toponymy in Eastern Armenia in the First Third of the XIX Century	217
---	-----

BOOK REVIEWS

Sargsyan N. – “Grikor Suni, Choral songs”	221
--	-----

INFORMATION

Marutyan H. – Genocide of Armenians – 100: from Recognition to Reparation.....	235
---	-----

GUIDELINES FOR CONTRIBUTORS	245
------------------------------------	------------

THE 100TH ANNIVERSARY OF ARMENIAN GENOCIDE ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՆԱՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ

manasyan-a22@mail.ru

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԱԻՄԱՍՏԱՎՈՐՄԱՆ ՓՈՐՁ ՄԵԿ ԴԱՐ ԱՆՑ

2015 թ. ապրիլի 24-ին հայ ժողովուրդը խոնարհումով խնկարկեց Մեծ եղեռնի անմեղ զոհերի հիշատակը: Այդ օրը մեզ հետ էր ողջ առաջադեմ մարդկությունը, որի համար 1915 թվականը և ապրիլի 24-ը դարձել են մարդկության դեմ ամենաձանր հանցագործության՝ ցեղասպանության դատապարտման ու կանխարգելման խորհրդանիշեր: Օսմանյան կայսրության և դրանից հետո հանրապետական Թուրքիայի կողմից իրագործած Եղեռնը հայ ժողովրդի մոտ կմնա որպես վերք, որը չի սպիանա, եթե հանցագործը չարժանանա համընդհանուր դատապարտման, եթե նա չսպաշխարհի ու հայերին չվերադարձնի այն, ինչը նրանցից խլել է դավադիր սպանությամբ: Ցեղասպանության շուրջ լռության տասնամյակներից հետո այդ ոճիրը համեմատաբար նոր է դարձել քաղաքական բաց քննարկումների առարկա: Իրենց բացահայտմանն են սպասում նրա բազմաթիվ մուլթ էջեր, իրենց նոր մեկնաբանությանն են սպասում համամարդկային աղետի արդեն իսկ հայտնի փաստեր: Ստորև կանդրադառնանք դրանցից մի քանիսին համառոտ դիտարկումների ձևով: Սույն վերլուծության հիմնական եզրակացությունները բխում են այն դրույթից, որ լայնորեն շրջանառվող և հանրային ընկալումը կաղապարող «**Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանությունը 1915–1923 թթ.**» բանաձևը լիովին չի արտացոլում մարդկության դեմ գործած այդ հանցագործության փաստական ու քաղաքական ամբողջական բովանդակությունը:

Առաջին դիտարկում

**«Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանությունը 1915–1923 թթ.»
բանաձևը չի արտացոլում ոճրագործության աշխարհագրությունը**

Քննարկվող ձևակերպումը ոճիրը աշխարհագրորեն կապում է միայն և միայն Օսմանյան կայսրության հետ հակառակ հանրահայտ ու անհերքելի այն փաստի, որ Թուրքական պետությունը թե՛ սուլթանի օրոք, թե՛ նրան իշխանությունից հեռացնելուց հետո հայերի բնաջնջման քաղաքականությունը առաջ է տարել նաև կայսրության սահմաններից դուրս՝ Նախիջևանում և Արևելյան Անդրկովկասում: Տասնամյակներ տևած տաբուն բացատրություն ունի:

Արևմուտքն աշխատում էր իր ռազմավարական դաշնակից Թուրքիային ազատել XX դարի սկզբին գործած հանցանքի մեղքից՝ այն բաժին թողնելով պատմությունը լքած Օսմանյան կայսրությանը: Փաստն անտեսում էր նաև Խորհրդային Ռուսաստանը, որը հույս ուներ Թուրքիան ու Խորհրդային Ադրբեջանը դարձնել ցատկահարթակ «կարմիր հեղափոխությունը» մահմեդական արևելք արտահանելու իր ծրագրերում: XX դարի վաթսուևական թվականներին, երբ արդեն հանված էր թեմայի արծարծման արգելանքը, Մոսկվան հանդուրժեց **«Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանությունը 1915–1923 թթ.»** բանաձևի շրջանառումը՝ հետևելով, որ Նախիջևանում և Արևելյան Անդրկովկասում հայկական կոտորածները չիիշատակվեն, քանի որ դա պիտի խանգարեր հայերի ու ադրբեջանցիների՝ «լենինյան բարեկամության» մասին քաղաքական առասպելի ներդրմանը: Այսպես են ոճիրի հանցակազմից դուրս մնացել 1918 թվականին Հարավային Կովկաս խուժած թուրքական կանոնավոր բանակի և տեղի թուրքերի կողմից երկրատարածքի հայության կոտորածները:

Այսօր իրադրությունն այլ է: Եվրոպական տերություններն արդեն իսկ Հայոց ցեղասպանության ճանաչումը դարձրել են Թուրքիայի հետ իրենց հարաբերությունների կարգավորման պայման, և այդ պայմաններում այլևս աններելի է լռել Արևմտյան Հայաստանում¹, Նախիջևանում և Արևելյան Անդրկովկասում հայերի Եղեռնի մասին, լռել այն մասին, որ դրանք նույն ցեղասպանության տարբեր փուլերն են: Նույնն է ոճրագործը, նույնն է զոհը²: Փաստն հանիրավի դուրս է մնացել հարցի շրջանակներից, երբ կարող է լինել ցեղասպանության ուրացման Թուրքիայի քաղաքականության քողագերծման կարևոր փաստարկը: Եվ ահա թե ինչու:

Մինչ օրս Եղեռնի ուրացման թուրքական փաթեթի հիմնական փաստարկը, որով Անկարան հակադարձում է ներկայացվող մեղադրանքին, այն է, թե իբր թուրքերը չեն ունեցել ցեղասպանության կանխապես մտածված ծրագիր,

¹ Safrasyan Ruben, 2011.

² Danielyan E.L., N 1, 2014, 49.

բայց տեղահանել են հայերին պատերազմի մեջ գտնվող Օսմանյան կայսրության նկատմամբ նրանց անհուսալիության պատճառով: Տարահանված հայերի քարավանների հետ ճանապարհին «խաժամուժի» հարձակումների հետևանքով պատահած «դժբախտ դեպքերը», ինչպես պնդում է պաշտոնական Անկարան, ցեղասպանություն չի կարող դիտվել:

Հայերի կոտորածները Նախիջևանում և Արևելյան Անդրկովկասում այդ կեղծիքը քողազերծում են անառարկելի ձևով: 1918 թվականին ոչ թե թուրք ու քուրդ խաժամուժը, այլ թուրքական կանոնավոր բանակն է Բաքու տանող ամբողջ ճանապարհին հրկիզել հայկական բնակավայրեր ու կոտորել դրանց խաղաղ բնակիչներին, և հետո նույնը արել է Բաքվում: Բազմաթիվ վկայություններով ու փաստաթղթերով հաստատված այդ փաստը տեղահանությունների «հիմնավորման» թուրքական թողապանակում տեղ չի թողնում հայերի անհուսալիության մասին կեղծ դրույթի համար³: Նախիջևանում և Արևելյան Անդրկովկասում իրենց պապենական հողերում դարեր ի վեր ապրող հայերը Օսմանյան կայսրության քաղաքացիներ չեն եղել որպեսզի անհուսալի որակվեն և ոչ էլ որևէ վտանգ են ներկայացրել կայսրության կամ Թուրքիայի համար: Նրանց կոտորել են տեղում միայն այն բանի համար, որ նրանք հայ են:

Երկրորդ դիտարկում

1923 թվականին Թուրքիայում վերջ չի դրվել ցեղասպանության քաղաքականությանը, ինչպես դա ներկայացված է «Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանությունը 1915–1923 թթ.» բանաձևում

Կարևոր է նաև Եղեռնի ժամանակային սահմանների հստակեցումը: 1915-ի ապրիլի 24-ը Եղեռնի զոհերի հիշատակման խորհրդանշական օր է և այն հայասպանության թուրքական քաղաքականության սկիզբը չէ, ինչպես դա ներկայացվում է խնդրո առարկա բանաձևում: Հայերի ջարդերը կայսրությունում սկսվել են 1915-ից տասնամյակներ առաջ: 1915-ը՝ ցեղասպանական ամենադաժան արարքների տարին, ժողովուրդն առանձնացրել է որպես Մեծ եղեռնի/Մեծ ցեղասպանության տարի:

Սակայն թուրքական հանցագործության քաղաքական բովանդակությունը խեղաթյուրում է ոչ այնքան 1915-ը դիտավորությամբ կամ վրիպումով ցեղասպանության սկիզբ համարելը, որքան այդ քաղաքականության ժամանակային սահմանափակումը 1923-ով՝ Օսմանյան կայսրության պատմության

³ Փաստաթղթերի մի զգալի մասը ներկայացված է 2003-ին Երևանում լույս տեսած «Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918–1920 թթ. փաստաթղթերի ժողովածուի մեջ:

ավարտով⁴։ Կատարված ոճի իր համաշխարհային պատմությունից դուրս մղելու, հանցագործության ժխտման մինչ օրս շարունակվող համառ փորձերը, Եղեռնի զոհերի ինչքի սեփականումը, Հայաստանի Հանրապետությունը և Արցախը շրջափակման օղակում խեղդելու գործելակերպը, հայոց դարավոր մշակութային ժառանգության յուրացումը կամ ոչնչացումը, Եղեռնից փրկվածների բռնի դավանափոխումն ու թուրքացումը՝ այս բոլորը Օսմանյան կայսրության քաղաքականության շարունակությունն են, որ իր հիմնադրման առաջին օրից հետևողականորեն տարել ու հիմա էլ առաջ է տանում հանրապետական Թուրքիան, պետություն, որ հիմնել են Եղեռնին անմիջականորեն մասնակցած այդ երկրի քաղաքական ուժերը⁵։

Երրորդ դիտարկում

Թուրքական իշխանությունները և թուրք ժողովուրդը հավասարապես մասնակցել են ոճի իր և հավասարապես պատասխանատու են կատարվածի համար

Մերօրյա թուրքերն ազգամիջյան հարցերում իրենց քաղաքական վարքը ժառանգել են իրենց նախնիներից՝ միջնադարում Առաջավոր Ասիա խուժած օղուզներից ու սելջուկներից, որոնք երկրատարածքի արգավանդ դաշտերին ու արոտավայրերին տիրելու և տեղում ամրանալու այլ եղանակը չգիտեին, քան դրանց տերերին դուրս մղելն ու կոտորելը, նրանց բնակավայրերի ավերումն ու թալանը, որին նրանք մասնակցում էին ամբողջ ցեղով։ Արյունոտ այս վարքը պահպանվեց նաև այն բանից հետո, երբ գրավյալ տարածքներում նրանք հիմնեցին միջնադարյան պետական կազմավորումներ ու ապա նաև կայսրություն։ Դրանից հետո էլ թուրքերը պահպանեցին քոչվորական շրջանում ձևավորված կենսակերպի հիմնային բնութագրերը, որոնք ազգային զարգացումը սահմանափակում են էքստենսիվ զարգացման՝ քանակական

⁴ Թեմային նվիրված գրականության մեջ այդ հանգամանքին բազմաթիվ անդրադարձներ են եղել։ Ջոն Կիրակոսյանը փաստը ավելի ընդգծելու համար այն ամրագրել է իր՝ «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (1915-9 մինչև մեր օրերը)» (Երևան, 1983) գրքի վերնագրում և նրանում առանձնացրել հատուկ գլուխ՝ «Օսմանյան կայսրությունը խորտակվեց։ Հայասպանությունը շարունակվեց»։ Չարմանալի է, որ պաշտոնական մեր փաստաթղթերում տեղ գտած ձևակերպումներն ու բանաձևումները շրջանցում են այդ իրողությունը։

⁵ Մեր մասնագետներն ու քաղաքական գործիչները ևս իրենց ելույթներում անդրադարձել են դրանց։ Բավական է հիշատակել Ֆրանկոֆոնայի խորհրդարանական վեհաժողովի Եվրոպայի տարածաշրջանի սեկցիաների նախագահների 2015 թ. մարտի 27-ին Երևանում տեղի ունեցած համաժողովում ՀՀ ԱԳ նախարար Էդուարդ Նալբանդյանի կողմից հնչեցված ձևակերպումը՝ «Ցեղասպանությունների դարաշրջանը անցած իրողություն չէ»։ Տե՛ս <http://www.menq.org/>։

անի ու տարածական ծավալման կադապարում⁶: Ծավալապաշտության կայսերական զինանոցում արյունոտ զենքերից բացի հայտնվեց նորը՝ ժողովրդագրական գրոհը⁷: Թուրքական իշխանություններն ու թուրք ամբոխը արշավանքների ժամանակներից եկած ավանդույթով միասնական էին կայսրության այլագգի ու այլադավան բնակչությանը թալանելու, շահագործելու, կոտորելու, ուրիշների հողերում ամրանալու հարցում: Ամբոխը մնաց թուրքական ազգային վարքը բնութագրող բանալի երևույթը, որ արտացոլում է իշխանությունների ու թուրքական զանգվածի միասնությունը «այլոց» նկատմամբ տարվող քաղաքականության մեջ⁸: Կողոպուտի ու կոտորածի «մշա-

⁶ Գրականության մեջ լայնորեն տարածված այն կարծիքը, թե իբր իսլամը դուրս է մղել ազգային թուրքի ինքնությունից և մոռացության մատնել նրա պատմությունը, գուրկ է հիմքերից (դրանց քննությունը տես **Танер Акчам**, 1955, 19–34): Նա նստակյաց ժողովուրդների պես «ներքին քաղաքական պատմություն» չունի, որ իսլամի մամիչի տակ մոռանար: Թուրքը հայտնվել էր մի երկրամասում, որի ժողովուրդները առանց բացառության ավելի բարձր քաղաքակրթական արժեքների կրողներ էին: Այդ արժեքներին հաղորդակցվելու և դրանք որդեգրելու դեպքում նա պիտի ձուլվեր տեղացիների մեջ: Մերժելով բնիկների հետ գիտական ու բարձր մշակութային մրցակցության իր համար անհեռանկար ուղին, նա իրեն պիտի գտներ ժողովուրդների հպատակեցման քաղաքական հնարքներում, իշխանության ու բռնության «արվեստում» կատարելագործվելու իր համար հարագատ ոլորտներում: Թուրքը ոչ միայն անհաղորդ մնաց կայսրության ժողովուրդների քաղաքակրթական ձեռքբերումներին, այլև ամեն կերպ խոչընդոտեց նրանց զարգացումը: Կայսրության տիրապետության հարյուրամյակները դարձան հետընթացի մռայլ ժամանակներ նրա բոլոր ժողովուրդների համար: Ցեղասպանության ուրացման, պատմական փաստը ազդեցիկ քարոզությամբ ժխտելու մեթոդային Թուրքիայի վարքը ցույց է տալիս, որ նա պատրաստ չէ ապաշխարանքի և ուրեմն չի փոխել ցեղասպանածին իր բնությունը և որ այդ իմաստով նա գլոբալ քաղաքակրթական վտանգ է ներկայացնում:

⁷ Կայսրության ժողովրդագրական քաղաքականությունը տարբեր ձևերում է առաջ տարվել: Դա չի սահմանափակվել ջարդերով կամ էթնիկ թուրքերին տրված տնտեսական ու քաղաքական արտոնություններով: Սուլթան Մուրադ Առաջինի կողմից 1365 թվականին հիմնած ենիչերիների զորախմբերը առավելապես համալրվում էին քրիստոնյա ընտանիքներից վերցված տղա երեխաներով (դա յուրօրինակ *արյան հարկ* էր, որ կոչվում էր *դենլիլուն*), որոնց հավատափոխ էին անում, տալիս համապատասխան ռազմական դաստիարակություն և ուղղում հենց քրիստոնյա ժողովուրդների ընդվզումները ճնշելուն: Կայսրության նվաճողական պատերազմներում զոհերը հիմնականում տալիս էին կամ քրիստոնյա բնակիչները կամ ծագումով քրիստոնյա յենիչերիները: Այսօր ըստ էության նույն բանն անում է Բաքուն՝ դարաբաղյան ճակատ ուղարկելով հիմնականում հանրապետության ազգությամբ ոչ թուրք զինվորներին:

⁸ Իր «Турецкое национальное «Я» и армянский вопрос» (М., 1955) գրքում Թաներ Ակչամը «Участие гражданского населения в геноциде» վերնագրով հատուկ ենթաբաժին է հատկացրել (էջ 114–119) այդ հարցին: Բավական է թերթել թեմային նվիրված

կույթ» որդեգրած ժողովուրդը և իր հիմնած պետությունը պատմական հեռանկար չէին կարող ունենալ, և արդեն XIX դարում ակնհայտ էր, որ Օսմանյան կայսրությունը ոչ միայն դուրս է մնացել քաղաքակրթության ընդհանուր ընթացքից, այլև խոչընդոտում է այդ ընթացքը⁹:

XIX և XX դարերի սահմանագծում վերացման դատապարտված այդ պետականության ճգնաժամի պայմաններում էր, որ հպատակ ժողովուրդներին շահագործելու ու թալանելու ավանդույթով ձևավորված ու պետության օրենքներով արտոնված կենսակերպը վերաճեց ցեղասպանական գիտակցված վարքի: Այդ գիտակցության ու վարքի կրողները պետական պաշտոնյաների փոքրիկ խումբ կամ հասարակության նեղ շերտ չէր: Հայերի, հույների, ասորիների ցեղասպանության իրական հանցագործը թուրքական հասարակության մեջ մեծամասնություն կազմող այն խավն էր, որի ձեռքերում են եղել պետական իշխանության լծակները թե՛ Օսմանյան կայսրությունում, թե՛ հանրապետական Թուրքիայում և որն այսօր ինքն իրեն շարունակում է վերարտադրել հասարակության բոլոր շերտերում՝ պետական վերնախավից ու ստորադաս վարչական օղակներից սկսած մինչև «շարքային թուրքը»¹⁰: Այսօր էլ այդ զանգվածը, այլ ոչ թե՛ դրան ընդդիմադիր սակավաթիվ խավն է որոշում եղեռնագործության ուրացման հարցում թուրքերի պետական քաղաքականությունը: Այդ հանգամանքն է միավորում մի կողմից թուրք ժողովրդի, մյուս կողմից Օսմանյան կայսրության և հանրապետական Թուրքիայի պատասխանատվությունը մարդկության դեմ կատարած հանցագործության համար: Նույն այդ հանգամանքն է միավորում «ցեղասպան Թուրքիա» և «ցեղասպան թուրք» հասկացությունները, որոնք տարածաշրջանի և նրա սահմաններից դուրս ապրող ժողովուրդները ընկալել են որպես հոմանիշներ ու ամրագրել «այստեղով անցել է թուրքը»¹¹, «թուրքը մնում է թուրք» և այդ կարգի լայնորեն հայտնի այլ արտահայտություններում: Թուրքական դեպքի համար «ցեղասպանությունը պետական քաղաքականություն է» ձևակերպումը ակնհայտորեն թերի է՝ այդ ոճիրին թուրքերի զանգվածային մասնակցության պատճառով: Այս ճշմարտությունը

փաստագրական կամ վերլուծական գրականությունը համոզվելու համար, որ *ամբողջ* թուրքական քաղաքական մշակույթի դրսևորման բանալի երևույթն է: 1918 թ. Բաքվի մարտյան դեպքերի ականատեսներից մեկը ըստ Մայքլ Սմիթի մարդկանց կատաղի այդ զանգվածը անվանել է սև ամբոխ – qara deste. Տե՛ս **Майкл Смит**, 2001, 95.

⁹ Տե՛ս **The Economic Decline of Empires**, 2010, 227.

¹⁰ Հատկանշական է, որ Թալյաթը իր հուշերում նաև իր մեղքը թերեւսցնելու համար խոստովանում է, որ ջարդեր իրագործողները ժողովուրդը և մի շարք պաշտոնյաներ են եղել (այդ դիտարկումը տես՝ Թալյաթ փաշայի հուշերը, 1963, 78–79, 129–130):

¹¹ Եվրոպայում և մեր տարածաշրջանում լայնորեն հայտնի «The turks have passed by here all is in ruins and mourning» արտահայտությունը, ինչպես հայտնի է, պատկանում է Վիկտոր Հյուգոյին (<http://www.lewrockwell.com/2013/09/eric-margolis/ruins-and-mourning>):

հաճախ չի բարձրաձայնվում բարեպաշտության ու նրբանկատության անհարկի նկատառումներով: Իրականում դրա գիտակցումը կօգնի թուրք ժողովրդին ճանաչել ինքն իրեն և թողափել մեղքի բեռը: Քանի դեռ հանցանքն ուրացողների զանգվածը թուրք հասարակության մեջ մեծամասնություն կկազմի և կպայմանավորի պետական քաղաքականությունը, ազգասպանությունը կմնա թուրքի ինքնության և նրա պետականության բնութագիրը: Ահա թե ինչու Հայոց ցեղասպանության ճանաչման մասին Թուրքիային հասցեագրված ուղերձները նաև թուրք ժողովրդին ուղված ուղերձներ են:

Չորրորդ դիտարկում

Թուրքիան հիմնել ու շարունակում է հիմնել ցեղասպան պետություններ, միջազգայնորեն լեգալացնելով ցեղասպանական պրակտիկան

Թուրքայի ցեղասպանածին բնույթը XX դարում դրսևորվել է ոչ միայն Օսմանյան կայսրությունում և նրա սահմաններից դուրս հայերի, հույների ու ասորիների բնաջնջման, այլև նոր ազգասպան պետություններ հիմնելու ձևով: Նա արդեն հիմնել է քաղաքակրթական իր գենը՝ կրող պետություններ՝ Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետությունը՝ հույների, իսկ Ադրբեջանական Հանրապետությունը՝ Նախիջևանի և Արևելյան Անդրկովկասի հայության ցեղասպանության ճանապարհով: Ակնհայտ է ազգասպանության թուրքական քաղաքական մշակույթի ազդեցությունը Հարավսլավիայի տրոհման և մեր օրերում Մերձավոր Արևելքում ծավալվող գործընթացներում:

Թուրքական նախագծով հիմնված առաջին պետությունն այսպես կոչված Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունն էր, որը 1918-ի սեպտեմբերին հիմնեցին հայերի կոտորածներով Բաքու հասած թուրքական զորքերը¹²: Երկրատարածքում XX դարում «Ադրբեջան» անունը կրող պետությունների կերպափոխությունները, նրանցում անփոփոխ են թողել էթնիկ թուրք այն զանգվածի ցեղասպանածին վարքը, որի ձեռքերում հայտնվել էր իշ-

¹² Կոտորածները երկրատարածքի ժողովրդագրական դեմքը փոխելու նպատակն էին հետապնդում: Հրկիզվեցին տասնյակ ու տասնյակ հայկական ու ուղիական բնակավայրեր: Եթե 1914 թ., օրինակ, Նուխու, Գեոկչայի, Շամախու և Արեշի գավառներում 73526 մարդ էր, ապա 1921 թվականին այդ թիվը նվազել էր գրեթե վեց անգամ (12716 մարդ): Եթե Նուխու գավառում հայերը 1917 թվականին կազմում էին բնակչության 20,2 տոկոսը, ապա թուրքական ռազմարշավից ու մուսավաթական տիրապետությունից հետո 2,4 տոկոսը: Պատկերը գրեթե նույնն էր մյուս գավառներում: Ադրաշի գավառում, օրինակ, ուր հայերը ազգաբնակչության 19,5 տոկոսն էին կազմում, գրեթե հայ չմնաց (0,7 տոկոս): Ի դեպ նույն ճակատագրին արժանացան ռուսական բնակավայրերը հատկապես Սալյանի ու Լենքորանի գավառներում: 1914 թ. տվյալներով այդ շրջաններն ունեին 40800 ռուս ազգաբնակչություն, որից 1921 թվականին մնացել էր ընդամենը 14921 ռուս (տվյալները ըստ՝ БЭС, т. 1, 1926, 642):

խանությունը Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունում, Խորհրդային Ադրբեջանում և մերօրյա Ադրբեջանական Հանրապետությունում:

Խորհրդային տարիներին նոր «ադրբեջանական» ազգ ձևավորելու ստալինյան նախագծով տարված բոլշևիկյան կենտրոնը չտեսնելու է տվել ազգային հալածանքներով հանրապետությունից հայերի դուրս մղման Բաքվի քաղաքականությունը, որն արդեն 1970-ական թվականներին հանգեցրել է Նախիջևանի հայաթափմանը, իսկ 1988-ին Մումգայիթից սկսած ստացել է հայերի զանգվածային ջարդերի բնույթ: Ինչպես Օսմանյան կայսրությունում ու Թուրքիայում, այնպես էլ Խորհրդային Ադրբեջանում միայն հայությունը չէր ցեղասպանության քաղաքականության թիրախը: Միաժամանակ տարվում էր իսլամադավան բնիկ ժողովուրդների բռնի ուժացման քաղաքականություն: Դրան դիմագրավելու միակ ձևը յուրօրինակ ազգային ընդհատակ անցնելն էր, որտեղ այսօր գտնվում է լեզգիների, թալիշների, թաթերի և բնիկ մյուս ժողովուրդների մեծ մասը: ԽՍՀՄ գոյության վերջին տարիներին երբեմնի բազմազգ Խորհրդային Ադրբեջանի էթնիկական քարտեզից անհետացել էին երկրամասի՝ բռնությամբ «ադրբեջանցի» դարձած իսլամադավան բոլոր ժողովուրդները:

Հետխորհրդային Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևի «Մեկ ազգ, երկու պետություն» բանաձևը եկավ հաստատելու, որ ցեղասպանը ազգությամբ նույն թուրքն է թե՛ Անկարայում, թե՛ Բաքվում: Բանաձևը ամրագրում է այն ընդհանրությունը, որ միավորում է թուրքերին¹³: Եվ դա այն է, որ թուրքը թե՛ Առաջավոր Ասիայում իր կողմից գրաված տարածքներում, թե՛ հարավային Կովկասում, որտեղ նա քողարկվել է «մուսուլման», «կովկասյան թաթար», «ադրբեջանցի» դիմակների տակ, հետևողականորեն տարել ու տանում է այլ ազգերի սպանության քաղաքականություն: Պատահական չէ, որ ՀՀ և ԼՂՀ շրջափակումը Թուրքիան և Ադրբեջանը իրագործում են համատեղ: Պատահական չէ, որ ԼՂՀ դեմ սանձազերծած պատերազմում հայկական բնակավայրերն էին հրետակոծությունների ու ռմբակոծությունների հիմնական թիրախը: Պատահական չէ, որ Բաքվում հայաստանյան ադրբեջանցիներին՝ սումգայիթյան ցեղասպանության հանցագործներին ու Բուդապեշտում իր հայ գործընկերոջը կացնահարած Ռամիլ Սաֆարովին հերոսացնում են այնպես, ինչպես Թուրքիայում հերոսացնում են Եդեմնի գլխավոր հանցագործներ Թալլաթին ու Էնվերին: Արևելյան Անդրկովկասում և Նախիջևանում հայերի ցեղասպանությունը հայոց ցեղասպանության թուրքական նույն

¹³ Թուրքերին, բայց ոչ՝ թյուրքերին: Այս ճշգրտումը խիստ կարևոր է, քանի որ Անկարայի ու Բաքվի տեսաբանները հաճախ են փորձում իրենց կողմից իրագործած եղեռնագործության մեղսակիցը դարձնել թյուրքական մյուս ժողովուրդներին, պնդելով, թե ցեղասպանության հարցում թուրքերին ներկայացվող մեղադրանքը ընդհանրապես թյուրքական էթնոսին հասցված վիրավորանք ու մեղադրանք է:

քաղաքականության դրսևորումն է՝ իրագործված «Ադրբեջան» ցուցանակը կրող պետության կողմից:

Հինգերորդ դիտարկում

Խոշոր տերությունները և ցեղասպան Թուրքիան ու Ադրբեջանը

Դեռևս 1915 թվականի մայիսին Ռուսաստանը, Ֆրանսիան և Մեծ Բրիտանիան հանդես են եկել համատեղ հայտարարությամբ, որով հայ ժողովրդի դեմ Օսմանյան կայսրությունում կատարվող զազանությունները որակել են որպես «մարդկության և քաղաքակրթության դեմ կատարված նոր հանցագործություններ» և համաձայնվել, որ թուրքական կառավարությունը այդ հանցագործության համար պետք է պատժվի¹⁴: Թվում էր, թե առաջին աշխարհամարտից հետո պիտի ի կատար ածվեր այդ պատիժը՝ կանխելու համար հանցագործության կրկնությունը: Թվում էր, թե մարդկության հանդեպ կատարված հանցագործության վտանգը գիտակցված է: Ավաղ: Ազգասպանության թուրքական բացիլի տարածման սպառնալիքն անտեսվեց: Արևմուտքը համամարդկային շահը ստորադասեց Թուրքիային Խորհրդային Ռուսաստանի դեմ օգտագործելու կասկածելի ծրագրին և 1923 թ. Լոզանում գորոցը նետեց իր իսկ կողմից ընդունած Սևրի պայմանագիրը, որով նախատեսվում էր հայկական հողերի մի մասում հայերի պետականության վերականգնումը¹⁵:

Հատուկ ընդգծել է պետք, որ իրենց պատմական հայրենիքում պետականության վերականգնումը, ինչը նախատեսվում էր Սևրի պայմանագրով, չէր նշանակի պատիժ ոճրագործի համար: Դա պետք է ընդամենը նշանակեր, որ խոշոր տերությունները պաշտպանում են սեփական հայրենիքում պետականության վերականգնման հայերի օրինական իրավունքը: Սակայն 1923 թ. Լոզանում նրանք չարեցին նույնիսկ այդ նվազագույնը: Հայկական հողերը թողնվեցին ցեղասպան Թուրքիային: Հանցագործությունը ոչ միայն չպատժվեց, այլև խրախուսվեց: Ավելին: Արևմուտքը թուրքին ներելու (իրականում՝ խրախուսելու) քաղաքական ուղեգծում տասնամյակներ շարունակ դարձավ Հայոց ցեղասպանությունը լռության փականի տակ պահելու, կատարվածը պատմությունից դուրս մղելու թուրքական ծրագրի մասնակիցը: Միայն Ադոլֆ Հիտլերը 1939-ին խախտեց լռությունը «իսկ ով է հիշում այդ մասին» հարցով, բայց ոչ թե թուրքերին դատապարտելու, այլ թուրքերին ընդօրինակելու համար: Բոլշևիկյան Ռուսաստանը ետ չէր մնում Արևմուտքից: Մեծ եղեռնից ընդամենը մի քանի տարի հետո, փորձելով իր կողմը քաշել «իմպերիալիզմի դեմ պայքարող» Թուրքիային, Մոսկվան նրան նվիրաբերեց Կարսը,

¹⁴ The Messenger online http://www.messenger.com.ge/issues/2161_august_2_2010/2161_econ_two.html

¹⁵ Shabas W.A., 2000, 16.

Արդահանը, Սուրմալուն, սուրբ Արարատ լեռը: Դրան հետևեցին նոր նվիրատվություններ: Թուրքիայի պահանջով նա հայկական Նախիջևանն ու Լեռնային Ղարաբաղը բռնությամբ օտարեց Խորհրդային Հայաստանից և մտցրեց Խորհրդային Ադրբեջանի սահմանները¹⁶:

Թվում էր՝ նացիստական Գերմանիայի դաշնակից Թուրքիան արժանի պատիժ կկրեր Երկրորդ աշխարհամարտից հետո: Բայց համամարդկային շահերն ու արժեքները նորից զոհաբերվեցին՝ այս անգամ «Խորհրդային Միություն-Արևմուտք» քաղաքական խաղերում: Նացիստական Գերմանիայի դաշնակից Թուրքիան պատերազմից դուրս եկավ առանց կորուստների: Հայկական տարածքները այս անգամ ևս թողնվեցին նրան:

ԽՍՀՄ տրոհումն Արևմուտքին նոր առիթ տրամադրեց հատակ դիրքորոշում դրսևորելու ցեղասպանությունը ազգային հարաբերությունների պրակտիկայից դուրս մղելու, ցեղասպանական ակտերը դատապարտելու, ցեղասպան կառավարություններին ու պետություններին պատժելու հարցում: Թվում էր, հայաթափված Նախիջևանը, «Ադրբեջանի ժողովրդական ճակատում» միավորված թուրք ջարդարարների կողմից մեկը մյուսի հետևից իրագործված «սումգայիթները»¹⁷ Արևմուտքի համար կասկածի տեղ չափտի թողնեին կատարվածը ցեղասպանություն որակելու համար: Ցեղասպանի դեմ ազատագրական պայքարի ելած Արցախ-Ղարաբաղին 1988-ից ի վեր բարոյապես քաջալերող Արևմուտքը, որ Մոսկվայից պահանջում էր գտնել խնդրի այնպիսի լուծում, որը կհամապատասխանի արցախահայության պահանջներին, 1991-ին, երբ ԽՍՀՄ տրոհումը արդեն ընդունել էր անշրջելի բնույթ, երես թեքեց Ղարաբաղից:

Ադրբեջանական Հանրապետությունը, որտեղից հայերը դուրս էին մղվել արյունալի ջարդերով, իսկ ոչ թուրք իսլամադավան ժողովուրդները ցեղասպանվում էին բռնի ուժացմամբ, ճանաչվեց նախկին Խորհրդային Ադրբեջանի սահմաններում՝ իրեն չպատկանող Նախիջևանով և ազատագրական պայքարի ելած Արցախով: Քաղաքական այդ որոշմամբ Արևմուտքը ոչ միայն դավաճանեց իր հռչակած ժողովրդավարության իդեալներին, այլև խրախուսեց ցեղասպանին

¹⁶ Մենք պատահաբար չէ, որ դիմում ենք «մտցվեցին Խորհրդային Ադրբեջանի սահմանները»: Կարսի պայմանագրով Նախիջևանը չի տրվել Խորհրդային Ադրբեջանին որպես տարածք, որտեղ նա սուվերեն իշխանություն պիտի ունենա: Այն տրվել է Խորհրդային Ադրբեջանի խնամակալությանը: Եվ միայն:

¹⁷ Հատկանշական է, որ ջարդարար ամբոխներին միավորող կազմակերպությունը կրում էր հենց *Ժողովրդական ճակատ* անվանումը, իր անվամբ իսկ հաստատելով Ադրբեջանի թուրքական զանգվածի ու իշխանությունների միասնությունը կոտորածների հարցում: Թուրքիայում ևս, այսպես կոչված «հակաիմպերիալիստական ազատագրական պայքարը» ընդունել էր հայերի ու մյուս բնիկ ժողովուրդների կոտորածների բնույթ, իսկ նույն «գործին լծված» հանցագործների ու ավազակների խմբերը իրենց անվանում էին «աշխարհագոր» (кувай милииье): Տե՛ս **Танер Акчам**, 1995, 132–144:

և սաղրեց դարաբաղյան պատերազմը, արտոնելով Բաքվին «արդարացի» պատերազմ սկսել իրեն չպատկանող հողերի «ազատագրության» համար՝ տարածքային ամբողջականության սկզբունքը դարձնելով ցեղասպանության քողարկման միջոց: Բաքուն ներվեց, ունենալով միջազգային իրավունքի ու համամարդկային բարոյական նորմերի ավելի բացահայտ խախտումների բեռ: Արևմուտքն ընդհանրապես անտեսեց Ադրբեջանի հայության ցեղասպանությունը:

Վեցերորդ դիտարկում

Եղեռնը հասկացություն է, որն ունի ժողովրդին իր հայրենիքում ցեղասպանելու իմաստը

Հատուկ քննության կարիք ունի թուրքական ոճրագործության որակումը: Անկասկած, այն համապատասխանում է «ցեղասպանություն» հասկացության միջազգայնորեն ընդունված սահմանմանը: Բովանդակայնորեն հասկացությունն ընդգրկում է այն ընդհանրությունները, որոնք բնորոշ են ցեղասպանական տարբեր ակտերին և չի արտացոլում նման ակտերի առանձնահատկությունները: Միայն հրեաներին է հաջողվել հասնել այն բանին, որ նացիստական Գերմանիայի կողմից իրենց հանդեպ իրագործած ցեղասպանության առանձնահատկությունն արձանագրող «ողջակիզում» հասկացությունը ստանա միջազգայն տարածում: Ողջակիզումը որպես ցեղասպանության տեսակ ընդգծում է նույն ազգին կամ համայնքին պատկանող մարդկանց բնաջնջման եղանակը՝ գազախցերում վառելը: Հայոց ցեղասպանությունը ևս ունի առանձնահատկություն և դա այն է, որ ողջ մի ժողովուրդ սրի է քաշվել իր հայրենիքում: Թուրքերի կողմից իրագործած ոճրագործության հետևանքով հայը զրկվել է իր հայրենիքից: Հայոց ցեղասպանության այդ առանձնահատկությունը արտացոլված է **Եղեռն** հասկացության մեջ, և ժամանակն է, որպեսզի «ժողովրդի ցեղասպանությունն իր հայրենիքում» բովանդակությունն ունեցող այդ հասկացությունը շրջանառվի և ամրագրվի միջազգային փաստաթղթերում:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Danielyan E. L., – 2014, Armenian Civilizational Heritage versus Turkish-Azerbaijani Falsification of History and Historical Geography, - «Լրաբեր» հաս. գիտ., N 1, 2014.

Safrastyan Ruben, – 2011, Ottoman Empire: the Genesis of the Program of Genocide (1876-1920), Yerevan, 2011.

Shabas W.A., – 2000, Genocide in International Law, Cambridge, 2000.

The Economic Decline of Empires, edited by Carlo M. Cipolla, New York, 2010.

Майкл Смит, – 2011, Память об утратах и азербайджанское общество // Азербайджан и Россия: общества и государства. М., 2001.

Танер Акчам, – Турецкое национальное «Я» и армянский вопрос, М., 1955.

Թալլաթ փաշայի հուշերը (թարգմանություն թուրքերենից), ՀԽՍՀ Արևելագիտության ինստիտուտ, 1963:

АЛЕКСАНДР МАНАСЯН

Член-корреспондент НАН РА

manasyan-a22@mail.ru

ГЕНОЦИД АРМЯН. ПОПЫТКА ПОЛИТИЧЕСКОГО ПЕРЕОСМЫСЛЕНИЯ ВЕК СПУСТЯ

РЕЗЮМЕ

Егерн/Геноцид армян после долгого периода замалчивания сравнительно недавно стал предметом открытого обсуждения. Многие утаенные страницы этого злодеяния ждут раскрытия, а многие факты – адекватной оценки. Обращаем внимание на некоторые из них. Исходным в нашем анализе является тезис о том, что распространенная и задающая рамки общественного восприятия формула «Геноцид армян в Османской империи в 1915–1923 гг.» и её обоснование не соответствует фактическому и политическому содержанию преступления. Вопреки известным фактам, она географически связывает содеянное преступление только с Османской империей, хотя известно, что программа уничтожения армянского народа осуществлялась как в самой Турции, так и за её пределами, с частности в Нахичевани и в Восточном Закавказье. Далее, формула неадекватно отражает временной интервал Егерна/Геноцида. 24 апреля 1915 года – день ареста и убийств сотен представителей армянской элиты в Стамбуле – не есть начало арменоцида, как это представлено в этой формуле. 1915-ый, как год самых жестоких деяний турок, выделен как год Мец Егерна. В империи погромы армян начались задолго до этого. Но суть турецкой политики искажается не столь опрометчивым или преднамеренным указанием 1915 года как начала геноцида, сколь временным ограничением преступления 1923-им годом, годом ухода из истории Османской империи. Попытки стереть из мировой истории злодеяние, присвоение собственности жертв Егерна, уничтожение памятников армянской культуры, принуждение принять ислам спасавшихся или насильственная их ассимиляция, попытка удушения блокадой Республики Армения и Арцаха – все это продолжение политики Османской империи, которой по сей день придерживается Турецкая Республика – государство, основанное участвовавшими в Егерне политическими силами этой страны.

Замалчивание этих фактов в годы запрета на тему имело свое объяснение. В течении десятилетий западные союзники Турции, старались освободить ее от ответственности за преступления, переложив на канувшую в лету Османскую империю. По аналогичным мотивам факт был игнорирован и

большевистской Москвой, видевшей в Турции и Азербайджане трамплин экспорта «красной революции» на Восток. В шестидесятые годы XX столетия, когда табу на обсуждение темы было снято, Москва не воспрепятствовала обращению формулы «Геноцид армян в Османской империи в 1915–1923 гг.», строго следя, чтобы не было ссылок на погромы армян в Нахичевани и Восточном Закавказье, напоминая о которых вошло бы в противоречие с идеологией о «ленинской дружбе народов» СССР. Но сегодня, когда признание Турцией геноцида многие страны выдвигают как условие урегулирования своих отношений с ней, непростительно не замечать, что Егерн армян в Западной Армении, Нахичевани и Восточном Закавказье – звенья одного и того же преступления. Об этом нельзя молчать, тем более, что учиненные Турцией армянские погромы за пределами своих границ могли бы стать главными аргументами в разоблачении фальсификаций Анкары. И вот почему. В турецкой папке «аргументов» отрицания Егерна основным является тезис, что армян депортировали якобы в виду их неблагонадежности к находящейся в состоянии войны империи. Нападения банд на караваны депортированных, как считает Анкара, не было геноцидом. Массовая резня армян в Нахичевани и в Восточном Закавказье разоблачают эту ложь. В 1918 году далеко за пределами самой Турции (!) армян убивали не банды, а регулярные турецкие войска. Они не являлись подданными Османской империи или Турции, чтобы быть неблагонадежными или представлять опасность для них.

Геноцидальная природа политической культуры Турции проявилась и в создании государств с таким же «культурным кодом» – Турецкой Республики Северного Кипра – путем геноцида греков, и Азербайджанской Республики – путем геноцида армянского населения Нахичевани и Восточного Закавказья. Очевидно влияние турецкой политической культуры на ход распада Югославии и в процессах на Ближнем Востоке. Первым государством, созданным по такому проекту, была Азербайджанская Демократическая Республика, а затем и Советский «Азербайджан» где у местных турок оставался неизменным геноцидальный нрав, носителем которого они были по факту принадлежности к этой культуре. Заложница сталинского проекта формирования новой азербайджанской нации Москва не замечала, что турки АзССР, покрываясь вымышленным этнонимом *азербайджанцы*, проводят политику вытеснения армян. В семидесятые годы она привела к почти полной деарменизации Нахичеванской АССР, а с 1988 года приняла форму кровавых расправ и погромов армян по всей республике. В Азербайджане мишенью политики геноцида были не только армяне, но и исповедующие ислам коренные народы. Уклоняясь от насильственной азербайджанизации/туркизации они ушли в своеобразное национальное подполье, в котором сегодня находятся большинство лезгин, талышей, татов. Некогда многоцветная этническая карта республики практически стала одноцветной. Девиз «Одна нация – два государства», озву-

ченный президентом Гейдаром Алиевым, выявил, что по национальности преступник один и тот же, как в Анкаре, так и в Баку.

Еще в мае 1915 года Россия, Франция и Великобритания выступили с совместным заявлением, характеризующим зверства Османской империи против армян как «новые преступления против человечности и цивилизации». Но игнорируя опасность расползания бациллы геноцида, державы-победители решили использовать Турцию против Советской России и в 1923 году в Лозанне отложили в долгий ящик принятый ими же Севрский договор, предусматривающий воссоздание армянской государственности на части исторической Армении. Более того, Запад в последующие десятилетия стал участником проводимой Турцией политики табу на тему совершенного ею преступления и вытеснения её из истории. Не отставала в поощрении преступника и большевистская Москва. Через несколько лет после Мец Егерна, в надежде склонить на свою сторону Турцию «в борьбе против международного империализма», она подарила ей Карс, Ардаган, Сурмалу, священную гору Арарат. Затем последовали новые уступки. По требованию «революционной» Турции она отторгла от Советской Армении Нахичеванскую республику и Нагорный Карабах и включила их в пределы Советского Азербайджана. Казалось после Второй мировой войны союзница Германии Турция должна была получить заслуженное наказание. Но и на этот раз в политических играх «Запад – Советский Союз» армянские земли были оставлены ей. Распад СССР предоставил новую возможность Западу проявить принципиальность в вопросах исключения геноцида из практики международных отношений, осуждения и наказания правительств и государств, виновных в подобных преступлениях. Казалось деарменизированная Нахичеванская АССР, следовавшие друг за другом «сумгаиты» и погромы, сотворенные властями Баку и «Народным фронтом Азербайджана», не оставляли места для сомнения, чтобы содеянное квалифицировать как геноцид. Запад, морально поддерживавший восставшего против геноцидального Азербайджана Арцаха-Карабаха, в 1991 году, когда распад СССР принял необратимый характер, отвернулся от Карабаха. Азербайджанская Республика была признана в границах бывшей АзССР с юридически не принадлежащими ей территориями – Нахичеванской АССР и Нагорным Карабахом. Тем самым Запад позволил Азербайджанской Республике начать «справедливую» войну для захвата юридически не принадлежащих ей территорий. «Оправданием» агрессии стал принцип территориальной целостности, ставший в этом случае прикрытием произвола и геноцида.

Геноцид армян имеет особенность, которую следует понятийно выделить, и это то, что народ был истреблен на своей же исторической родине. Эта особенность геноцида армян отражена в понятии *Егерн*, что и означает истребление народа на своей родине. Настало время ввести данное понятие в широкий оборот и закрепить в международных документах.

ALEKSANDER MANASYAN
Corresponding member of the NAS RA
manasyan-a22@mail.ru

THE GENOCIDE OF THE ARMENIANS. AN EFFORT AT POLITICAL RE-EXAMINATION ONE CENTURY LATER

SUMMARY

The Genocide of the Armenians (Yeghern) has become open for discussion quite recently following a long period of suppression. Many hidden pages of this evil deed are awaiting discovery, with many facts screaming for their proper evaluation. Let us reveal some of those. The original thesis in our analysis is the widely spread formula «The Genocide of the Armenians in the Ottoman Empire in 1915 – 1923» and its deviation from the actual and political content of the crime. In contravention to all evidence, the crime perpetrated is geographically associated with the Ottoman Empire only, Although it is well known that the program of wiping out the Armenian Nation was implemented outside both the Empire and Turkey, in the North-West regions of Iran, in Nakhijevan and in Eastern Transcaucasia. Further on, the formula is not adequately correlated with temporal dimensions of the Genocide (Yeghern). April 24 1915 as the day of detention and an atrocious slaughter of hundreds of the Armenian elite in Istanbul was not the start of the Armenocide, as represented in this formula. 1915 has been pointed out as the year of the most atrocious actions by the Turks, the year of Big Genocide (Mets Yeghern). Massacres of the Armenians had started well before that. However, the fundamental principle of the Turkish politics can hardly be distorted by such a reckless or willful indication of 1915 as the year of launching the Genocide, or 1923, the year of the Ottoman Empire's demise from history, as a temporal limitation of the crime. The attempts to delete the misdeed from the world history, the embezzlement of the victims' property, the demolition of relics of Armenian culture, compulsory islamization or assimilation of survivors, the attempt to stifle Republic of Armenia and Artsakh using a blockade being an extension of the Ottoman policies practiced up to date by Turkish Republic, the state established by the political forces of that country having partaken in the Genocide.

Circumvention of those facts in the years of prohibition on the subject could have been explained. For decades, the Western allies of Turkey kept trying to

exonerate it from the guilt for the misdeed by overlaying it upon the Ottoman Empire sunk into oblivion. Similar evidence had also been ignored by the Bolshevik Moscow that perceived Turkey and Azerbaijan as springboards for exporting the red revolution to the East. In the 60s of the 20th century, when the interdiction upon this subject was removed, Moscow did not prevent circulation of the formula «The Genocide of the Armenians in the Ottoman Empire in 1915 – 1923» while strictly watching lest there be references for massacres of Armenians in Nakhijevan and Eastern Transcaucasias, which could contradict the ideology on the «Leninist friendship among the nations of the USSR». However today many countries adjust relations with Turkey on condition of Genocide recognition thus showing the Genocide in Western Armenia, Nakhijevan and Eastern Transcaucasia to be the link of one and the same crime. One hangman – one victim. This cannot be hushed up, all the more so that the Turkey-initiated Armenian mass murders far beyond the Turkish territory could have become principal arguments in denouncing Ankara's apostasy. Here is why. The main thesis among the Turkish Genocide-denial arguments is as if The Armenians were deported through their disloyalty to the Empire at war. The assaults on the caravans of different deported gangs were not genocide, according to Ankara. The mass murders of Armenians in Nakhijevan and in Eastern Transcaucasia denounce the same blatant lies. In 1918 Armenians were slaughtered far beyond the Turkish borders by regular Turkish troops, rather than by gangs. They were not subjects of Ottoman Empire or Turkey, to be disloyal or threatening in any way. They were killed on their own lands by the only reason of being Armenian.

The behavior of the Turks (rather than of the Turkic people) in International relations has been inherited from their ancestry, from the Oguz and Seljuk nomadic tribes, which ignored the means of capturing the lands of local tribes other than by demolition of their settlements and extermination of population with the unanimous participation of the entire tribe – men and women, young and old. The archaic instincts of the total intolerance to aliens have grown into deliberate genocidal behavior of the Turkish society, both the authorities and the mob simultaneously.

The genuine perpetrator of the Armenian Genocide was the mass of Turks retaining the authoritative controls within the Ottoman Empire and in Turkey, the mass that up to date continues to reproduce itself in all strata – from the political elite and officials of the middle-level administrative bodies down to the lay Turk.

In today's Ankara and Baku it is this mass, rather than the one countering it and ready to repent interlayer of dissidents will determine the state-supported policy denying the deed. The genocidal nature of Turkey's political culture has also been popping up while creating the states having similar cultural codes – Turkish

Republic of Northern Cyprus—through genocide of the Greeks, and the Azerbaijani Republic – through genocide of Nakhijevan and Eastern Transcaucasia.

The disintegration of Yugoslavia and the Near-Eastern processes has been evidently affected by the Turkish political culture.

The first state created after that project was the Azerbaijani Democratic Republic. Reformatting the states titled «Azerbaijan» left unchanged the genocidal character of the local Turks carried by them through the fact of belonging to that culture.

Moscow, playing hostage to formation of the new Azerbaijani nation, failed to notice that the Turks of the Azerbaijani Soviet Socialist Republic, using the cover of a fictional name Azerbaijan, pursued the policy of crowding out the Armenians. In the 70s it had resulted in a nearly complete de-Armenization of Nakhijevan, taking the form of bloody massacres and violence against the Armenians all over the Republic since 1988. Targeted by the policy of genocide were not only the Armenians, but also the indigenous peoples confessing Islam. Dodging the mandatory Azerbaijanization (Turkization), they retreated into a sort of national underground, harboring today the majority of the Lezgins, the Talishes, and the Tats. The erstwhile multicolored ethnic map of the Republic has practically become one-colored. The slogan «One nation – two states put forward by President Haydar Aliiev has shown that the nationality of the felon is the same, both in Ankara and Baku. As far back as in May 1915, Russia, France and Great Britain issued a joint communique describing the atrocities of the Ottoman Empire against the Armenians as new crimes against humanity and civilization» and agreed to sanction the Turkish government for the misdeed. That, however, was not to be. Disregarding the risk of spreading the bacilli of genocide, the winning powers decided to use Turkey against the Soviet Russia, throwing into the closet in Lausanne in 1923 their own adopted Treaty of Sevres, providing the rehabilitation of the Armenian statehood on a part of the historic Armenia. Moreover, the West has in the recent decades become a partaker of the Turkey-designed policy of taboo on the subject to oust the perpetrated evil out of history.

The Bolshevik Moscow either, did not fall behind in encouraging the felon. Within a few years following the Big Genocide, hoping to attract Turkey «in the struggle against the International capitalism», Russia awarded it with Kars, Ardagan, Surmalu, and the Holy Mount Ararat. Then followed new concessions. At the demand of the revolutionary Turkey it annexed Nakhijevan and Nagorno Karabakh from the Soviet Armenia enclosing it within the confines of the Soviet Azerbaijan. It seems that after WWII, Turkey deserved punishment as an ally of Germany. However, at this stage of the political games between the West and the

L'une des meilleures initiatives de Mekertitch Émine dans le domaine des études arméniennes a été la publication en 1853 à Moscou de l'*Épître* de Lazare Parpétsi, historien du V^e siècle. Il y a ajouté une grande préface et des commentaires, avouant qu'il y a dans cette œuvre de Parpétsi des endroits sombres dont il laisse l'éclaircissement aux chercheurs futurs⁴⁸. Émine a raison d'apprécier hautement la valeur cognitive de cette *Épître*.

En 1860-1861, l'arméniste a publié avec succès les œuvres de quelques historiens arméniens: Movses Kalankatvatsi⁴⁹, Mkhitar Aïrivanétsi⁵⁰ et Stépanos⁵¹ Siounétsi.

Mekertitch Émine avait une vénération spéciale pour la personnalité et l'œuvre de Movses Khorénatsi, Père de l'historiographie arménienne. C'est

⁴⁵ *Charakan*, Canons et chants de l'office divin de l'Église Arménienne d'Orient, 1879.

⁴⁶ Ibidem, 319.

⁴⁷ Hovhannes Draskhanakerttsi, *Histoire de l'Arménie*, 1853. La traduction de l'*Histoire de l'Arménie* de cet auteur a paru à Paris en 1841 grâce aux efforts de l'orientaliste de Félix Lajard. La traduction a été faite par Saint-Martin (Voir **Dolukhanyan A.**, 2014, 72–78).

⁴⁸ **Lazare Parpétsi**, 1853.

⁴⁹ **Movses Kalankatvatsi**, 1860.

⁵⁰ **Mkhitar Aïrivanétsi**, 1860.

⁵¹ **Stépanos Siounétsi**, 1860.

précisément pour cela que Movses Khorénatsi a été le premier historien qu'il a traduit en russe⁵².

Grigor Khalatians note qu'après la première publication en russe de l'*Histoire* de Khorénatsi, Émine continuait à travailler sur la traduction, il a enrichi la préface et les commentaires et cette traduction a surpassé les traductions précédentes en latin, français, italien et allemand⁵³.

Dans son appendice à l'*Histoire de l'Arménie* de Movses Khorénatsi, Émine en vient à une conclusion intéressante sur l'alphabet de Mesrop Machtots, qui a eu une importance indiscutable pour le salut de la nation arménienne: «Cette idée géniale du grand Mesrop a été couronnée d'un parfait succès»⁵⁴.

Voici de quelle manière correcte l'arméniste explique la nécessité d'avoir son propre alphabet pour la langue de chaque nation: «À l'aide de l'écriture, la mort épargne la langue même, dans laquelle le peuple vit inviolable avec toutes ses innombrables traits insaisissables»⁵⁵.

Selon Émine, avant Mesrop Mashtots les Arméniens avaient leurs propres lettres: «Malgré la pauvreté de ces renseignements, nous pouvons en conclure qu'en réalité les Arméniens possédaient leur propre alphabet aux temps les plus reculés du paganisme»⁵⁶.

En 1861, M. Émine a publié l'*Histoire universelle* de Vardan le Grand qu'il a précédé d'une préface riche de faits, d'après laquelle l'historien était sage au point que le khan Khoulagou et son épouse acceptaient ses conseils.

En 1864, une nouvelle traduction de M. Émine a paru: l'*Histoire* de Stépanos Assoghik, accompagnée une fois de plus d'une préface riche de faits et de nombreux appendices à la fin.

Il convient de citer parmi les ouvrages historiques de M. Émine un exposé présenté à la Cinquième réunion archéologique: *Les Mèdes en Arménie ancienne* (Nouvelle interprétation donnée par Julien Oppert au mot «Astiag»), qui contient également des innovations orientalistes.

Le sommet des traductions françaises de M. Émine est la traduction complète de l'*Histoire de l'Arménie* de Faust de Byzance, faite pour la *Collection...* de Victor Langlois, célèbre arméniste français⁵⁷.

⁵² Voir **Khorénatsi M.**, 1858.

⁵³ Voir **Khorénatsi M.**, 1893, VI.

⁵⁴ **Émine M.**, 1896, 206–207.

⁵⁵ Ibidem, 206.

⁵⁶ **Émine M.**, 212.

⁵⁷ CM. *Collection des historiens anciens et modernes de l'Arménie*, t. I, 1867.

Dans le titre de l'*Histoire* de Faust de Byzance, Langlois communique des données sur le traducteur: «Faustus de Byzance, Bibliothèque historique en quatre livres, traduite pour la première fois de l'arménien en français, par Jean-Baptiste Emine, directeur du Gymnase impérial de Wladimir sur la Kliazma».

Émine parle avec admiration de l'œuvre de Faust de Byzance qui a fait l'objet de sévères critiques dans la littérature médiévale arménienne, surtout à cause de son style. Quant à Émine, il considère que Faust de Byzance est irréprochable tant pour la pureté que pour la richesse de sa langue dont éloquence ne le cède en rien à celle des traducteurs arméniens du V^e siècle. Finalement, le traducteur avoue qu'il a dû surmonter bien des difficultés afin de trouver parmi les expressions européennes d'équivalentes à la langue de l'auteur. L'une des difficultés résidait en ce que Faust de Byzance n'avait encore jamais été traduit en aucune langue étrangère⁵⁸.

Pour le deuxième tome de la *Collection...* de Victor Langlois, M. Émine a également traduit de la généalogie de la famille de Grégoire l'Illuminateur et la Vie du Catholicos Nersès le Grand d'après un auteur anonyme du V^e siècle (*Généalogie de la famille de Saint Grégoire, Illuminateur de l'Arménie*, et *Vie de Saint Nersès, Patriarche des Arméniens*, par un auteur anonyme du V^e siècle (ouvrage traduit pour la première fois en français, par Jean-Raphaël Émine)⁵⁹.

Enfin, l'un des ouvrages traduits par Émine est la *Vie de Machtots* de l'archimandrite Koriun, également publiée dans le deuxième tome de la *Collection...* de Victor Langlois et rééditée en 2005 à l'occasion du 1600^e anniversaire de la création de l'alphabet.

Il est impossible d'énumérer tous les ouvrages de M. Émine. Avant son décès, il a laissé un testament publié en 1893 dans la revue «*Bazmavep*» des Mekhitaristes⁶⁰. Ce testament révèle la bienfaisance du grand arméniste. La somme léguée par Émine a servi à publier quatre grands tomes de ses œuvres. En outre, les neuf tomes du *Recueil ethnographique d'Émine* ont été également publiés (1901–1913).

M. Émine doit son héritage scientifique à la réalité russe du XIX^e siècle, à l'orientation scientifique de l'Institut Lazareff, grâce auxquelles son grand talent naturel a enrichi le trésor des études arméniennes d'œuvres de grande valeur.

*Traduction française par
Aïda Tcharkhtchian*

⁵⁸ Émine M., *Recherches...*, 274.

⁵⁹ Voir Langlois V., t. II, 1969, 21–44.

⁶⁰ Voir «*Bazmavep*», 1893, t. I, septembre, 441.

BIBLIOGRAPHY

«Bazmavep», 1893, t. I, septembre, p. 441 (en arménien).

«Journal historique et philologique», 1998, 1–2, p. 65–64 (en arménien).

Baziyants A., – 1973, L'Institut Lazareff dans l'histoire de l'orientalisme national, Moscou, 1973 (en russe).

Chahazizian E., – 1900, Mekertitch Hovsépian Émine, Tiflis, 1900 (en arménien).

Charakan, Canons et chants de l'office divin de l'Église Arménienne d'Orient, traduits de l'arménien ancien par M. Émine, Traduction compète, Moscou, 1879 (en russe).

Collection des historiens anciens et modernes de l'Arménie, publiée en français par V. Langlois, t. I, Paris, 1867.

Diloïan V., – 1966, De l'histoire des activités sociales et politiques des Lazarian (deuxième moitié du XVIII^e siècle), Erevan, 1966 (en arménien).

Documents pour l'histoire de l'Institut Lazareff des langues orientales, Moscou, 1814 (en russe).

Dolukhanyan A., – 2006, «Un très vieux dictionnaire latino-arménien» dans Chirak de littérature et d'arts, avril, mai, juin, Beyrouth, 2006 (en arménien).

Dolukhanyan A., – 2014, Saint-Martin, fondateur des études arméniennes en France, Erevan, 2014.

Émine M., – 1846, Grammaire de la langue arménienne pour les élèves de l'Institut Lazareff des langues orientales, Moscou, 1846 (en arménien).

Émine M., – 1850, Les légendes de l'Arménie ancienne, Moscou, 1850 (en arménien).

Émine M., – 1864, Essai sur les religions et les croyances des temps païens, recherche, Moscou, 1864 (en russe).

Émine M., – 1872, Bref essai sur l'histoire de l'Église Arménienne d'Orient, Moscou, 1872.

Émine M., – 1874, La tradition sur la Dormition de la Sainte Vierge et sur son image, Moscou, 1874 (en arménien).

Émine M., – 1881, Movses Khorénatsi et l'épopée arménienne ancienne, Moscou, 1881 (en russe).

Émine M., – 1896, Recherches sur la mythologie, l'archéologie et l'histoire de la littérature arméniennes (accomplies entre 1858–1884), deuxième édition avec appendice des traductions des historiens arméniens, Moscou, 1896 (en russe).

Émine M., – 1898, Œuvres en langue, littérature et histoire arméniennes (1840–1855), Moscou, 1898 (en russe).

Émine J.-B., – 1864, Recherches sur le paganisme arménien, ouvrage traduit du russe par M.A. de Stadler, Paris, 1864.

Essai historique sur l'Institut Lazareff des langues orientales avec brève biographie des fondateurs de l'Institut et appendices à la biographie et à l'essai, Saint-Pétersbourg, 1855 (en russe).

Extraits choisis des œuvres des écrivains arméniens anciens et nouveaux, accompagnés d'un dictionnaire, pour les élèves de l'Institut Lazareff des langues orientales, Moscou, 1849 (en arménien).

Hovhannes Draskhanakerttsi, Histoire de l'Arménie, Moscou, 1853 (en arménien).

Ignatian A., – 1969, L’Institut Lazareff, Erevan, 1969 (en arménien).

La poésie de l’Arménie dès l’époque la plus reculée à nos jours, sous la rédaction, avec Introduction et notes de Valéry Brussov, Moscou, 1916 (en russe).

Langlois V., – 1969, Collection des historiens anciens et modernes de l’Arménie, t. II, Paris, 1969.

Lazare Parpétsi, Épître à Vahan Mamikonian, publiée par Mekertitch Émine, Inspecteur de l’Institut Lazareff des langues orientales, Moscou, 1853 (en arménien ancien).

Le soixante-quinzième anniversaire de l’Institut Lazareff des langues orientales, Essai historique avec appendices de G.I. Kananov, Moscou, 1891 (en russe).

Mkhitar Aïrivanétsi, – 1860, Histoire de l’Arménie, publiée par Mekertitch Émine, Moscou, 1860 (en arménien).

Movses Khorénatsi, – 1858, Histoire de l’Arménie, V^e siècle, avec explications et appendices Moscou, 1858 (en russe)

Movses Khorénatsi, – 1893, Histoire de l’Arménie, nouvelle traduction et M.H. Émine, avec commentaires et appendices, Moscou, 1893 (en russe).

Movses Kalankatvatsi, – 1860, Histoire de l’Albanie du Caucase, publiée par Mekertitch Émine, Moscou, 1860 (en arménien).

Père A. Gazikian, Nouvelle bibliologie arménienne et encyclopédie de la vie arménienne, t. I, Venise, 1909–1912 (en arménien).

Saint-Martin J.-A., Mémoires historiques et géographiques sur l’Arménie, t. I, Paris, 1818, t. II, Paris, 1819.

Stépanos Siounétsi, – 1860, Histoire de la Maison Sissakane, publiée par Mekertitch Émine, Moscou, 1860 (en arménien).

Vessélovski Y.A., – 1972, Essais sur la littérature, l’histoire et la culture arméniennes. Introduction, compilation, rédaction et notes d’Alla Davtian, Erevan, 1972.

Zarbanalian G., – 1895, Recherches dans le domaine de la langue et de la littérature arménienne en Occident (XIV^e–XIX^e siècles), Venise, 1895 (en arménien).

АЭЛИТА ДОЛУХАНЫН
Член-корреспондент НАН РА
АГПУ им. Х. Абовяна

ЛАЗАРЕВСКИЙ ИНСТИТУТ ВОСТОЧНЫХ ЯЗЫКОВ И НИКИТА ЭМИН

РЕЗЮМЕ

В 1815 г. по инициативе и на средства дворянской семьи Лазарьянов в Москве открылся Институт восточных языков, который со второй половины XIX века и до первых лет XX века был не только одним из центров армянской интеллектуальной жизни, но и стал знаменитым в России и в арменоведческих центрах Европы.

В России семья Лазарьянов снискала себе доброе имя. Лазарьяны очень высоко ценили свое происхождение и постоянно думали о том, чтобы заниматься благотворительностью во благо армянского народа и России.

По случаю 75-летнего юбилея Лазаревского Института его директор Георгий Кананов выступил с пространной речью, в которой от начала до конца выражал свою благодарность русскому государству за огромный вклад, привнесенный в основание и существование Лазаревского Института.

В книге, посвященной 75-летию юбилею Лазаревского Института, опубликованы поздравительные адреса, полученные от разных учебных и научных заведений Российской Империи, от армянских периодических изданий, религиозных центров и бывших выпускников.

Дирекция Лазаревского Института в течение разных лет постоянно заботилась о том, чтобы библиотека учебного заведения обогащалась армянскими старопечатными книгами и рукописями. По этому вопросу она обращалась к состоятельным армянам Тифлиса и к Святому Эчмиадзинскому Престолу.

Император Николай Первый посетил Лазаревский Институт в сопровождении графа Бенкендорфа. Этот визит дает ясное представление о значении Лазаревского Института также и в русской духовной и культурной жизни.

Арменоведческая деятельность Никиты Эмина в основном развернулась в период 1840–1880-ых годов, когда в России и в Европе появились выдающиеся арменоведы, успешно продолжившие светлое дело, начатое основоположником французского арменоведения Жан-Антуаном Сен-Мартеном в его

двухтомном капитальном труде под названием «Исторические и географические заметки об Армении».

Н. Эмин писал свои труды на древнеармянском языке (грабаре), на русском и французском. Библиографию трудов великого арменоведа первым составил Г. Зарбаналян, данные которого использовал отец Арсен Газилян в своей библиологии.

Сохранились воспоминания армянского классика Рафаэла Патканяна о Никите Эмине, учеником которого он был в годы учебы в Лазаревском Институте.

О теплом отношении к русской литературе Н. Эмина есть интересное замечание у Ю. Веселовского.

Н. Эмин был заинтересован в совершенствовании современного армянского языка – ашхарабар, что именно благодаря ему в язык вошли и сохранились до сих пор такие слова, как **դասարան, թեյ, սուրճ, համալսարան, դասախոսություն** и многие другие.

В 1849 г. Эмин опубликовал для учеников Института в типографии того же заведения хрестоматию литературы, начинающуюся с назиданий армянского философа V века Езника Кохбацци и заканчивающуюся 23-ой частью «Илиады» Гомера.

Ещё одна из заслуг, Никиты Эмина в области арменоведения и армянской литературы в 1852 г. в Москве армянских стихов гениального поэта XVIII века Саят-Новы.

Годы спустя неутомимый ученый расширил круг своих научных интересов, включив в него древнеармянскую мифологию, древние сказания, труды средневековых армянских историков, духовную литературу, историю армянской церкви, армяно-русские средневековые литературные связи, издание текстов древнеармянских авторов, комментарии к ним, перевод на русский и французский языки.

Венцом французских переводов Н. Эмина является полный перевод «Истории Армении» Павстоса Бюзанда, выполненный для *Collection...* («Коллекции...») знаменитого французского арменоведа Виктора Ланглуа.

Перед смертью Н. Эмин оставил завещание, опубликованное в 1893 г. в журнале Мхитаристов «Базмавеп». На сумму, завещанную Эмином, были изданы четыре больших тома его произведений. Кроме того, на эти же средства вышли девять томов «Этнографического сборника Эмина» (1901–1913 гг.).

Своим научным наследием Н. Эмин обязан русской действительности XIX века, научной ориентации Лазаревского Института, благодаря которым его природный большой талант обогатил сокровишницу арменоведения ценными трудами.

ԱՆԷԼԻՑԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ*

ԼԱՉԱՐՅԱՆ ՃԵՄԱՐԱՆԸ ԵՎ ՄԿՐՏԻՉ ԷՄԻՆԸ

ԱՄՓՈՓՈՒՄ

1815 թվականին Լազարյան ազնվական ընտանիքի նախաձեռնությամբ և միջոցներով Մոսկվայում բացվում է Լազարյան ճեմարանը, որը XIX դարի երկրորդ կեսից մինչև XX դարի առաջին տարիները ոչ միայն հայ մտավոր կյանքի կենտրոններից էր, այլև հռչակավոր էր Ռուսաստանում ու Եվրոպայի հայագիտական կենտրոններում:

Ռուսաստանում Լազարյան ընտանիքն ունեցել է բարի համբավ. Լազարյանները շարունակ մտածում էին բարեգործություններ անել հայ ազգի և Ռուսաստանի համար:

Լազարյան ճեմարանի հիմնադրման 75-ամյա հոբելյանի առթիվ հաստատության տնօրենը հանդես է եկել ընդարձակ ճառով և իր երախտագիտությունն է հայտնել ռուսական պետությանը՝ Լազարյան ճեմարանի հիմնադրման ու նրա գոյատևմանը բերած վիթխարի նպաստի համար:

Լազարյան ճեմարանի հեղինակությունը տարեցտարի բարձրանում է. դրա հիմքում դրված էր ուսումնական հաստատության բարեկարգ վիճակը, նրա հովանավորների եռանդն ու նվիրումը: Ուսումնական հաստատության համբավը տարածվում է ոչ միայն հսկայածավալ ռուսական կայսրությունում, այլև աշխարհի բոլոր այն երկրներում, որոնցում ապրում էին հայեր՝ Թուրքիա, Պարսկաստան, Հնդկաստան և այլն:

Լազարյան ճեմարանի 75-ամյա հոբելյանին նվիրված հատորում տպագրված են ռուսական կայսրության տարբեր ուսումնական ու գիտական հաստատություններից, հայ պարբերականներից, հոգևոր կենտրոններից, նախկին շրջանավարտներից ստացված շնորհավորական ուղերձները:

Լազարյան ճեմարանի ղեկավարությունը շարունակական մտահոգություն ուներ տարբեր տարիների ընթացքում ուսումնական հաստատության գրադարանը հարստացնել հայկական հնատիպ գրքերով ու ձեռագրերով: Այդ խնդրով դիմումներ էին հղում Թիֆլիսի պատվավոր անձանց և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններին:

Ռուսական ցար Նիկոլայ Առաջինն այցելել է Լազարյան ճեմարան: Այս այցը պարզորոշ ներկայացնում է Լազարյան ճեմարանի կատարած դերը նաև Ռուսաստանի հոգևոր և մշակութային կյանքում:

Մկրտիչ Էմինի հայագիտական գործունեությունը հիմնականում ծավալվել է 1840–1880-ականների ժամանակահատվածում, երբ Ռուսաստանում ու Եվրոպայում հանդես էին եկել նվիրյալ հայագետներ, որոնք մեծ հաջողությամբ շարունակում էին այն լուսավոր գործը, որը սկզբնավորեց Ժան Անտուան Սեն-Մարտենը՝ ֆրանսիական հայագիտության հիմնադիրը՝ իր երկու հատորանոց կապիտալ աշխատությամբ՝ «Mémoires historiques et géographiques sur l'Arménie» խորագրով:

Մ. Էմինն իր աշխատությունները շարադրում էր գրաբարով, ռուսերենով ու ֆրանսերենով: Մեծ հայագետի մատենագիտությունն առաջինը կազմել է Գ. Չարբհանայանը, որի տվյալներն օգտագործել է հայր Արսեն Ղազիկյանն իր մատենագիտության մեջ:

Պաիսանված են հայ դասական գրող Ռափայել Պատկանյանի հուշերը Մկրտիչ Էմինի մասին, որին նա աշակերտել է Լազարյան ճեմարանում սովորելիս:

Մ. Էմինի դեպի ռուս գրականությունն ունեցած ջերմ վերաբերմունքի մասին ուշագրավ դիտարկում ունի Յուրի Վեսելովսկին:

Մ. Էմինը շահագրգիռ էր հայերենի աշխարհաբարի զարգացման խնդրում: Նրա շնորհիվ աշխարհաբարի մեջ մտան և մինչև հիմա էլ գործածվում են դասարան, թեյ, սուրճ, համալսարան, դասախոսություն և այլ բառեր:

1849 թ. Էմինը ճեմարանի աշակերտների համար նույն հաստատության տպարանում հրատարակում է գրականության քրեստոմատիա, որը սկսվում է V դարի հայ փիլիսոփա Եզնիկ Կողբացու խրատներով և ավարտվում Հոմերոսի «Իլիականի» 23-րդ հատվածով, որը նկարագրում է Աքիլլեսի զինակիցների ողբը Պատրոկլոսի՝ Աքիլլեսի սիրելի ընկերոջ դիակի վրա, որն ընկել էր Հեկտորի ձեռքից: Աքիլլեսը վրեժխնդիր է լինում, սպանում է Հեկտորին ու մեծ պատիվներով թաղում Պատրոկլոսին:

Հայագիտությանը, հայ գրականությանը Մկրտիչ Էմինի մատուցած ծառայություններից մեկն էլ այն մասնագիտական ու գործնական օժանդակությունն էր, որ ցուցաբերել է XVIII դարի հայ հանճարեղ բանաստեղծ Սայաթ-Նովայի հայերեն խաղերը 1852 թ. Մոսկվայում հրատարակելու գործում:

Տարիների հետ անխոնջ գիտնականը լայնացնում է իր գիտական հետազոտությունների շրջագիծը՝ դրա մեջ մտցնելով հայոց հին դիցաբանությունը, հին վեպը, միջնադարի հայ պատմիչների երկերը, հոգևոր գրականությունը, հայ եկեղեցու պատմությունը, հայ-ռուսական միջնադարյան գրական կապերը,

հայ հին հեղինակների բնագրերի հրատարակումը, ծանոթագրումը, դրանց մի մասի ռուսերեն ու ֆրանսերեն թարգմանությունը:

Մ. Էմինի ֆրանսերեն թարգմանությունների պսակը Փալատոս Բուզանդի «Հայոց պատմության» ամբողջական թարգմանությունն է, որը կատարել է ֆրանսիացի նշանավոր հայագետ Վիկտոր Լանգլուայի «Collection...»-ի համար:

Մ. Էմինը մահվանից առաջ թողել է մի կտակ, որը 1893 թ. տպագրվեց Մխիթարյանների «Բազմավեպում»: Հայագետի կտակի դրամագլխով նրա աշխատությունները լույս տեսան 4 մեծադիր հատորներով: Բացի այդ, նույն միջոցներով լույս տեսան նաև «Էմինեան Ազգագրական ժողովածուի» ինը հատորները (1901–1913 թթ.):

ԱՇԽԱՌԻՋ ԳՈՂՈՍՅԱՆ

*Պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ Մշակույթի նախարարության Մշակութային արժեքների
փորձագիտական կենտրոն
ashkhunjpoghosyan@gmail.com*

ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՐԳԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԱՐԵԱԼՆԵՐԻ ՈՒ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՐԱՎԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԳԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Պատմական Հայաստանի գորգագործական կենտրոնների թվում իր առանձնահատկություններով, տիպերի բազմազանությամբ մեծ կարևորություն ունի արցախյան գորգագործական մշակույթը: Ըստ էության, պատահական չէ, որ ուսումնասիրողները հայկական գորգերի շարքում առաջին հերթին հիշատակում են արցախյան գորգերը: Այլ հարց է, թե մասնագետների մի մեծ խմբի կողմից ի՞նչ է հասկացվում «արցախյան գորգ» հասկացության տակ, ի՞նչ էթնիկական հանրությունների են վերագրվում դրանք և ինչպե՞ս է ներկայացվում դրանց ծագումնաբանությունը: Բավական է նշել, որ այս տարածաշրջանի գորգերը ուսումնասիրողների մի ստվար զանգված համարում է XI–XIV ու նաև հետագա դարերի ընթացքում այդտեղ բնակություն հաստատած եկվոր վաչկատուն ցեղերի կողմից բերված մշակույթ: Ընդ որում՝ շրջանառվում է տեսակետ, որ այն Արցախ և ընդհանրապես Կովկաս է հասել փոքրասիական գորգագործական կենտրոնների միջոցով: Իրականում ինչպիսի՞ն է արցախյան գորգագործական մշակույթի ծագումնաբանական ու հետագա զարգացումների նկարագիրը: Այս հարցադրումների ու նաև արցախյան գորգերի տիպերի ու դրանց ավանդույթների տարածման բացահայտման հարցում անտարակույս է պատմահամեմատական հետազոտությունների իրականացման անհրաժեշտությունը: Արցախյան գորգագործական մշակույթի ավանդույթների ուսումնասիրման համար գոյություն ունեն գրավոր ու նյութական բավականաչափ սկզբնաղբյուրներ: Գորգագործական մշակույթը, ինչպես որ վկայում են սկզբնաղբյուրները, տարածաշրջանում, և ընդհանրապես Առաջավոր Ասիայում, բուռն զարգացում էր սկսում ապրել վաղ միջնադարից: Իսլամի ծավալմանը զուգընթաց, նկատելիորեն ընդլայնվեց գորգի գործածման շրջանակն ու արտադրության ծավալները: Վաղ ու զարգացած միջնադարում, հատկապես արաբական խալիֆայության դարաշրջանում հայկական գորգը վերնախավի համար պահանջարկ վայելող առևտրի առարկա էր, իսկ գորգագործությունն էլ մնում էր որպես կարևոր

գրադմունք: Այս տեսակետից բնորոշ օրինակ է Հայոց Արևելից կողմի թագավոր Վաչագանի և գորգագործուհի Անահիտի հետ կապված ավանդությունը, որում հենց շեշտված է այդ գրադմունքի ունեցած մեծ հեղինակությունն ու դրա հանդեպ եղած հարգանքը:¹ Հայոց Արևելից կողմի, այդ թվում արցախյան գորգագործական մշակույթի ավանդույթների մասին մեզ հայտնի վաղագույն տեղեկությունը վերաբերում է VII դ. վերջերին: 680 թվականին² դավադրաբար սպանված Ադվանից Ջեվանշիր իշխանին հետապնդողները հասնում են Արցախ գավառում գտնվող ոճրագործի հոր գյուղը, քանդում և ավերում են նրա տունը և ի թիվս այլ հարստությունների, վերցնում են նաև «մետաքսահյուս ու կերպաս դիպակներ, գունագեղ կարպետներ»:³ Այս դեպքում բավականին որոշակի հիշատակվում է գործվածքի օգտագործման վայրն ու գործվածքի տեսակը և բացահայտված է նաև կոնկրետ ժամանակը: Հատկանշական ենք համարում այն հանգամանքը, որ այդտեղ խոսքը գնում է ոչ թե առևտրական ուղիներին մոտ գտնվող քաղաքի կամ որևէ այլ խոշոր բնակավայրի, այլ այդ ամենից կտրված ինչ որ մի գյուղի մեծատոհմիկի բնակարանի կահավորանքի մասին է: Ըստ էության, սա մատնանշում է այդտեղ գոյություն ունեցած գործատան կամ մեծատոհմիկի կարիքների բավարարման համար աշխատած տնայնագործ գորգագործների առկայության փաստը: Արցախյան գորգագործական մշակույթի ավանդույթների շարունակման ու զարգացման վերաբերյալ կարևոր են Պարտավի «Կիրակի» կոչված շուկայի մասին եղած արաբ մի շարք մատենագիրների տեղեկությունները:⁴ Աբու-լ Կասիմ Իբն Հաուքալն, օրինակ, պատմում է, որ այդտեղ վաճառահանվում էին նաև մերձակա գյուղերից բերված գորգեր ու այլ գործվածքեղեն: Այդ ու մյուս տեղեկությունները լրացնում են Ադվանից պատմության հեղինակներն ու հաստատում մեր ենթադրությունը առ այն, որ մասնավորապես Արցախում գորգագործական մշակույթն արմատներ ունենալով հանդերձ, ուներ նաև բավականին լայն ճանաչում: Դրանք թույլ են տալիս եզրակացնել նաև, որ գործունեության այդ ոլորտը ուներ նաև ապրանքային ուղղվածություն:

Անշուշտ, սրանք կարևոր նկատառումներ են և հստակորեն ցույց են տալիս, որ Հայաստանում, մասնավորապես Արցախում գորգագործական մշակույթը գոյություն է ունեցել դեռևս արաբական ու սելջուկյան ներթափանցումներ-

¹ Տե՛ս Դանալանյան Ա., 1969, 98:

² Տե՛ս Հակոբյան Ա., 2004, 267:

³ Մովսես Կաղանկատվացի, 1969, 175: Ի դեպ, Լ. Զերիմովը հիշատակելով Կաղանկատվացու այս տեղեկությունը, չի նշել Արցախ տեղանունը և այն ներկայացրել է «Ադրբեջանի հյուսիսային մասերում պատրաստում էին մետաքսե գործվածք և գույնզգույն գորգեր» տեսքով, տե՛ս Керимов Л., 1983, 12–13:

⁴ Абду-л Касим ибн- Хаукаль, 1908, 14–15:

րին նախորդած ժամանակաշրջանում և հիմք չկա այն կապել արևելյան որևէ ներթափանցման հետ:

Հայատառ արձանագրությամբ առայժմ ամենահին՝ 1202 թվականին գործված գորգը (նկ.1)⁵ պահվում էր Վիեննայի արդյունաբերության պատմության թանգարանում և, որպես հայոց գորգարվեստի մի ուշագրավ նմուշ, դեռևս 1895 թ. հրատարակել էր արևելագետ Ալիզ Ռիզլը:⁶

«Եռախորան»-ի կարևորությունը կայանում է նրանում, որ այն հնագույն թվագրված ու հիշատակարան ունեցող գորգն է: «Եռախորանի» Արցախում ստեղծված լինելն ըստ իս, բացատրելի է նրա գեղագարդման մանրամասերի հանգամանքով, որոշ ուսումնասիրողներ էլ, որպես դրա հիմնավորում ընդունում են հիշատակարանում եղած, բայց ուսումնասիրողների կողմից տարբեր կերպ ընթերցվող «Բանանց» բառը, որը Գարդմանի նշանավոր բնակավայրերից մեկի անունն է:⁷ Հայտնի է այս գորգի հայատառ թվակիր ընդարձակ հիշատակարանը (Արկանելիս Կիրակոսի Բանանցուց ի յիշատակ Հռոփսիմեի տն Ռ-ՇԱ թվին գաա գործեցի):

Արցախի գորգագործական կենտրոնների հետ անմիջական առնչություն ունի վիշապագորգերի խմբին դասվող, 1680 թվականին գործված հանրահայտ «Գուհար» գորգը (նկ. 2), որը նույնպես ունի հայատառ, թվակիր ընդարձակ մակագրություն (Ես Գուհարս մեղօք լի հոգովս տկար ես նօրհաս ձեռք իմով գործեցի, ով կարդայ մեկ բերան օղորմի ասի թվին Ռ-ՃԻԹ): Այն 1880-ական թթ. ձեռք էր բերել Լոնդոնի Վիկտորիա և Ալբերտ թանգարանը: Հետագայում՝ 1970-ական թթ. այն հայտնվել է տեխասյան մի մասնավոր հավաքածուի կազմում: Դրա գեղագարդման համակարգում վիշապի ոճավորումները պատկերված են զույգերով՝ ուղղաձիգ, ստորին մասում միմյանց կցված, իսկ վերին մասերը իրարից հեռացած: Դա մի բարդ հորինվածք է, ընդհանուր առմամբ ունի քնարաձև տեսք, որին մենք անվանակոչում ենք «Գուհարյան հորինվածք» անվանումով:

Այս շարքում հաջորդ կարևոր գորգը Աղվանից Ներսես կաթողիկոսին վերագրվող 1731 թ. գործված գորգն է, որն ըստ Հարություն Բուրսյանի, պահվում է Երուսաղեմի սուրբ Հակոբ եկեղեցու թանգարանում (նկ.3): Այն նույնպես ունի հայատառ թվակիր գրություն, որի մի հատվածը խոշոր պատռվածքի պատճառով բացակայում է: Արձանագրությունում ասված է՝ «Յիշեցեք մաքրափայլ յաղոթս ձեր Ներսէս մեղապարտ կաթողիկոս Աղուանից է պատճառ սմին ... լոյս ընկալ Չարեքու սբ անապատին Ռ-ՃԶ թվի»:⁸

⁵ Թեմուրճյան Վ., 1955, 48:

⁶ Թեմուրճյան Վ., 1955, 9:

⁷ Թեմուրճյան Վ., 1955, 35: Դավթյան Ս., 1981, 112:

⁸ Դավթյան Ս., 1981, 128–129:

Չարեքա մենաստանում գործված ու մեր կողմից «Գանձասար» անվանակոչված այս գորգի գեղագարդման համակարգում առանցքայինը երկայնաձիգ հինգ հորինվածքներն են, որոնցով ձևավորված են կենաց ծառի նախշով ու այլ բուսանախշերով հարդարված խորանանձն բացվածքներ: Դաշտի ծայրերում, մեկ լայնակի շարքով պատկերված են կենաց ծառի տեսքով խոշոր բուսանախշեր, որոնց գագաթներն ավարտվում են «կակաչ» նախշով: Նախնական հետազոտությունները հնարավորություն են տալիս շեշտել, որ արտերկրի ուսումնասիրողների կողմից «օտոտմանյան» տարբերակված ասեղնագործությունների գեղագարդման համակարգում կարևոր տեղ գրաված այս բուսածաղկային հորինվածքը նաև արցախյան գեղարվեստական գործվածքի ավանդական տարրերից էր: Մասնավորապես, դրանով է գեղագարդված 1795 թ. Ջրաբերդի Մելիք Բեգլարի կնոջ՝ Մարիամի, ասեղնագործած եպիսկոպոսական թագը, որն ունի ընդարձակ նվիրատվական թվակիր հիշատակարան՝ «Յիշատակ է թագս ի Մելիք Բեգլարի կողակից Մարիամից ի դուռն Հռեկէ վանքի: ԻՌ ՌՄԽԴ»:⁹ Դրանից 64 տարի առաջ ստեղծված Ներսես կաթողիկոսին նվիրված «Գանձասար» գորգի գեղագարդման համակարգում կարևորված «կակաչ» նախշն, անշուշտ, մատնանշում է արցախյան գեղագարդման արվեստում դրա հնամենի ավանդույթներ ունենալու փաստը:

XIX–XX դդ. արցախյան գորգագործական կենտրոնների մասին եղած տեղեկություններն ավելի շատ ու բազմատեսակ են: Այս դեպքում այլ աղբյուրների շարքում առանցքային նշանակություն ունեն դաշտային ազգագրական դիտարկումները: Մեր կողմից նման աշխատանքներ տարվել են 1979–89 թթ., որոնց ընթացքում ձեռք բերված մի քանի տասնյակ գորգեր համալրել են Հայաստանի ազգագրության թանգարանի գործվածքի հավաքածուն: Խնդրո առարկայի առումով չափազանց արժեքավոր են XIX դարի երկրորդ կեսին ազգագրագետ Երվանդ Լալայանի հավաքած ազգագրական նյութերը, որոնցից կարելի է ենթադրել, որ այդ ժամանակաշրջանում գորգագործությունը Վարանդայի ու Գանձակի գավառներում արդեն կրում էր համատարած բնույթ: Մասնավորապես Շուշու գավառի վերաբերյալ, որի կազմի մեջ էր նաև Վարանդան, նա նշում է, որ «բավական զարգացած էր գորգագործությունը: Թեև առանձին գործարաններ չկային, բայց շատ տներում գործում են գորգ, կարպետ, ձիու չուլ և այլն»:¹⁰

Դա ուներ համընդհանուր բնույթ, բայց կարող ենք նաև առանձնացնել արցախյան գորգագործական մշակույթի այդօրինակ մի քանի առավել հանրահայտ կենտրոններ ևս՝ Թաղլար, Հաղբուժ, Տումի, Տոդ, Ճարտար, Աշան, Բերդաշեն, Թաղավարդ, Ավետարանոց, Շոշ, Բաղարա (Պտրեցիք), Բալուջա, Դաշքուլաղ, Կուսապատ, Վանք, Հաթերք, Թալիշ, Բարսում, Կարաչինար, Վե-

⁹ Պողոսյան Ա, 2011, 53–60:

¹⁰ Լալայան Եր., 1988, 84:

րիշեն, Էրքեջ, Գետաշեն, Բանանց, Միրզիկ, Ոսկանապատ, Փիփ, Ջագիր, Բադա գյուղերը և այլն:¹¹

XIX դ. վերջերից գորգագործության ու առհասարակ, ոստայնակության ուսուցումը իրականացվում էր նաև դպրոցներում: Ասեղնագործության, գորգագործության ու նմանօրինակ այլ մասնագիտությունների հետ միասին աշակերտներին սովորեցնում էին նաև հումքի մշակման գործը: Հայտնի է, օրինակ, որ 1880-ական թթ. Կարաչինար գյուղի դպրոցում աշակերտներին սովորեցնում էին նաև շերամապահության գործը, որ ինքնին վկայում է նաև տարածաշրջանում մետաքսագործության տարածվածության ու մետաքսաթելի լայն օգտագործման մասին:¹²

1899 թվականին ստեղծված Կովկասյան տնայնագործական կոմիտեի տվյալների համաձայն, Անդրկովկասում գորգագործությամբ զբաղվելու գծով առաջին տեղը զբաղեցնում էր Գանձակի գավառը, որի կազմում էին նախկին Խաչենի, Ջրաբերդի ու Գյուլիստանի մելիքությունները: Ըստ այդ տվյալների, դրանով զբաղված էր գավառի աշխատունակ բնակչության 48.2 %:¹³ Նկատի ունենալով այդ ամենը, գավառի գորգագործական մշակույթի հանրահայտ կենտրոններից մեկում՝ Գետաշենում, ստեղծվել էր գորգագործական արհեստանոց, որտեղ փորձառու վարպետների մոտ սովորում էին տասնյակ աշակերտներ: Այդտեղ, ինչպես նաև գորգագործական մյուս կենտրոններում՝ մասնավորապես Ղուբա-Դերբենտ տարածաշրջանում, այդ ժամանակներից սկսած, գորգեր գործում էին Տնայնագործական կոմիտեի նկարիչների ստեղծած տեխնիկական քարտերի՝ գորգանկարներին համապատասխան:¹⁴

Ի տարբերություն Ղուբայի ու Շամախու տարածաշրջաններում Կովկասյան տնայնագործական կոմիտեի ջանքերով ծավալված գորգերի զանգվածային արտադրության, Արցախում շարունակվում էր դրա տնայնագործական բնույթը: Այդ առումով, թերևս, առանձնակի էր Շուշին, որտեղ զարգացում էին ապրում հատկապես շուկայական ուղղվածության տնտեսաձևերն ու այդ թվում նաև գորգագործությունը:

¹¹ Պողոսյան Ա., ԴԱՆ, տետր 2, էջ 41–48, Каграманян К., 2004, 262–263, 284, 304, Թաթևկյան Վ., 2004:

¹² Каграманян К., 2004, 238: Արցախում 19-րդ դարի վերջերին ու 20-րդ դարի առաջին տասնամյակներում գործում էին մետաքսաթելի ստացման տասնյակ ձեռնարկություններ, որոնց թվում նշանակալից էր հատկապես Քարին տակ գյուղինը, որն աշխատում էր նաև Խորհրդային ժամանակաշրջանում: Այդ ավանդույթների արդյունքն էր նաև Ստեփանակերտում մետաքսագործական խոշոր ֆաբրիկայի հիմնումը, որը գործում է նաև մեր ժամանակներում:

¹³ Пиралов А.С., 1913, 78:

¹⁴ Пиралов А.С., 1913, 116–118:

Ըստ Յակով Չեղգենիձեի արտադրանքի տեսականին կրում էր միանգամայն առանձնակի բնույթ ու կապված չէր շրջակա գորգագործական կենտրոններին բնորոշ ավանդույթներին:¹⁵ Այս առումով, կարծում ենք, որ Չեղգենիձեի դիտարկումները թերի են ու չեն ներկայացնում քաղաքի գորգագործական մշակույթի ընդհանուր պատկերը: Այս քաղաքի բնակչության մեծ մասը կազմող հայերը (ըստ 1886 թ. մարդահամարի տվյալների՝ 30945 բնակչից 18690-ը հայ էր, 11940-ը՝ թաթար, 315-ը՝ ռուս¹⁶) այդտեղ էին տեղափոխվել հիմնականում գորգագործական ավանդույթներով հայտնի Խաչենի ու Վարանդայի գյուղերից ու բնականաբար, այդ ավանդույթները չէին կարող անհետանալ Շուշիում: Այլ հարց է, որ վաճառքի համար թաթարների՝ ինչպես դրանց անվանել է Չեղգենիձեն, գործած գորգերը Կովկասյան տնայնագործական կոմիտեի նկարիչների կազմած վերամշակումներն էին, ու դրանք ըստ էության, նորույթներ էին տարածաշրջանի գորգագործների համար:

Չեղգենիձեի տեղեկություններով հայերի գործած գորգերն ու կարպետները շատ ավելի որակով էին «թաթարների» գործածներից, քանի որ վերջիններս գործում էին միայն վաճառքի համար և ուշադրություն չէին դարձնում տեխնոլոգիական պահանջներին:¹⁷

Ըստ այդմ նա նշում է, որ Վարանդայի գյուղերից Շուշի և այլ քաղաքներ էին արտահանվում գորգեր ու կարպետներ, որոնք տնայնագործներից գնում էին գորգ հավաքողները:¹⁸ Բավականին տարածում ուներ նաև վաճառականների կողմից տնայնագործներին կոնկրետ պատվերների ու համապատասխան հումքի տրամադրումը: Այս երևույթը շարունակվում էր նաև նաև XX դարի կեսերին՝ 1940–50-ական թվականներին:

Այդ ասպարեզում հանրահայտ էին Ճարտար, Մեծ Թաղեր, Տող, Թաղավարդ, Սարուշեն, Սոս գյուղերը: Մասնավորապես Ճարտարում համարյա ամեն մի տան մեջ դրված էր «ոստան» ու հիմնականում գործում էին ուղեգորգեր (յան) և կարպետներ: Այս առումով շատ ուշագրավ է Չարվարդ Պողոսյանի պատմածը, ըստ որի Ճարտարի գորգագործուհիները դեռևս 1930-ական թվականներին պատվերներ էին ստանում մերձակայքում դեզերող քոչվոր մահմեդականներից, վճարի փոխարեն դրանցից ստանալով տվյալ գորգին կամ կարպետին անհրաժեշտ բրդի կրկնակի քանակություն:

Արցախյան գորգերի տիպերը: Արցախի գորգագործական մշակույթի բազմադարյա ավանդույթներն ինքնին հիմք են հանդիսացել գորգերի մի քանի տասնյակ տիպերի ու դրանց հարյուրավոր տարբերակների ձևավորման համար: Շուշիի առումով հարկ ենք համարում առանձնացնել նաև ուսումնասի-

¹⁵ Зедгенидзе Я., 1891, 2:

¹⁶ Зедгенидзе Я., 1891, 1:

¹⁷ Зедгенидзе Я., 1891, 30–31, А.С. Пиралов, 1913, 78:

¹⁸ Լալայան Եր., 1988, 87:

րողների շրջանում լայն ճանաչում ստացած «Մինա խանում» բուսածաղկային հորինվածքով բնորոշվող գորգերի տիպը (նկ. 5):¹⁹ Նկատի ունենալով մասնագիտական գրականության մեջ այս տերմինի հայտնի և ընդունված լինելու հանգամանքը, հարկ ենք համարում շեշտել որ Մինա խանումը Խաչենի Հասան Ջալալ իշխանի դուստրն էր, որն ամուսնացած էր Սյունյաց իշխան Տարսայիճ Օրբելյանի հետ:²⁰ Մինա խանումի մասին հայտնի է, որ նա բարեգործ էր, կատարել էր բազմաթիվ նվիրատվություններ ու իր ծախսով կառուցել շենքեր: Ըստ էության, Մինա խանումը գործել էր իր իսկ մտահղացումներով ստեղծված գորգեր, որոնց գեղագարդման հիմնական տարրերից մեկն էլ հանդիսացել էր բազմաթերթ վարդակն ու որն էլ հետագայում ստացել է «Մինա խանում» անունը: Այդ հորինվածքով բնորոշվող գորգերը ի թիվս այլ գորգագործական կենտրոնների, լայն տարածում ունեն Արցախում և Սյունիքում: Հայաստանի ազգագրության պետական թանգարանում պահվող հավաքածուի կազմում կան Շուշիի գորգագործներին վերաբերող այդ տիպի գորգերի հայտնա գրություններով նմուշներ,²¹ որոնց հորինվածքը «Աղբակ» տիպի գորգերին բնորոշ վարդակի տարբերակներից է (նկ.6):

Արցախում գործված XIX–XX դդ. գորգերի նմուշների գեղագարդման համակարգերի ու դրանց վերաբերող մեր հավաքած դաշտային ազգագրական նյութերի պատմահամեմատական ուսումնասիրումից հստակորեն նկատվում է, որ դրանք կրում են XIII–XVIII դդ. գորգերի տեխնիկատեխնոլոգիական ու գեղագարդման ավանդույթները և դա վերաբերում է թելի որակին ու ոլորքին, խավի բարձրությանն ու հանգույցի ձևին, գունային երանգներին ու ներկանյութերին, հորինվածքներին ու դրանց մատուցման սկզբունքներին: Ընդ որում, տեղական բուրդը համարվել է գորգագործության համար լավագույն հումք, իսկ տարածաշրջանի խոտաբույսերի թվումն էլ եղել են բազմաթիվ ներկատու բույսեր, այդ թվում նաև այնպիսիք, որոնք ցանվել ու մշակվել են այս ոլորտի կարիքները հոգալու համար: Ջրաբերդ գավառում եղած տորոնի բնական ցանքատարածքների մասին օրինակ, նշել է Մակար եպիսկոպոսը:²²

XIX–XX դդ. Արցախում գորգն օժիտի պարտադիր մաս էր, և ոչ միայն գորգը, այդպիսին էր նաև կարպետը, անկողնապարկը, խուրջինը, աղի տոպրակը: Եվ այս պարագան ինքնին մատնաշում է Արցախում գորգագործական մշակույթի համատարած լինելու փաստը:²³

Արցախյան գորգագործական ավանդույթները Կովկասի հարավ արևելյան գորգագործական կենտրոններում: Մենք լուրջ չենք համարում որոշ

¹⁹ Rites of Passage in inscribed Armenian Rugs, 2002, նկ. 44:

²⁰ Ուլուքաբյան Բ.Ա., 1978, 225–227:

²¹ ՀԱՊԹ, Գործվածքի ֆոնդ, գ/հ 6938/47:

²² Մակար Բարխուտարեանց, 1999, 188:

²³ Լալայան Եր., 1988, 116, 353:

ուսումնասիրողների կողմից արցախյան գորգերին «քոչվորական» գորգ ու Արցախն էլ մահմեդական տարրերով բնակեցված համարող պատկերացումներն ու միաժամանակ տեղեկացնում, որ Արցախում տարածում գտած գորգերի և կարպետների տիպերի զգալի մասը ընդհանրապես բնորոշ էր պատմական Հայաստանի մյուս գորգագործական կենտրոններին: Ի շարս «Նշանախշ», «Կենաց ծառ», «Գլաձոր», «Նախշաշերտային» ու նմանատիպ այլ համընդհանուր տարածում ունեցած գորգատիպերի, դրանց թվումն են նաև «Ոսկանապատ», «Որոտան», «Շեղանկյունագարդով», «Ամարաս», «Աստղավոր» և այլ տիպերի գորգերը, որոնք, այնուամենայնիվ, իրենց բոլոր տարբերակներով հանդերձ, առավելապես բնորոշ են Արցախի գորգագործական կենտրոններում: Սակայն արցախյան գորգագործական մշակույթի ավանդույթների առկայությունը միանգամայն նկատելի է նաև պատմական Հայաստանի սահմաններից դուրս գտնված տարածաշրջաններում՝ մասնավորապես հայոց մշակույթային գործունեության տարածքում: Ըստ երևույթին, հենց այդ իրավիճակն էլ ինչպես արցախյան, այնպես էլ արցախյան ավանդույթների ընդգրկման գոտիներում ստեղծված գորգերի տիպաբանման ու մանավանդ ծագման հարցերում տեղիք է տվել խառնաշփոթի: Թուուցիկ դիտարկումներից անգամ նկատվում է, որ գորգագործական բազմաթիվ կենտրոններում արմատացած գորգերի մի շարք տիպեր ակնհայտորեն նմանվում, կամ կրկնում են Արցախյան գորգերին: Դրանք այնքան շատ են ու տարբերակներով հարուստ, որ չեն կարող համարվել պատահականության արդյունք: Ընդ որում, դրանցում բավականին ակնհայտ նմանություններ ենք հայտնաբերում նաև գորգ գործելու տեխնոլոգիական հմտությունների ու գունային երանգների ասպարեզում: Այդ ամենի առկայությամբ աչքի են ընկնում հատկապես հարավարևելյան Կովկասի գորգագործական կենտրոնները:

Մեր կարծիքով այստեղ առանցքային նշանակություն են ունեցել ժողովրդագրական իրադարձությունները:

Շաքի-Դերբենտ տարածաշրջանի VIII–XIV դդ. վերաբերող պատմամշակութային կառույցները, գյուղատեղիներն ու գերեզմանոցները վկայում են հայոց ստվարաթիվ լինելու և մշակութային բուռն գործունեությամբ զբաղվելու հանգամանքը:²⁴ Հայոց թվաքանակը այդ տարածաշրջանում այնքան զգալի էր և ազդեցիկ, որ այդտեղ ձևավորվում են առանձին փոքր թագավորություններ: X դարում Շաքիի տարածաշրջանում ստեղծվել էր Արցախի իշխող տոհմի՝ առանշահիկների հայկական թագավորություն, որը 960-ական թվականներից հետո, երբ տեղի հայ բնակչությունը դավանափոխ լինելով դարձավ քաղկեդոնական, կտրվեց հայկական միջավայրից:²⁵

²⁴ Բարխուդարյան Ս., 1969, 141–143, Абу-Исхак ал-Истахри, 1901, 97, 107, Левиатов В.Н., 1948, 72:

²⁵ Ուլուբաբյան Բ., 1978, 83–84:

Դերբենտի հայկական թագավորության մասին չափազանց կարևոր տեղեկություններ է հաղորդում XI դարի պատմիչ Մատթեոս Ուռհայեցին: Նա պատմելով հայոց թագավորությունների մասին, որպես ականատես նշում է նաև Դերբենտի տարածաշրջանում գոյություն ունեցած հայոց թագավորության մասին՝ «կային և ուրիշ հայ թագավորներ՝ Դարբանդ գավառում, որ կոչվում էր Կապանք՝ օգերին և աղվաններին սահմանակից. նրանք ազնիվ և սրբակրոն թագավորներ էին, և պատարագներում հիշվում են նրանց անունները՝ այն է Վաչագանի, նրա որդու՝ Սևադայի, Սևադայի որդու՝ Մենեքերիմի, Մենեքերիմի որդու՝ Գրիգորի, որը մեր այս մատյանի գրության ժամանակ դեռ կենդանի էր»:²⁶

այդ տարածաշրջանի վիմագիր սկզբնաղբյուրներն ուսումնասիրած հայ նշանավոր վիմագրագետ Սեդրակ Բարխուդարյանը գտնում է, որ այդտեղ XI–XIII դդ. իսկապես եղել է հայոց թագավորություն և անգամ մի քանի թագավորների տապանաքարեր պահպանվել են Դերբենտից հարավ ընկած բնակատեղիներում:²⁷ Այդ ամենը հաստատում են նաև Մակար Բարխուտարեանցի XIX դ. վերջին արած դիտարկումները: Նա նշում է, որ Խաչմասի մերձակայքում գտնվող երկու հին գերեզմանոցներում գյուղացիների օգնությամբ հողից հանվել ու մաքրվել են բազմաթիվ տապանաքարեր, որոնց արձանագրություններից պարզվել է, որ հայերն այդտեղ ներկա են առնվազն 573–1890-ական թվականները: Այսինքն, հայոց մշակութային ակտիվ գործունեությունն այդ տարածաշրջանում սկսվել է առնվազն VI դարից ու անընդմեջ շարունակվել մինչ XX դ. 80-ական թվականները: Խաչմասի մերձակայքի մացառուտներով ծածկված հանգստարանում Սարգիս Արքեպիսկոպոս Ջալալյանցը 1840-ական թվականների վերջին տեսել է Աղվանից վերջին թագավոր՝ Սևադայի որդի Մենեքերիմի տապանաքարը,²⁸ բայց Մակար Բարխուտարեանցի այնտեղ գտնվելու ժամանակ՝ 1890-ական թվականներին, այն արդեն անհայտացած էր:²⁹ Դժբախտաբար այս երկու հեղինակների արձանագրած տվյալները ցույց են տալիս, որ հայոց վերաբերող պատմական հուշարձանները ընդամենը հիսուն տարվա ընթացքում զգալիորեն պակասել ու նաև, միտումնավոր ավերվել են: Ընդ որում, սա դեռևս վերաբերում է XIX դ. երկրորդ կեսին:

Տարածաշրջանի ռազմաքաղաքական իրավիճակների պարբերաբար կրկնվող կտրուկ շրջադարձերի պայմաններում էլ, Կովկասի հարավ արևելյան տարածքներում շարունակում էին գոյատևել հայկական կիսանկախ իշխանություններ, այդ թվում՝ օրինակ Շաքիի հայկական թագավորության հարևանու-

²⁶ Մատթեոս Ուռհայեցի, 1991, 249:

²⁷ Բարխուդարյան Ս., 1969, 125–147.;

²⁸ Սարգիս Ջալալեանց, 1858, 420:

²⁹ Մակար Բարխուտարեանց, 1999, 76–77:

թյամբ գտնվող Կուտկաշենի մեկիքությունը:³⁰ Տարածաշրջանում էլ ընդհանրապես գերակշռում էր քրիստոնյա բնակչությունն ու վերը հիշատակված տեղեկությունների թվում, դրա մասին է վկայում նաև XIV դ. երկրորդ կեսին ու XV դ. սկզբներին ապրած Աբդ ար Ռաշիդ ալ-Բաքուին, շեշտելով որ Բաքվի շրջակայքում կային բազմաթիվ գյուղեր, որոնց բնակիչները քրիստոնյաներ էին ու միայն քաղաքի (որտեղից էլ ինքն էր)՝ Բաքվի բնակիչներն էին շիա մահմեդականներ:³¹

Տարածաշրջանի հայ բնակչության քանակության մասին պատկերացում է տալիս նաև այն, որ 1720-ական թթ. Արցախ-Սյունիքում ծայր առած ազգային ազատագրական պայքարի ընթացքում կարևոր դերակատարում են ունեցել Շիրվանի հայերից կազմված զորամասերն ու մանավանդ նրանց հրամանատարները՝ հանգամանք, որը վկայում է այդ տարածաշրջանում գոյատևած հայոց իշխանական տների մնացուկների մասին: Հարություն Արարատյանը հիշատակում է XVIII դ. վերջին Դերբենտից հարավ, ծովափնյա Մուշկյուրի հովտում տեղաբախշված հայկական տասնյակ ծաղկուն գյուղերի մասին:³²

Այդուհանդերձ, աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային հետազարգացումների արդյունքում հայոց մի զգալի մասը XVIII դ. վերջին և XIX դ. սկզբին տեղափոխվեց հյուսիսային Կովկաս, մի մասն էլ ստիպված դարձան մահմեդական կրոնի հետևորդներ:³³ Մի մասն էլ, օրինակ Մուշկյուրի հովտի հայերը, Դերբենտի հայերի հետ միասին 1790-ականների վերջին տեղափոխվեցին Ղզար ու դրա մերձակայք:³⁴ Պրոֆեսոր Մյուլլերի հաշվարկների համաձայն Մուշկյուրից տեղափոխված հայերի քանակը մոտ տասը հազար էր:³⁵

XIX դարի վերջերին, դեռևս թարմ պատմական դեպքերի հետ կապված վավերագրերի և հուշերի հիման վրա արված ուսումնասիրություններն ու XVI–XVII դարերում գրված հայերեն ձեռագիր սկզբնաղբյուրները թույլ են տալիս պատկերացում կազմել այդ տարածաշրջանից, ինչպես նաև Արցախից հեռացած կամ իսլամ ընդունած հայերի քանակի մասին: Մասնավորապես, 1584 թ. Կարինում գրված մի ձեռագրում հիշատակված է, որ թուրքերի կողմից Շիրվանը գրավելու տարում հայ գերիների թիվը 72 հազար էր:³⁶

Հայտնի է, որ միայն XVIII դարի առաջին քառորդում, թուրք-պարսկական պատերազմների ու լեզգիների իրար հաջորդող ասպատակությունների ու

³⁰ Левиатов В.Н., 1948, 71–72.

³¹ <http://www.vostlit.info/Texts/rus2/Bakuwi/frameset5.htm>

³² Жизнь Артемия Араратского, 1981, 128–129:

³³ Մակար Բարխուտարեանց, 1999, 146–147:

³⁴ Жизнь Артемия Араратского, 1981, 128–129:

³⁵ Миллер Б., 1929, 8 տես նույնը՝ <http://www.miacum.am/docs/taty/>:

³⁶ Աշոտ Հովհաննիսյան, 1959, 65 /տեղեկությունը քաղված է Մատենադարանի թիվ 9223 ձեռագրի թիվ 27 պատառիկից/:

դրանց հետևած սովի հետևանքով Շաքի-Շիրվան տարածաշրջանում իսկամ են ընդունում ավելի քան տասն հազար հայեր:³⁷ 1725 թվականի փետրվարի 5-ին վրաց Վախթանգ VI թագավորին ուղղված մի նամակում հաղորդվում է, որ լեզգիների ասպատակություններից ամբողջովին թալանվել ու թուրքացվել են Շաքիի, Շամախու, Ղարասուի (Կուտկաշեն), Մուշկյուրի ու հարակից տարածաշրջանների հայաբնակ գյուղերը:³⁸ Այսպես թե այնպես, այդօրինակ հաճախակի կրկնվող իրադարձությունների հետևանքով հարավ-արևելյան Կովկասի հայաիծծ տարածաշրջաններում տեղի է ունեցել հայ բնակչության արտահոսքի, դավանափոխության կարծես անընդմեջ գործընթաց:

Ղազար քահանա Հովսեփյանը իր հավաքած նյութերի հիման վրա պարզել է, որ միայն 1750-ական թթ. Շաքիի տարածաշրջանում բռնի դավանափոխ է արվել շուրջ 15000 ծուխ հայ, որի արդյունքում թուրքացվել է 29 հայկական գյուղ:³⁹ Ինչպես տեսնում ենք, այդպիսի գործընթացների շնորհիվ պարբերաբար նվազում էր իրենց ինքնությունը պահպանած հայերի թվաքանակը, մասնավորապես որ բացի Հյուսիսային Կովկաս տեղափոխվելուց, 1730-ական թվականներին էլ այդ տարածաշրջաններից՝ Շամախուց ու Շաքիից հազարավոր հայ ընտանիքներ Պարսկաստան է վերաբնակեցրել Նադիր Շահը:⁴⁰ Սակայն այդ ամենին էլ զուգահեռ, շարունակվել են արցախահայոց նոր հոսքերը: Սկզբնաղբյուրը տեղեկացնում է, որ միայն 1790-ական թթ. Արցախից այդտեղ են վերաբնակվել շուրջ 12000 ծուխ հայ:⁴¹ Նման պարբերաբար կրկնվող տեղաշարժերով կրկին բնակեցվել ու հայ բնակիչներով համալրվել են հարավարևելյան Կովկասի հայաթափման եզրին կանգնած բազմաթիվ բնակավայրեր: Այս իմաստով հատկանշական է Շաքիի տարածաշրջանում գտնվող Սոգուլթու գյուղի օրինակը, որի մասին Եսայի Հասան Ջալալյանը գրում է «եւ ոմն Բարսեղ անուն քահանայ, որ էր բնիկ Ղարաբաղու երկրեն Խաչինու, և ի յազգէ մելիքաց էր անդ՝ որ ընդ գնալոյ ժողովրդեանն սոքա ևս ազգաւ գնացեալ էին և զՍոգուլթու գեղն նորոգ շինեալ և բնակեալ»:⁴² Այդ դեպքերից շուրջ հարյուր տարի անց Մակար Եպիսկոպոս Բարխուտարեանը տեղում դեռևս մնացած հայերից ու մահմեդականություն ընդունած հայերից հավաքած տեղեկություններից պարզել է, որ Խաչմասում՝ երբեմնի Մուշկյուրի խոշորագույն բնակավայրերից մեկում, իշխողները ավանդաբար եղել են հայերը: Նա հիշատակում է տեղացիների մոտ մեծ հարգանքի արժանացած Հովսեփ բեկ Ջավադբեկյանի ու նրա

³⁷ Եսայի Հասան Ջալալյան, 1839, 29, Левинатов В.Н., 1948, 92:

³⁸ Եսայի Հասան Ջալալյան, 1839, 32:

³⁹ Ղազար քահանա Հովսեփյան, 1904, 64–65:

⁴⁰ Մակար Բարխուտարեան, 1999, 56:

⁴¹ Բեկնազարեան Ապրես, 1886, 241–242:

⁴² Մակար Բարխուտարեան, 1999, 33:

նախնիների մասին ու ավելացնում, որ տեղի հայերն արդեն խոսում էին տաճկերեն:⁴³

Արցախյան ավանդույթների ներկայության առումով մենք կարևորում ենք նաև Ելիզավետապոլի նահանգի կազմում եղած Արեշի գավառը: Մինչ XX դարի սկզբները ամբողջովին հայաբնակ էին այդ գավառի գյուղերը՝ Քանդակը, Հավարիկը, Մամաթավան, Խանավաղը, Մագուրդուն, Խալդանն ու Արեշը, որոնք հայտնի էին որպես գորգագործական կենտրոններ:⁴⁴ Մ. Բարխուտարեանցի դիտարկումներից պարզվում է, որ այդ ու հարակից գավառների բնակիչները և նրանց թվում նաև հայերը, վարում էին բազմաբնույթ տնտեսաձևեր, որոնց արտադրանքը վաճառահանվում էր մոտակա շուկաներում, մասնավորապես Ադդաշում: Այդօրինակ ապրանքների թվում մեծ տեղ է գրավել ոստայնանկության հումքն ու արտադրանքը՝ գորգերն ու կարպետները, անկողնապարկերն ու խուրջիները, բուրդն ու մանվածքը, ներկանյութերը և այլն:⁴⁵ Սարգիս Ջալալյանը իր հավաքած տեղեկությունների հիման վրա հանգել է այն եզրակացության, որ XV–XVII դդ. այս գավառը եղել է հիմնականում հայաբնակ, բայց 1840-ական թվականների վերջին դրա ժողովրդագրական նկարագիրն արդեն այլ էր՝ «ի սմին տարածություն բնակին մեծ բազմություն մահմետականաց, դարձելոց ի Հայոց և գիւղք Հայոց են աստ յոթն»⁴⁶

Նմանատիպ ժողովրդագրական զարգացումներ է ունեցել նաև Շաքի-Չաքաթալա տարածաշրջանը: Մակար Բարխուտարեանցը հիշատակում է այս տարածքներում հայոց երբեմնի ներկայությունը վկայակոչող ավանդություններ, լեգենդներ ու տեղանուններ: Դրանք հստակորեն ցույց են տալիս, որ Շաքի-Չաքաթալա-Բելոկան տարածաշրջանում մեծաքանակ էին հատկապես Արցախի Ջրաբերդ, Վարանդա ու Խաչեն գավառներից այդտեղ տեղափոխված վերաբնակիչները:⁴⁷ Ընդհանրապես, այդ տարածաշրջաններ վերաբնակված արցախցիների ունեցած դերի ու նշանակության մասին պատկերացում կազմելու համար տիպական օրինակ կարող է ծառայել արցախյան գորգագործության նշանավոր կենտրոն Վարանդա գավառի Ճարտար գյուղը: Մակար Բարխուտարեանցի ներկայացրած տվյալներից պարզել ենք, որ այդտեղից XVII–XVIII դդ. արտագաղթածները բնակություն էին հաստատել Շամախու մերձակայքի Արփաուտ, Ղարա-Քարքանջ, Կուրճեվան, Գանձակ, Քեշիսուրդ, Քյալբանդ, Վանքաշեն ու Թալիշ գյուղերում:⁴⁸ Այն հանգամանքը, որ հիշատակված ութ գյուղերից յուրաքանչյուրում XIX դ. վերջերին ու նույնիսկ XX դ. առաջին

⁴³ Մակար Բարխուտարեանց, 1999, 75–76:

⁴⁴ Մակար Բարխուտարեանց, 1999, 141–143, Լուսենց Ա., 1982, 5–7:

⁴⁵ Մակար Բարխուտարեանց, 1999, 144:

⁴⁶ Սարգիս Ջալալեանց, 1858, 382:

⁴⁷ Մակար Բարխուտարեանց, 1999, 112–123:

⁴⁸ Մակար Բարխուտարեանց, 1999, 97, 104, 107: Քաջբերունի, 2002, 76:

կեսին՝ այսինքն ռազմա-քաղաքական բազմաթիվ վայրիվերումներից հետո էլ դեռևս մնացել էին մի քանի տասնյակ տուն նախկին ճարտարացիներ, պատկերացում է տալիս ինչպես արտագաղթի ծավալների, այնպես էլ դրա հետևանքով բնակության այդ նոր վայրերում արցախյան ավանդույթների ներթափանցման ու արմատավորման հնարավորությունների մասին (նկ. 11) Կովկասի հարավարևելյան գորգագործական կենտրոններում արցախյան ավանդույթների առկայության վերաբերյալ կան ավելի որոշակի փաստարկներ՝ այս դեպքում խոսքը վերաբերում է տեղի հայերի կենցաղի նկարագրին ու բարբառին:

Եսայի կաթողիկոսն իր ժամանակին Շիրվանի մասին գրել էր՝ «և երկիրն էր բարելի և շեն և մարդաշատ, թե հայ ազգօք, որ ի Ղարաբաղի երկրէն ժողովուրդք յոլովք անցեալ էին յերկիրն այս ավելի քան տեղականսն և թէ այլ ազգօք, որ բնիկ ի յերկրէն են»:⁴⁹

Բայց այդ ամենը հարավ արևելյան Կովկասի մշակութային նկարագրում արցախահայության կողմից որոշակի մաս ու ներգործություն ունենալու հնարավորություններից միայն մեկն է: Ըստ իս, հիշատակված տարածաշրջանի գորգագործական կենտրոններում արմատացած գորգերի գեղագարդման համակարգում, կատարման տեխնիկատեխնոլոգիական չափանիշներում արցախյան ավանդույթների արմատավորման, ու մանավանդ, հետագա զարգացումների հարցում շատ ավելի էական էր իսլամ ընդունած և ազգային լեզուն կորցրած հայերի դերը: Վերն ասվեց, որ XVII–XX դդ. խնդրո առարկա տարածաշրջաններում պարբերաբար եղել են զանգվածային կրոնափոխության դեպքեր: Վերջին զանգվածային դավանափոխությունը տեղի ունեցավ 1918–20 թթ., երբ Թուրքիայի ու Ադրբեջանի միացյալ ջանքերով սպանվեց մոտ քառասուն հազար հայ, իսկ հազարավորներն էլ կրոնափոխ եղան: Շամախու, Ճաքիի ու Գյոքչայի գավառներում դեռևս պահպանված հայաբնակ հիսուներկու գյուղերից մասնակիորեն փրկվեցին միայն տաս գյուղ՝ Միրզաբեկլուն, Խոշկաշենը, Նիժը, Ճալեթը, Թոսիկը, Վարդաշենը, Մեծ Սոգություն, Փոքր Սոգություն, Գիրկը, Չոռլուն:⁵⁰

Դավանափոխության շնորհիվ շատ ավելի դյուրին են դառնում էթնոմշակութային այլ միջավայրում հայոց մշակութային ավանդույթների տեղայնացման, էթնիկական այլ հանրությունների կողմից դրանց յուրացման գործընթացները: Դավանափոխության հետ միասին, թեև աստիճանաբար տեղի է ունենում նաև մայրենի լեզվի կորուստ, բայց այնուամենայնիվ, դա չի ենթադրում տնտեսամշակութային գործունեության համակարգի փոփոխություն, ուստի այն ամենը, ինչ ունենում է դավանափոխ հանրությոը, մեխանիկորեն դառնում է օտար հանրությոի մշակութային սեփականություն: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ բռնի դավանափոխության ալիքները սկիզբ են առել առնվազն

⁴⁹ Եսայի Հասան Զալալյան, 1858, 32–33:

⁵⁰ Геноцид армян в Османской империи, 1982, 538–539

XIV–XV դարերից, պետք է ենթադրել, որ արդեն XVI–XVII դարերում դավանափոխ հայերի սերունդները դիտվում էին որպես մահմեդական ցեղեր՝ լեզգի, թաթար, թաթ, պարսիկ և այլն, որոնք սակայն, այս կամ այն չափով, շարունակել են պահպանել ու զարգացնել իրենց նախնիներին բնորոշ զբաղմունքներն ու սովորույթները:⁵¹

Պատմամշակութային այսօրինակ գործընթացները, ինչպես նկատում ենք, զգալիորեն բարդացնում են ծագումնաբանական հետազոտությունների իրականացումն, ու միաժամանակ, հնարավորություն են տալիս ցանկության դեպքում յուրացնել իրականում այլ էթնիկական հանրությունների ստեղծած մշակութային ժառանգությունը: Համենայնդեպ, 1960-ական թվականներից սկսած այդ գաղափարախոսությունն են ներկայացնում գորգագործական մշակույթին վերաբերող Բաքվում հրատարակված աշխատությունները, որոնցում ընդհանրապես խոսք չկա հայոց մասին: Սակայն մյուս կողմից էլ, 1920–30-ական թթ. հրատարակված տեղեկատվական ու տնտեսագիտական բնույթի ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս պատկերացում կազմել այդ տարածաշրջանների գորգագործական մշակույթում հայոց ունեցած իրական դերի մասին: Ըստ այդմ՝ պարզվում է, որ հարավ-արևելյան Կովկասի մի շարք գորգագործական կենտրոններում այդ մշակույթի գոյությունը կախված է եղել հայոց ներկայությունից:

So, the Armenian-Greek agreement has not been brought into effect. Due to the comprehensive support of France, Italy and especially the Soviet Russia the Kemalists smashed the Greek Army in 1921–1922, and the whole Pontos was cleaned up from the Greeks. And the theme on the formation of the Greek sate of Pontos has been closed at the Lozan Congress.

BIBLIOGRAPHY

Ահարոնյան Ա., – 2001, Սարդարապատից մինչև Սևր եւ Լոզան: Քաղաքական օրագիր, Երևան, 2001:

Արզումանյան Մ., – 1973, Արհավիրքից վերածնունդ, Երևան 1973:

²⁸ Ibid, 123.

²⁹ «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 20 յուլիս, 1920, թիւ 506 (2327):

³⁰ «Յառաջ», Երևան, 16 հոկտեմբերի, 1920, թիվ 226:

³¹ Հունական արխիվային փաստաթղթեր, 1998, 33–34:

Գալոյան Գ., – 1999, Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ., Երևան, 1999:

Թյուրապյան Ա., – 1925, Հայ ժողովրդի դատաստանին առջև. 1914–1924, Մարսել, 1925:

«Ժողովրդի ձայն», 2 փետրուարի, 1919, թիվ 24:

«Ժողովրդի ձայն», Թիֆլիս, 19 յունուարի, 1919, թիվ 13:

Խատիսեան Ա., – 1968, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968:

Հայաստանը միջազգային դիվանագիտության – սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923 թթ.), Ջ. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972:

Հունական արխիվային փաստաթղթեր հայ-հունական հարաբերությունների մասին առաջին Հանրապետության շրջանում (1918–1920), հունարենից թարգմ. Հ. Բարթիկյանը, Երևան, 1998:

«Ճակատամարտ», Կ.Պոլիս, 20 յուլիս, 1920, թիվ 506 (2327):

«Յառաջ», Երևան, 16 հոկտեմբերի, 1920, թիվ 226:

Ռուբեն, – 1991, Հայ յեղափոխականի մը հիշատակները, հ. Է, Երևան, 1991:

Վրացյան Ս., – 1993, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993:

ԾԻՐԱԿ ԹՈՐՈՍՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

ՀՀ Ազգային ժողով

ՏՐԱՊԻԶՈՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ՈՐՊԵՍ ՍԵՎ ԾՈՎ ԵԼՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՈՆՏՈՍԻ ՀՈՒՅՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ (1919–1920 ԹԹ.)

ԱՄՓՈՓՈՒՄ

Ծովային ելքի հիմնահարցը հանդիսացել է Հայաստանի առաջին Հանրապետության արտաքին քաղաքական առաջնահերթություններից մեկը: Ուստի այդ խնդիրը մշտապես գտնվել է Ա՝ՀՀ կառավարության և Փարիզում գործող պատվիրակությունների օրակարգում: Հայկական զույգ պատվիրակությունների կողմից 1919 թ. փետրվարի 12-ին Փարիզի վեհաժողովին համատեղ ներկայացրած «Հայկական պահանջների հուշագիրը» հրապարակվելուց անմիջապես հետո կտրուկ սրվեցին հայ-ֆրանսիական հարաբերությունները Կիլիկիայի պատճառով: Խուսափելով Ֆրանսիայի հետ հակամարտության մեջ մտնելու վտանգավոր հեռանկարից, հայ պատվիրակները հրաժարվեցին Կիլիկիայի նկատմամբ պահանջներից՝ շեշտը դնելով միայն Սև ծովով ելքի վրա, որի ամենահավանական տարբերակը սկզբնապես համարում էին Տրապիզոնը: Հայերի այս ակնկալիքներին աջակցում էր նաև հույների որոշ հատվածը, ինչի մասին հավաստել էր Փարիզում հունական դեսպան Ռոմանոսը Պողոս Նուբարին: Նույնիսկ Հունաստանի կառավարության ղեկավար Վենիզելոսը Փարիզի վեհաժողովի նիստերից մեկում հայտարարել էր, թե հայերն արժանի են Տրապիզոնն ունենալու:

1919 թ. ապրիլին Փարիզում Պոնտոսի հարցով բանակցություններ տեղի ունեցան Հայ ազգային առաջին համագումարի և Եվրոպայում գործող պոնտահույների «Պոնտոս» կազմակերպության ներկայացուցիչների միջև, սակայն՝ անարդյունք: Բայց արդեն 1920 թ. սկզբներին հույները մասամբ փոխեցին իրենց դիրքորոշումը: Ելնելով Պոնտոսի անկախության հարցում մեծ տերությունների բացասական դիրքորոշումից՝ նրանք ստիպված էին խորհել Հայաստանի հետ միանալու մասին, ուստի պատվիրակություն ուղարկեցին Հայաստան՝ Փարիզում սկսած բանակցությունները շարունակելու համար: 1920 թ. հունվարի 1-ին Պոնտոսի հույն մետրոպոլիտ Ֆիլիպիդիս Խրիսանթոսը

(Խրիսանֆ) ժամանեց Երևան: Խրիսանֆին Երևանում լավ ընդունեցին և կնքվեց հայ-պոնտական պայմանագիրը, ըստ որի՝ 1. Պոնտոսը մտնելու է Հայաստանի կազմի մեջ, իբրև նրա դաշնային մեկ մասը, իր ներքին գործերում Պոնտոսը կառավարվելու էր սեփական սեյմի միջոցով, 2. հայկական և պոնտական պատվիրակությունները Փարիզում գործելու էին համերաշխ, 3. Եթե Հայաստանի և Պոնտոսի անկախությունները մերժվեն, հայերն ու հույները միասին քայլեր են ձեռնարկելու մինչև ապստամբություն՝ հարկադրելու համար, որ ճանաչվի ընդհանուր անկախությունը: Սակայն, Փարիզի հայկական պատվիրակությունը առժամանակ չհրաժարվեց Տրապիզոնի նկատմամբ իր պահանջներից և չճանաչեց այդ պայմանագիրը՝ դիտողություն անելով Երևանին զիջողականության համար:

Պոնտոսի հույների ձգտումները հարուցում էին նաև լազերի վրդովմունքը, որոնք աջակցություն էին ստանում Պոնտոսի հունական ինքնավարության գաղափարի հակառակորդ անգլիացիների կողմից:

Այս ամենից ելնելով՝ 1920 թ. փետրվարի 23-ին Էվքսինյան Պոնտոսի նախագահ Կոնստանտինիդեսը Լոնդոնի խորհրդածրոյովին հուշագիր է ներկայացնում Թուրքիայից Պոնտոսի անջատման և Հայաստանի Հանրապետության հետ դաշնություն կազմելու մասին: Այս գաղափարը սկսում է ինչ-որ տեղ խրախուսվել Անտանտի կողմից, քանի որ հայ-պոնտական հնարավոր դաշինքը զգալիորեն կուժեղացներ տարածաշրջանում բոլշևիկների դեմ բարձրացված պատենշը: Իհարկե հայերի և հույների համար առաջնայինն այդ դաշինքը քեմալականների դեմ օգտագործելն էր: Սակայն հույները 1920 թ. մարտին ավելի ագրեսիվ էին դարձել: Հունական պատվիրակությունը, Լոնդոնում այցելելով հայկական պատվիրակությանը, սպառնում է, որ եթե հայերը շարունակեն պահանջել Տրապիզոնը, ապա իրենք կմիանան թուրքերին, որովհետև Տրապիզոնը Պոնտոսի գլուխն է, և հույները թույլ չեն տա գլուխն անջատել մարմնից: Հունական կառավարության բարյացակամությունը պահպանելու նպատակով հայկական կողմը արդեն օգոստոս ամսին որոշում է հրաժարվել Տրապիզոնի պահանջից:

Մեծ տերությունները դեմ էին Պոնտոսում երկրորդ հունական պետության ստեղծմանը, հետևաբար հույները պետք է ավելի լրջորեն համագործակցության եզրեր փնտրեին Հայաստանի հետ: Սակայն պոնտացի հույները առաջ քաշեցին «Պոնտոսի անբաժանելիության» մասին վարկածը և վերջնականապես Պոնտոսի ազատագրության հարցը դուրս մնաց օրակարգից:

ШИРАК ТОРОСЯН

Кандидат исторических наук

Национальное собрание РА

ТРАПЕЗУНТ ДЛЯ АРМЕНИИ КАК ВОЗМОЖНОСТЬ ВЫХОДА К ЧЁРНОМУ МОРЮ И ПОЗИЦИЯ ПОНТИЙСКИХ ГРЕКОВ (1919–1920)

РЕЗЮМЕ

Проблема выхода к морю являлась первоочередной для внешней политики Первой республики Армения, так что этот вопрос не сходил с повестки дня как правительства, так и работавших в Париже армянских делегаций. Сразу же после публикации представленного 10-ого февраля 1919 г. на Парижской конференции двумя армянскими делегациями «Меморандума армянских требований», резко обострились армяно-французские отношения из-за Киликии. Пытаясь избежать опасности конфликта с Францией, армянские делегаты отказались от требований в отношении Киликии, ставя во главу угла вопрос выхода к Черному морю, наиболее вероятным решением которого они считали выход через Трапезунд. Претворению в жизнь этих чаяний армян содействовала также часть греков, о чем заявил в Париже Погосу Нубару посол Греции Романос. Даже руководитель греческого правительства Венизелос выступил на одном из заседаний Парижской конференции с заявлением о том, что армяне достойны того, чтобы получить Трапезунд.

В апреле 1919 г. в Париже состоялись переговоры по понтийскому вопросу между представителями Первого армянского национального конгресса и действующей в Европе организацией понтийских греков «Понт», однако переговоры не увенчались успехом. Но уже в начале 1920 г. греки частично пересмотрели свою позицию. Исходя из негативной позиции великих держав в вопросе независимости Понта, они вынуждены были объединиться с Арменией и посему направили в Армению делегацию для продолжения переговоров, начатых в Париже. 1 января 1920 г. греческий митрополит Понта Филипидис Хрисантос (Хрисанф) прибыл в Ереван, где он нашел теплый прием. В Ереване был заключен армяно-понтийский договор, согласно которому: 1. Понт должен войти в состав Армении в качестве ее федеральной части, свои внутренние вопросы он будет решать через собственный сейм; 2. ар-

мянская и понтийская делегации должны действовать в Париже в содружестве друг с другом; 3. Если Армении и Понту откажут в независимости, армяне и греки предпримут совместные действия вплоть до восстания, чтобы заставить признать общую независимость. Однако армянская делегация в Париже не отказалась от своих требований в отношении Трапезунда и не признала этот договор, выразив недовольство уступками со стороны Еревана.

Устремления понтийских греков вызывали также возмущение лазов, которые получали поддержку со стороны англичан, выступавших против идеи автономии понтийских греков.

Исходя из этого, 23-го февраля 1923 г. президент Понта Эвксинского Константинидес представил на Лондонской конференции меморандум об отъединении Понта от Турции и заключении союза с Республикой Армения. Эта идея нашла в какой-то степени поддержку Антанты, поскольку возможный армяно-понтийский союз мог стать в регионе существенным барьером для большевиков. Разумеется, для армян и греков первоочередным было использовать этот союз против кемалистов. Однако в марте 1920 г. греки стали вести более агрессивную политику. Греческая делегация выступила в Лондоне с угрозами против армянской делегации, заверяя в том, что если армяне не перестанут требовать Трапезунд, то они объединятся с турками, поскольку Трапезунд является «головой» Понта, и греки не позволят отделить голову от тела. Поэтому армянская сторона, дабы ко всем сложностям не добавить вражду греков и сохранить дружественные отношения с греческим правительством, уже в августе 1920 г. приняла решение об отказе от Трапезунда.

Великие державы были против создания в Понте второго греческого государства, следовательно, греки должны были пойти на более серьёзное сотрудничество с Арменией. Однако понтийские греки выдвинули версию «Целостности Понта», и тем самым вопрос об освобождении Понта был окончательно снят с повестки дня.

ՔՐԻՍՏԻՆԵ ԿՈՍՏԻԿՅԱՆ

*Պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ*

kkostikyan@yahoo.com

ԳԱՅԱՆԵ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

ԵՊՀ Արաբագիտության ամբիոն

**ՄՈՒՀԱՄՄԱԴ ՄԱՐԳԱՐԵԻ ՈՒ ԱԼԻ ԻԲՆ ԱԲՈՒ ԹԱԼԻԲ
ԽԱԼԻՖԱՅԻ ԱՆՈՒՆԻՑ ՀԱՅԵՐԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ
ԴԱՇՆԱԳՐԵՐԸ ՈՐՊԵՍ ՊԱՏՄԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ**

Մահմեդական տիրապետության տակ ապրող հայության կրոնա-քաղաքական ու սոցիալ-տնտեսական իրավունքների հիմքում դարեր շարունակ գտնվել է իսլամական երկրներում զիմմիներին տրված կարգավիճակը, որն իր հերթին ձևավորվել է դեռևս Մուհամմադ մարգարեի ու նրան հաջորդած չորս արդարադատ խալիֆաների կողմից նվաճվող քրիստոնյա համայնքների հետ կնքված դաշնագրերի հիման վրա:

Արաբական նվաճումների ընթացքում այլադավան ժողովուրդներին կամ նրանց առանձին հատվածներին տրվում էին դաշնագրեր (կամ պայմանագրեր), որոնցում արձանագրվում էր նրանց հպատակեցումը արաբական տիրապետությանը ու նաև որոշվում նրանց հետագա կարգավիճակն ու իրավունքները մահմեդական իշխանության պայմաններում: Նման պայմանագրեր տրվել էին Մուհամմադ մարգարեի կողմից հիջրայի 5 թ. Մակնայի հրեաներին, Նաջրանի քրիստոնյաներին, Սալման Փարսիի զրադաշտականներին¹: Հայ պատմագրության մեջ հիշատակվում է «մարգարեի դաշնագիրը»՝ տրված 630-ականների սկզբին կամ ավելի վաղ Մեքքա այցելած Երուսաղեմի քրիստոնեական պատվիրակությունը գլխավորող հայոց Աբրահամ պատրիարքին²: Հիշյալ դաշնագրերից շատերը հետագայում հաստատվում են Աբու Բաքր, Օմար և Ալի արդարադատ խալիֆաների կողմից³: Երուսաղեմի հայոց պատրիարքին տրված հիշյալ դաշնագիրը, որը հայոց պատմագրության մեջ հայտնի է «Ալի Մանշուր» անվամբ, հաստատվել է Ալի և Օմար խալիֆաների

نامه ها و پیمانهای سیاسی حضرت محمد و اسناد صدر اسلام، تحقیق و گردآوری دکتر سید محمد حسینی، تهران، 1377، ص 165-169، 228-240، 623

² Մաւալանեանց Տ., հ. Ա., 1931, 261:

³ Նույն տեղում, 241, 248:

կողմից⁴, որը հետագոտողների կարծիքով գուրկ չէ պատմական հիմքից⁵: Հայ-արաբական առնչությունները և արաբական նվաճումները հայկական տարածքներում նշանավորվում են Օսման խալիֆայի օրոք (644–656 թթ.) Սիրիայի կառավարիչ Մու'ավիայի և Թեոդորոս Ռշտունու միջև 652 թ. կնքված, նաև Մուհամմադ իբն Մրվանի կողմից Սահակ Ձորափորեցի կաթողիկոսի խնդրանքով 703 թ. տրված դաշնագրերով⁶, որոնց մասին հիշատակում են ինչպես արաբ, այնպես էլ հայ պատմիչները⁷: Արաբ մատենագիրներից մի քանիսի (Բալագուրին, Թաբարի) երկերից հայտնի է Օմար խալիֆայի օրոք Արմինիայի Դվին, Բարազ⁸(?) և այլ քաղաքների հայ բնակչության հետ կնքված պայմանագրերի բովանդակությունը:

Մուհամմադ Մարգարեի ու առաջին արդարադատ խալիֆաների առնից նվաճվող քաղաքների այլադավան բնակչության հետ կնքվող պայմանագրերը մեծ թիվ են կազմել և կարևոր դեր խաղացել իսլամական տիրապետության տակ անցած ժողովուրդների կյանքում: Նրանցում որոշակի պայմաններով ամրագրվել են այդ ժողովուրդների կրոնական ազատությունները, կարգավորվել նրանց սոցիալ-տնտեսական դրության հարցերը: Այս կապակցությամբ տեղին է նշել նաև, որ որոշ հետագոտողների ոչ անհիմն կարծիքով այդ դաշնագրերից շատերը ստեղծվել են հենց իրենց՝ զիմմիների կողմից, քանի որ դրանց կարիքն առավելապես ունեին նրանք, մասնավորապես նաև հայերը, որոնց իրավունքները դրանք պաշտպանում էին⁹: Այս իսկ պատճառով պատահական չէ նաև այն, որ այդ պայմանագրերը խնամքով պահպանվել ու ժամանակ առ ժամանակ նորացվել են այդ համայնքների կողմից՝ հարմարեցվելով նոր պայմաններին: Արդյունքում այս փաստաթղթերի բազմաթիվ օրինակների առկայությունն է աշխարհի տարբեր ձեռագրական հավաքածուներում: Մուհամմադ մարգարեի ու վաղ իսլամի փաստաթղթերի ժողովածուի հեղինակ Մուհամմադ Համիդալլահը Սիրիայում, Եգիպտոսում, Իրաքում և Հնդկաստանում կատարած իր ճանապարհորդությունների ընթացքում, նաև Փարիզի, Լոնդոնի, Հռոմի, Լեյդենի և այլ գրադարաններում հանդիպել է

⁴ Սաւալանեանց Տ., 264:

⁵ Մկրտումյան Գ., 2010, 54:

⁶ Seta B. Dadoyan, v. I, 2011, 57.

⁷ Արաբական աղբյուրներ, 2005, 270–271: Սամուել Անեցի, 2011, 100, Գևորգ, 1982, 35: Տե՛ս հայ պատմիչների հաղորդումների հիման վրա այդ խնդրին անդրադարձը Բ. Եպս. Կիլիկեւեան, 1930, 122:

⁸ Այդ դաշնագրերի տեքստերն ընդգրկված են վաղ իսլամի շրջանի փաստաթղթերի ժողովածուի մեջ (نامه ها و پيمانهای سياسی حضرت محمد و اسناد صدر اسلام، تحقيق و گردآوری دکتر سيد محمد حسيني، تهران، 1377، ص 515-6، 519-520)

⁹ Seta B. Dadoyan, v. I, 2011, 59.

քրիստոնյաների հետ կնքված պայմանագրերի բազմաթիվ օրինակների, որոնց մի մասը տրված էին Մուհամմադ մարգարեի, մի մասը՝ առաջին արդարադատ խալիֆաների անունից¹⁰: Այս դաշնագրերի օրինակները քիչ չեն նաև Իրանի գրադարաններում, ինչպես նաև Երևանի Մատենադարանում:

Արաբ նվաճողների և այլադավան ժողովուրդների հետ կնքված դաշնագրերը նախապես բնականաբար գրված են եղել արաբերեն, որը Արաբական խալիֆայության պետական լեզուն էր: Այս դաշնագրերի նախնական տարբերակները, որոնք պահպանվել են արաբ պատմիչների երկերում, հիմնականում հակիրճ են: Դաշնագրերից շատերը պահպանվել են նաև իրենց պարսկերեն թարգմանական տարբերակներով: Դաշնագրերի երկլեզվյա (արաբերեն ու տոդատակում պարսկերեն) և միայն պարսկերեն թարգմանական տարբերակները ստեղծվել են ինչպես Իրանում, այնպես էլ Օսմանյան կայսրության տարածքում: Պարսկերեն տարբերակները առատությունը պայմանավորված է XI–XIX դարերում Արևելքում այդ լեզվի խաղացած պատմամշակութային կարևոր դերով: XI դարի վերջին Նոր պարսկերեն լեզուն ոչ միայն լիովին ձևավորվում է որպես գրականության, կառավարման ու գրագրության լեզու, այլև դառնում «խալամական լեզու»՝ իր մեջ ներառելով մեծ թվով փոխառություններ արաբերենից: Այս հանգամանքով պայմանավորված պարսկերենի կիրառության սահմանները ընդլայնվում են՝ ընդգրկելով արևմուտքում Ռումի Սելջուկյան սուլթանության և արևելքում Հյուսիսային Հնդկաստանի շրջանները¹¹: Մահմեդական տիրապետության տակ ապրող հայության համար զգալի կարևորություն ունեցող այս փաստաթղթերը թարգմանվել են նաև հայերեն և մեզ հասել հայերեն տարբերակներով ևս:

Մեր ձեռքի տակ եղած տարալեզու տարբերակների համեմատությունը միմյանց և պահպանված արաբերեն օրինակների հետ ցույց է տալիս, որ դրանք հիմնականում հանդիսանում են երկու տարբեր արաբերեն բնագրերի թարգմանական տարբերակները և իրենց բովանդակային առանձնահատկություններով նույնանում են նրանց հետ:

Դարեր շարունակ մահմեդական տիրապետության տակ ապրող հայության իրավունքների պաշտպանության համար շրջանառվող դաշնագրերի մի խմբի մեջ կարելի է առանձնացնել Մատենադարանի արաբատառ ֆոնդի երկու փաստաթղթեր, որոնցից մեկը երկլեզվյա է՝ արաբերեն, պարսկերեն (ձեռ. 358, ընդօրինակված հավանաբար XVII դարում), մյուսը՝ պարսկերեն (ձեռ. 272, ընդօրինակված 1879 թ.): Նույն բովանդակությամբ դաշնագրի մի համառոտ տարբերակ, որը հաստատված է Ուռհայի դագիներ Նադի Ֆեզլիզադեի

¹⁰ نامه ها و پیمانهای سیاسی حضرت محمد و اسناد صدر اسلام, ص. 165. 626-29. Նույն տեղում, էջ 626-29. 165. Այս մասին մանրամասն տես նաև Գ. Մկրտումյան, 2013, 97–103:

¹¹ Ludwig Paul, Encyclopaedia Iranica.

ու Մոլլա Չելեբիի կնիքներով, հրատարակվել է Էրզրումի Համալսարանի Իսլամագիտության ֆակուլտետի պատմական բաժնում հայտնաբերված մի փաստաթղթի հիման վրա տողատակում թուրքերեն թարգմանությամբ¹²: Բովանդակային առանձնահատկություններից ելնելով այս խմբի մեջ կարելի է ներառել նաև Գրիգորիս Աղթամարցու նախաձեռնությամբ 1583 թ. Ոստանի Կարախան Բեկի կողմից հաստատված Մուհամմադ մարգարեին վերագրված պարսկերեն պայմանագիրը, որն ուսումնասիրել ու հրատարակել է Հ. Փափագյանը «Մատենադարանի պարսկերեն հրովարտակաները» շարքի Ա պրակում¹³:

Այս խմբին են պատկանում մեզ հայտնի մի քանի ուշ միջնադարյան հայերեն թարգմանական տարբերակները ևս¹⁴: Վերջիններս թեև իրենց բառային ձևակերպումներով տարբերվում են, սակայն ունեն բովանդակային ընդհանրություն թե՛ միմյանց և թե՛ արաբատառ օրինակների հետ¹⁵: Հայերեն թարգմանական տարբերակներից մեկը (ձեռ. 2622) ընդօրինակվել է 1851 թ. Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքում, ընդ որում թարգմանվել է պարսկերեն բնագրից, որը պահվում է հիշյալ վանքում¹⁶: Հարմարեցվելով Իրանի շիական պետության սահմաններում շրջանառության պայմաններին՝ նրա վերնագրային հատվածում նշվում է՝ «Թարգմանութիւն ի պարսից լեզուէ Մեծ Մանշուր ասացեալ դաշնագրոյ: Դաշնագիր Մեհեմմետի, որ ի քրիստոնեայս, գրեալ ձեռամբ Ալիի»¹⁷: Այսինքն դաշնագրի կնքումը վերագրվել է շիաների առաջնորդ Իմամ Ալիին, որի անվան հետ կապելը օգտակար էր շիական պետության տարածքում բնակվող հայերի համար: Նույն բնագրի մեկ այլ հայերեն թարգմանություն հրատարակել է Նոր Ջուղայի պատմության հեղինակ Հ. Տեր-Հովհանյանը, որի մոտ սակայն Իմամ Ալիի մասին խոսք չկա: Փոխարենը փաստաթղթի վավերականությունը, ըստ վերջում առկա նշումի, հաստատված է շիաների վեցերորդ իմամ Ջա'ֆար Սադեդի կողմից¹⁸, որը իմամներից ամենահեղինակավորն էր և մեծ դեր ուներ շիական ուսմունքի ու իրավագիտության ձևավորման մեջ: Ինչպես տեսնում ենք, այս տարբերակում ևս

¹² نامه ها و پیمانهای سیاسی حضرت محمد و اسناد صدر اسلام، ص 630-631

¹³ Փափագյան Հ., հ. Ա, 1956, վավ. 21:

¹⁴ Մ. Մատենադարան, ձեռ. 2622, 2826, 2968:

¹⁵ Մ. Մատենադարան, ձեռ. 2622, էջ 115ա-116բ, ձեռ. 2826, էջ 243ա-244բ:

¹⁶ Մ. Մատենադարան, ձեռ. 2622, էջ 116բ, տե՛ս նաև Մայր Ցուցակ Հայերեն Ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ը, Երևան, 2013, էջ 760:

¹⁷ Մ. Մատենադարան, ձեռ. 2622, էջ 115ա:

¹⁸ Տեր-Յովհաննես 3., հ. Բ, 1881, 153: Իմամ Ջա'ֆարի անվան հետ էր կապվում նաև շիական պետության տարածքում գործող հայերի համար ոչ նպաստավոր մի օրենք, որի մասին ստորև կխոսվի: Իմամ Ջա'ֆարի անվան հետ հիշյալ փաստաթուղթը կապվել է հավանաբար նշված օրենքին հակադրելու նպատակով:

փաստաթուղթը պատմականորեն կապվում է շիա իմամի անվան հետ, որը ևս համապատասխանում էր շիական պետությանը հպատակ հայերի շահերին: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ այս խմբի ոչ Իրանին ենթակա տարածքներում շրջանառության համար ստեղծված հայերեն տարբերակներում փաստաթղթի տրման վկաների թվում բացի Իմամ Ալիի ու Իմամ Ջա'ֆարի անուններից հիշատակվում են Մուհամմադ մարգարեի հետևորդներից ու խալիֆայության վաղ շրջանի քաղաքական ազդեցիկ գործիչներից 25-ից ավելի անձանց, այդ թվում Աբու Բաքր ալ-Մադեդի, Օմար իբն ալ-Խաթթաբի, Օսման իբն Աֆֆանի, Ալի իբն Աբի Թալեբի, Մուավիա իբն Սուֆյանի, Աբու Հուրայրայի, Աբդալլահ իբն Մասուդի, Աբդալլահ իբն Աբբասի, Համզա իբն Աբդ ալ-Մաթթաբի և այլոց անունները¹⁹:

Ամենայն հավանականությամբ²⁰ այս խմբի դաշնագրի մի օրինակի հիման վրա է ԺԲ դարում Սամուել Անեցին նշում, որ Մուհամմադ մարգարեն «անմոռաց երդմամբ կնքեաց մուրհակ հայոց աշխարհիս համարձակ ունել զքրիստոնէութիւնն և վաճառեաց նոցա զհաւատս նոցա յամենայն տանէ առեալ Դ (4) դրամ և Գ (3) մոթ խորբալ (հացահատիկ) և ձիատոպրակ մի և պարան մի մագէ և ձեռնարար մի...»²¹:

Այս խմբի փաստաթղթերի բովանդակային առանձնահատկությունները հետևյալն են՝

- Նշվում է, որ դաշնագրերը տրված են Մուհամմադ մարգարեի անունից,
- «Հայ» բառի փոխարեն օգտագործվում է «քրիստոնյա» բառը անգամ հայերեն տարբերակներում²²,
- Դաշնագրով պարտադրվում է մահմեդականներին պաշտպանել քրիստոնյաներին և օգնել նրանց հարկ եղած դեպքում, մասնավորապես եկեղեցիների վերանորոգման, դրամական անհրաժեշտության և այլ հարցերում,

¹⁹ Մատենադարան, արաբատառ ֆոնդ, ձեռ. 358, հայերեն ձեռ. 2968, էջ 236ա, ձեռ. 2826, էջ 244բ:

²⁰ Այս մասը համեմատի՜ր վերը նշված 1583թ. դաշնագրի համապատասխան մասի հետ. «...1 մոդ ու կես հացահատիկ, 1 ձիան տոպրակ և 1 պարան» (**Փափագյան Հ.**, պրակ Ա, 71) (Ենթադրությունը Բ. Կոստիկյանի):

²¹ **Սամուել Անեցի**, 100:

²² Այս հարցում բացառություն են կազմում Օսմանյան պետության տարածքում շրջանառվող երկու բավականին ձևափոխված տարբերակները: Մեկը վերը նշված Օսմանյան Թուրքիայում տպագրված տարբերակն է (**حضرت محمد و اسناد**) և **نامه ها و پيمانهای سياسی (حضرت محمد و اسناد)** Փափագյանի կողմից հրատարակված փաստաթուղթը, որտեղ ոչ միայն շեշտվում է նրա հայերին տրված լինելը, այլև նշվում է Սահակ Ձորափորեցի կաթողիկոսի անունը, Աղթամարի հայոց վանքը իրեն ենթակա թեմական շրջաններով (**Փափագյան Հ.**, հ. Ա, 69–71):

- Արգելվում է քրիստոնյաներին բռնի մահմեդականացնելը, նրանց բնակության վայրերը փոխելը, պաշտամունքի վայրերը ոչնչացնելը կամ տեղափոխելը, քրիստոնեական օրենքներով ապրելուն և կրոնական արարողությունները կատարելուն խոչընդոտելը,
- Արգելվում է քրիստոնյա կանանց հետ բռնի ամուսնությունը, և վերջիններիս կամավոր ամուսնության դեպքում՝ նրանց մահմեդականություն պարտադրելը,
- Նշվում է գանձվող ջիզյայի չափը՝ (միջին կարողության տեր չափահաս տղամարդկանցից) 4 և (հարուստներից) 12 (դինար, դիրհեմ, նաև աղջն) չափով²³,
- Վավերագրերի վերջում որպես կանոն նշվում են մի շարք վկաների՝ արդարադատ խալիֆաների, արաբ գորավարների ու Արաբական խալիֆայության վաղ շրջանի այլ պատմական նշանավոր անձանց (շուրջ 25-30 հոգու) անուններ:

Հիշյալ խմբի դաշնագրերը թեև տարբերվում են այլ զիմմիների (հրեաների, գրադաշտականների) հետ կնքված դաշնագրերից²⁴, այնուամենայնիվ բովանդակային հիմնական հատկանիշներով, բառային ձևակերպումներով և գանձվող ջիզյայի չափով կապվում են Մուհամմադ մարգարեի և Եգիպտոսի Թուր վանքի²⁵, նաև Նաջրանի քրիստոնյաների միջև կնքված պայմանագրերի օրինակների հետ: Նաջրանի քրիստոնյաների հետ կնքված պայմանագիրն ընդգրկված է Թ և ԺԱ դարերի միջև ընկած ժամանակահատվածում գրված Նեստորականների պատմության մեջ²⁶, իսկ Եգիպտոսի Թուր վանքի քրիս-

²³ Ջիզյան այլադավանների կողմից մահմեդականներին վճարվող գլխահարկի անվանումն էր և ամենայն հավանականությամբ ծագում էր պահլավերեն «gazītak» բառից, որը Սասանյան Պարսկաստանում ցածր խավից գանձվող հարկի անվանումն էր: Տեսականորեն ջիզյա պետք է վճարեին ազատ չափահաս տղամարդիկ (այդ հարկից ազատված էին կանայք, ծերերը, երեխաները, ստրուկները, մուրացկաններն ու հաշմանդամները): Մահմեդականացածներն ազատվում էին ջիզյայից, և սա նպաստում է իսլամի արագ տարածմանը: Այնուամենայնիվ մասսայական հավատափոխությունը լրջորեն պակասեցնում էր պետական գանձարանի եկամուտները, այնպես որ VII դարի վերջին VIII դարի սկզբին նոր մահմեդականացածները (մավալիները) նույնպես պարտավոր էին հարկ վճարել (**Vera B. Moreen**, Jizya, vol. XIV, Fasc. 6, 643–645, ինտերնետային կայքէջ. <http://www.iranicaonline.org/articles/jezya>):

²⁴ نامه ها و پیمانهای سیاسی حضرت محمد و اسناد صدر اسلام، محمد حسینی، ص 623 – 9

²⁵ نامه ها و پیمانهای سیاسی حضرت محمد و اسناد صدر اسلام، ص 632 – 634

²⁶ Histoire Nestorienne (Chronique de Seert), vol. 13, 1918, 610–617. Այդ մասին մանրամասն տե՛ս նաև Մկրտումյան Գ., 2007, 106–112:

տոնյաների միջև կնքված դաշնագրի օրինակները պահպանվել են ավելի ուշ շրջանի աղբյուրներում²⁷:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ նշված խմբի դաշնագրերի մեզ հայտնի տարբերակները կարելի է թվագրել Ժ–ԺԹ դարերով, և նրանք շրջանառվում էին մահմեդական տիրապետության տակ ապրող ոչ միայն հայ, այլև քրիստոնյա այլ համայնքների շրջանում:

Հարկ է նշել, որ այս խմբի փաստաթղթերի մի մասում նշվող ջիզյայի գումարը (դինարով կամ դիրհեմով) շփոթմունքի առարկա է դարձել: Ձեռագիր 358-ում այն նշված է «4 դինար», ապա ջնջված և ուղղված է «4 դիրհեմ», իսկ հարուստներից գանձվող գումարը նշվում է 12 «դիրհեմ»՝ արաբերեն մասում, իսկ պարսկերեն թարգմանական տողատակում՝ նույն չափը «դինարով»: 1879 թ. Թավրիզում ընդօրինակված ձեռագիր պարսկերեն տարբերակում ջիզյայի չափը նշվում է 4 «դինար» և ապա 12 «դիրհեմ»²⁸: Նոր Ջուղայում թարգմանված հայերեն թե՛ ձեռագիր և թե՛ տպագիր տարբերակներում ևս այն նշվում է «4 դինար» և «12 դրամ» ձևով²⁹, իսկ մյուս երկու ձեռագրերում, որոնք իրենց բնագրերով գրեթե նույնական են, «4 դինարը» բաց է թողնված և նշվում է միայն վաճառականներից ու հարուստներից գանձվող ջիզյայի չափը՝ «12 դրամ արծաթ»³⁰: Մուհամմադ Համիդալլահի կողմից հրատարակված ժողովածուի մեջ հայ զիմմիների կողմից վճարվող ամենամյա ջիզյան սահմանվում է 4 դիրհեմի և մեկ հերաթյան հագուստի չափով³¹: Նաջրանի քրիստոնյաներին տրված պայմանագրում գանձվող ջիզյայի չափը նշվում է 4 դիրհեմ կամ Եմենական կտորի տեսակ, հարուստներից՝ 12 դիրհեմ³², իսկ Եգիպտոսի Թուր վանքի քրիստոնյաների հետ կնքված պայմանագրում նշվում է միայն հարուստներից գանձվող 12 դիրհեմը³³: Ինչպես վերը նշել ենք, «4 դրամ» չափով է ջիզյան նաև Սամուել Անեցու մոտ: Ոստանի կառավարիչ Կարախանի կողմից 1583 թ. հաստատված դաշնագրով սահմանվում էր ջիզյայի չափը յուրաքանչյուր չափահաս տղամարդուց՝ 4 աղչե՝ 1 միսղալ³⁴ մաքուր արծաթ³⁵:

²⁷ نامه ها و پیمانهای سیاسی حضرت محمد و اسناد صدر اسلام، ص 635 – 632

²⁸ Մատենադարան, արաբատառ ձեռ. 272:

²⁹ Մատենադարան, ձեռ. 2622, 115ա, **Տէր-Յովհաննէանց**, h. Բ, 149:

³⁰ Մատենադարան, ձեռ. 2968, էջ 235ա, ձեռ. 2826, 243բ:

³¹ نامه ها و پیمانهای سیاسی حضرت محمد و اسناد صدر اسلام، ص 631

³² Histoire Nestorienne (Chronique de Seert), Patrologia Orientalis, vol. 13, 1918, 612.

³³ نامه ها و پیمانهای سیاسی حضرت محمد و اسناد صدر اسلام، ص 633

³⁴ Աղչեն (أقچه) (թուրք.) – Արծաթ դրամի միավոր: 4 աղչեն կշռել է 1 միսղալ (մոտ 4,5 գրամ) և հետևաբար մեկ աղչեն կշռում էր մոտավորապես 1.10 գրամ (Հ. Փափագյան, Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, h. Ա, էջ 104):

³⁵ Փափագյան Հ., h. Ա, 69:

Թե՛ դիրհեմը և թե՛ դինարը հնագույն դրամական միավորներ են (առաջինը³⁶ արծաթի, երկրորդը՝ ոսկու³⁷), որոնք շրջանառության մեջ են գտնվել Արևելքում դեռ նախաիսլամական շրջանից:

Փաստենք, որ Մուհամմադ մարգարեի օրոք գլխահարկի կոնկրետ չափը դեռևս որոշված չէր, հարկերի գանձման մեխանիզմը մուսուլմանական տիրապետության տակ գտնվող հպատակ ժողովուրդներից սահմանվել է ավելի ուշ: Չիմնիների կողմից վճարվող ջիզյայի չափը տարբեր ժամանակներում և տարբեր շրջաններում նույնը չի եղել՝ կախված լինելով վայրի տնտեսական պայմաններից և հարկատուների սոցիալական դրությունից: Աբբասյան խալիֆայության շրջանում ջիզյան, կախված զիմմիի ունեցվածքի չափից, գանձվում էր 1, 2, 4 դինարի չափով, որը համապատասխանում է 12, 24 և 48 դիրհեմի³⁸: Քանի որ այս խմբի դաշնագրերի հնագույն տարբերակներում (Նեստորականների պատմության մեջ ու Սամուել Անեցու երկում) նշվում են դիրհեմով տարբերակները, ուստի պետք է ենթադրել որ բնագրին ավելի մոտ են դրանք:

Փաստորեն հիշյալ վավերագրերի ու ձեռագրային ընդօրինակությունների ստեղծման շրջանում (Ժ-ԺԹ դարեր) թե՛ դրամական միավորները և թե՛ գանձվող ջիզյայի չափը զգալի փոփոխություններ էին կրել, որտեղից էլ հա-

³⁶ Դիրհեմը (հուն. *drakhmē*՝ «drachma»; միջ. պարսկ. *drahm*, պարսկ. *derham*) արծաթ դրամական միավորն էր, որը շրջանառության մեջ է եղել դեռ Աքեմենյան ժամանակաշրջանից՝ պահպանելով իր կշիռը 4 գրամ չափով ողջ նախաիսլամական շրջանում: Նրա կշիռը վաղ խալիֆայության տարածքում 2.80 – 2.95 գրամ էր: Աբբասյան խալիֆայության սկզբից այն որոշ փոփոխություններ կրելով թե՛ իր արտաքին տեսքում և թե՛ կշռում՝ ի վերջո ալ-Մու՛թասիմ խալիֆայի իշխանության սկզբից ֆիքսվում է և այդ կերպ շարունակում շրջանառվել մինչև XI դար: Լենգ Թեմուրի նվաճումից հետո Իրանում իսպառ դուրս է գալիս շրջանառությունից և այլևս չի կիրառվում՝ փոխարինվելով շահի կամ ռիալ դրամներով (Philippe Gignoux, Michael Bates, Vol. VII, Fasc. 4, 424–428, տե՛ս կայքէջ <http://www.iranicaonline.org/articles/dirham>).

³⁷ Դինարը (նոր պարսկ. *dīnār*, միջ. պարսկ. *dēnār* < լատ. *denarius aureus*), ոսկի դրամն է: *Denarius* բառը գործածվում էր դեռ Հռոմի Հանրապետության շրջանից դրամի իմաստով: Իրանում այն սկսում է հատվել Մասանյան Արտաշիր Ա -ի օրոք և կշռում էր 7–7.4գ: Իսլամական ոսկի դինարները սկսել են հատվել սկսած 696 թվականից և կշռով հավասար էին 4.25 գրամի: Իսլամական ոսկե դինարներ սկսում են հատել սկսած 835 թվականից Մերվում, այնուհետև նաև Ահվազում, Մուհամմադիեում, Սամարղանդում, Կովկասի, Իրաքի ու Ատրպատականի քաղաքներում մինչև XIII դարը (Philippe Gignoux, Michael Bates, Vol. VII, Fasc. 4, 412–416 <http://www.iranicaonline.org/articles/dinar>): ԺԵ դարից դինարը խիստ արժեզրկվում է՝ վերածվելով արծաթի դրամի: ԺԷ դարում 200 դինարը, որ կոչվում էր մեկ աբասի, կշռում էր 7–9 գրամ մաքուր արծաթ (**Փափագյան Հ.**, պրակ Ա, 108:):

³⁸ Արաբ մատենագիրներ Թ-Ժ դարեր, 2005, 100–101:

վանաբար ծագել են վերը նշված օրինակներում առկա անհամապատասխանություններն ու տարբերությունները: Ինչպես կտեսնենք ստորև դաշնագրերի մյուս խմբի օրինակների մեծ մասում ջիգայի չափը նշող մասն ընդհանրապես հանվել է:

Օսմանյան կայսրության տարածքում հայտնաբերված դաշնագրի հրատարակիչ Համիդալլահն այն կարծիքին է, որ այդ փաստաթուղթը ստեղծվել է քրիստոնյաների կողմից և հայերը որևէ կերպ չեն առնչվել Մուհամմադ մարգարեի հետ, որպեսզի կարողանային նրանից դաշնագիր ստանալ: Բացի այդ, նրա կարծիքով այդ դաշնագիրը միակողմանի է և պաշտպանում է միայն քրիստոնյաների շահերը: Նա թվարկում է փաստաթղթում նշվող մի շարք վկաների անուններ (Մուլավիա իբն Սուֆյան, Աբդալլահ իբն Աբբաս, Աբդալլահ իբն Ամրու իբն Աս և այլն), որոնք դաշնագրի կնքման ժամանակ չէին կարող հանդես գալ որպես վկաներ՝ ժամանակագրական անհամապատասխանությունների պատճառով³⁹:

Իրականում վերը նկարագրված դաշնագրերը կոմպիլատիվ բնույթի փաստաթղթեր են, որոնցում նշվող անձիք պատմական անձնավորություններ են և առնչություններ ունեն տարբեր դաշնագրերի ստեղծման հանգամանքների հետ: Մասնավորապես, Մուլավիա իբն Սուֆյանի անվան առկայությունը նրանցում ակնարկ է Թեոդորոս Ռշտունու և Ասորիքի կառավարիչ Մուլավիա իբն Սուֆյանի միջև 652 թ. կնքված դաշնագրի մասին⁴⁰: Պատմական Հայաստանի տարածքում ապրող հայերը իրոք Մուհամմադ մարգարեի հետ որևէ առնչություն չեն ունեցել: Այս կապակցությամբ վերը նշված 1583 թ. վավերագիրն ուսումնասիրող Հ. Փափագյանը իրավացի կարծիք է հայտնել, որ իրականում իսլամի մարգարեի անվան հետ է նույնացվել Աբդ ալ-Մելիք ամիրայի կողմից 703 թ. Հայաստան արշավող Մուհամմադ գորավարի անունը⁴¹: Վերջինիս ընդառաջ դուրս է եկել Սահակ Չորափորեցի կաթողիկոսը, որի խնդրանքով էլ դաշնագիրը կնքվել է⁴²: Այս միտքը հաստատում է նաև այն հանգամանքը, որ 1583 թ. դաշնագրում նշվում է, որ այն տրվել է Սահակ Չորափորեցի կաթողիկոսի խնդրանքով⁴³: Իսկ այն, որ Մուհամմադ գորավարը ևս կարող էր կնքած լինել նման դաշնագիր, չի կարելի բացառել, քանի որ պահպանվել են բազմաթիվ դաշնագրեր կնքված արաբ գորավարներ Խալեդի, Նա՛մանի, Հազիֆա իբն Յամանի⁴⁴ կողմից: Փաստաթղթերի ուշ շրջանում

³⁹ نامه ها و پیمانه های سیاسی حضرت محمد و اسناد صدر اسلام، ص 631.

⁴⁰ Պատմություն Սեբեոսի, 1979, 169:

⁴¹ Փափագյան Հ., պրակ Ա, 99:

⁴² Ղևոնդ, 1982, 35:

⁴³ Փափագյան Հ., պրակ Ա, 70:

⁴⁴ نامه ها و پیمانه های سیاسی حضرت محمد و اسناد صدر اسلام، ص 505, 504, 449, 446.

ստեղծված լինելու հանգամանքով կարելի է բացատրել տարբեր միմյանց ոչ ժամանակակից անձանց անունների հիշատակումը վկաների շարքում:

Այսպիսով, տվյալ դեպքում գործ ունենք պատմական հենքի վրա կառուցված միևնույն մեզ անհայտ արաբերեն բնագրի ուշ շրջանի (Թ—ԺԹ դարերի) ընդօրինակությունների և թարգմանական տարբերակների հետ: Եվ փաստորեն այդ փաստաթղթերը տեքստային աննշան տարբերություններով շրջանառվել են մահմեդական տիրապետության տակ ապրող ոչ միայն հայերի, այլև քրիստոնյա մյուս դավանանքներին պատկանող ժողովուրդների շրջանում դարեր շարունակ՝ փոփոխվելով ու հարմարեցվելով ժամանակի և միջավայրի պահանջներին, որպեսզի ավելի արդյունավետ կերպով պաշտպանեն նրանց իրավունքները մահմեդական հարևանների ու իշխանությունների ոտնձգություններից:

Առավել մեծաքանակ խումբ են կազմում չորրորդ արդարադատ խալիֆա (Իմամ) Ալի իբն Աբու Թալեբի անունից տրված դաշնագրի օրինակները, որոնց հիմքում ևս ուրվագծվում է հնագույն արաբերեն տարբերակի առկայությունը: Այս խմբի դաշնագրերից են Մատենադարանի արաբատառ ֆոնդում որպես ձեռագիր հ. 357 գրանցված 1694 թ. փաստաթուղթը և 1767 թ. Աստրախանում ընդօրինակված պարսկերեն վավերագրերը, որոնցից երեքի վրա գրված է, որ ընդօրինակվել են Պետերբուրգում պահվող պատճենից⁴⁵: Գրեթե նույն բովանդակությամբ դաշնագրի մեկ այլ ընդօրինակություն պահվում է Թեհրանում, Պառլամենտի գրադարանի մի պարսկերեն ձեռագիր ժողովածուի մեջ, որը գրվել է XIX դարում⁴⁶: Իմամ Ալիի անունից կնքված այս խմբի դաշնագրերի երկու օրինակի մասին էլ նշում է Լ. Մինասյանը, ըստ որի դրանցից մեկը պահվում է Սպահանի պետական թանգարանի Չեհելսոթուն պալատում հ. 98-ի տակ, մյուսը՝ Նոր Ջուղայում⁴⁷: Նոր Ջուղայի փաստաթուղթը ևս բնօրինակը չէ, և նրա հատվածային ֆոտոպատճենում երևում է, որ այն նոտարական կնիքով հաստատված պատճենն է՝ «պատճենը համապատասխանում է իսկականին» նշումներով⁴⁸: Սպահանի Չեհելսոթուն պալատում պահվող Իմամ Ալիի կողմից տրված երկլեզվա (արաբերեն և պարսկերեն) դաշնագիրը 1909 թ. տպագրվել է Թեհրանում: Այն ունի առաջաբան, որտեղ նշվում է, որ տպագրվել է Սեֆյան ժամանակաշրջանից մեզ հասած

⁴⁵ Մատենադարան, Ձեռագրատանից ստացված նյութեր, թղթ., 80գ, վավ. 38, էջեր 5–4, 16բ:

⁴⁶ Իրանի պառլամենտի գրադարան, ձեռ. 8855, էջ 3բ–6ա:

⁴⁷ **Մինասյան Լ.Գ.**, Երկու հրովարտակ Մահամմադ մարգարեից և Ալի ամիրապետից, 1363 (1985), 1–2:

⁴⁸ Նույն տեղում, 15:

քուֆի գրչությամբ գրված մի փաստաթղթի հիման վրա, որը պահվում էր Սպահանի Չեհելսոթուն պալատում⁴⁹:

Վերը նշված փաստաթղթերի և տպագիր տարբերակի արաբերեն բնագրի տեքստաբանական համեմատությունից պարզ է դառնում, որ պարսկերեն տարբերակները հանդիսանում են միևնույն արաբերեն փաստաթղթի տարբեր թարգմանական օրինակները և ստեղծվել են նրա հիման վրա՝ կամայականորեն բաց թողնելով նրա որոշ հատվածներ, այդ թվում նաև ջիզյայի չափը նշող մասը:

Հիշյալ խմբի բովանդակային առանձնահատկություններից է այն, որ կնքվել է Էմամ Ալիի հանձնարարությամբ հիջրայի 40 թվականի սաֆար ամսին Հիշամ իբն Ութբա Վադդասի կողմից 40 հոգուց բաղկացած քրիստոնյա (կամ հայ) հոգևորականների հետ (հիշատակվում են Հակոբ (Ակոբ), Աբրահամ (Իբրահիմ), Եսայի (Իսա) անունները): Վերը նշված Հիշամ իբն Ութբա իբն Աբի Վադդասը եղել է Ալիի զորավարներից, որը մասնակցել է 636 թ. տեղի ունեցած Յարմուքի ճակատամարտին և այնուհետև Երուսաղեմի նվաճմանը, իսկ Աբրահամը հայ պատմագրության մեջ հիշատակվում է որպես 630-ականներին «մարգարեի դաշնագիրը» կնքած Երուսաղեմի քրիստոնեական պատվիրակությունը գլխավորող հայոց պատրիարքը⁵⁰:

Չնայած որ տպագրված վավերագրի արաբերեն տարբերակում «հայ» բառը չի նշվում, նրա փոխարեն մի քանի անգամ նշվում է «քրիստոնյաներ» (نصارى) բառը⁵¹, սակայն տողատակում պարսկերեն թարգմանության մեջ փոխարենը նշվում է «հայեր» բառը: «Հայեր» բառն է նշվում նաև մյուս պարսկերեն թարգմանական տարբերակներում⁵²:

1909 թ. տպագրված պայմանագրում նշվում է վճարվող ջիզյայի չափը՝ «33 դիրհեմ արծաթ» ձևով⁵³, որն առավել մոտ է Աբբասյան խալիֆայության շրջանում զանձվող ջիզյայի չափին, որը կազմում էր 12, 24 և 48 դիրհեմ⁵⁴: Կարծում ենք հենց այս պատճառով հետագա տարբերակներում, չհամապատասխանելով ժամանակի իրողություններին և մասնավորապես զանձվող ջիզյայի չափին, վավերագրերի այդ հատվածը բաց է թողնվել:

Այս խմբի դաշնագրերը ևս իրենց բովանդակային առանձնահատկություններով և անգամ բառային ձևակերպումներով նույնական են Մուհամ-

⁴⁹ عهدنامه محمد پیغمبر، تهران، 1327، ص. 2-3.

⁵⁰ Սաւալանեանց S., h. Ա., Երուսաղեմ, տպ. Սրբոյ Յակոբեանց, 1931, 261:1

⁵¹ عهدنامه محمد پیغمبر، ص. 4, 5, 8.

⁵² Մատենադարան, ձեռ. 357, Ձեռագրատանից ստացված նյութերի ֆոնդ, թղթ. 80գ, վավ. 38; Իրանի Պաշտամենտի գրադարան, ձեռ. 8855, էջ 3բ:

⁵³ عهدنامه محمد پیغمبر، ص. 15.

⁵⁴ Արաբ մատենագիրներ Թ-Ժ դարեր, 2005, 100–101:

մադ մարգարեի կողմից Նաջրանի քրիստոնյաներին տրված պայմանագրի օրինակներից մեկի հետ⁵⁵:

Նաջրանի քրիստոնյաներին տրված դաշնագրի օրինակի մասին նրա հրատարակիչը նշում է հետևյալը. «Այս դաշնագիրը, որ Մուհամմադ մարգարեն տվել է Նաջրանի ու մյուս քրիստոնյաներին, ընդօրինակվել է Փիր Մաշայի (?) կողմից հիջրայի 260 թվականին (873/4 թ.) Հաբիր հոգևորականի մոտ եղած նմուշից, որն իր հերթին ընդօրինակվել է Բեյթ ալ-Հիքմայթի գրադարանում⁵⁶ պահվող կաշվի վրա գրված Մուհամմադ մարգարեի կնիքը կրող օրինակից»⁵⁷:

Մատենադարանի Կաթողիկոսական դիվանում պահվում է անթվակիր արաբերեն մի փաստաթուղթ՝ գրված գոմեշի կաշվի վրա, որը բովանդակում է Իմամ Ալիի անունից քրիստոնյաներին տրված դաշնագրի մի մասը⁵⁸: Այն սկզբից թերի է և տեղ-տեղ այրվածքի հետևանքով անընթեռնելի: Այդուհանդերձ նրա առանձին հատվածների համեմատությունը մեր ձեռքի տակ եղած այլ դաշնագրերի հետ, հաստատում է բովանդակային նույնականությունը նրանց հետ, և այն հնագույն է այս խմբի մեզ հայտնի օրինակներից: Նաջրանի քրիստոնյաներին տրված դաշնագրի նախնական տարբերակի վերը նշված արտաքին հատկանիշները համապատասխանում են Մատենադարանի հնա-

⁵⁵ Գրեթե նույն անձնանուններն են նշվում Նաջրանի քրիստոնյաներին տրված պայմանագրում՝ «Մեիդ Աբդ Յաշու՛, Իբն Հաջարա, Իբրահիմ վանական և Իսա եպիսկոպոս»: Այս դաշնագրում հանդիպում են գրեթե նույն ձևակերպումները ինչ որ քրիստոնյաներին տրված խմբի դաշնագրերում. «Այս պայմանագիրը պետք է հաշվի առնեն մինչև այն ժամանակը, երբ ծովը կթրջի բուրդը, երկնքից անձևի կաթիլները կթափվեն, գետնին բույս կբուսնի, աստղերը երկնքում կփայլեն *نامه ها و پيمانهای سياسي حضرت محمد و اسناد صدر اسلام*, ص 234

عهدنامه محمد پیغمبر، ص. 6-7. Համեմատիր

⁵⁶ Բեյթ ալ-հիքմայթ *بيت الحكمة* կամ «Իմաստության տունը» իսլամի ոսկե դարի խոշոր մտավորական կենտրոնն էր, որ հիմնել էր իսաիֆ Հարուն ալ-Ռաշիդը (իշխել է 786–809 թթ.) Բաղդադում և որն իր զարգացման գագաթնակետին է հասնում իսաիֆ Մա՛մունի օրոք (813–833): Այս գիտական հաստատության մաս են կազմել ինչպես մահմեդական, այնպես էլ քրիստոնյա ու հրեա ծագում ունեցող հետազոտողները: Բացի տարբեր լեզուներով գրքերի արաբերեն թարգմանումը, այստեղ աշխատողները հեղինակել են նաև մի շարք կարևոր գիտական գործեր: Այն ոչնչացվել է 1258թ. մոնղոլների կողմից Բաղդադի պաշարման ժամանակ:

⁵⁷ *نامه ها و پيمانهای سياسي حضرت محمد و اسناد صدر اسلام*, ص 232

⁵⁸ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, ցուցակ 29, թղթ. 3, վավ. 130: Տե՛ս այդ մասին նաև Վ. Մակարյան, 2010, 170–172:

գույն փաստաթղթին: Ուստի չի բացառվում, որ վերջինս կարող է լինել Բեյթ ալ-Հիքմաթում պահվող օրինակի մասը կամ նրա պատճենը⁵⁹:

Այս խմբի դաշնագրերի վերոհիշյալ հատկանիշներն ու առանձնահատկությունները թույլ են տալիս եզրակացնել, որ տվյալ դեպքում ևս գործ ունենք ուշ շրջանում ստեղծված կոմպիլատիվ բնույթի փաստաթղթերի հետ, որոնք կրում են Մուհամմադ մարգարեի կողմից Նաջրանի քրիստոնյաներին, Իմամ Ալիի կողմից Երուսաղեմի հայ հոգևորականներին տրված պայմանագրերի տարրերը և ինչպես երևում է, դրանք ևս շրջանառվել են ինչպես հայերի, այնպես էլ այլ քրիստոնյաների իրավունքների պաշտպանության նպատակով:

Մի կողմ դնելով դաշնագրերի վավերականության հարցը, որն ինչպես տեսնում ենք, վիճելի է բնօրինակների բացակայության պատճառով (մեզ հասած անգամ հնագույն տարբերակները Ժ դարից հետո ստեղծված կոմպիլատիվ բնույթի պատճեններ են), կցանկանայինք մի քանի խոսքով անդրադառնալ նրանց պատմական նշանակությանը:

Ոչ մահմեդականների իրավունքները իսլամական երկրներում ձևավորվում են՝ հենվելով հենց այս դաշնագրերի վրա: Այդ իրողությունն ակնհայտ է իսլամական իրավագիտության ակունքներում կանգնած Ալի իբն Հուսեյնի (կամ Իմամ Սաջջադի)⁶⁰ իսլամական երկրում ոչ մահմեդականների իրավունքների մասին արված ձևակերպումներում: Վերջինս, մասնավորապես, նշում է. «Նրանց [ոչ մահմեդականների] իրավունքն այն է, որ ընդունես այն, ինչ Աստված է ընդունել նրանցից, հավատարիմ լինես այն պայմանին, որ կնքվել է իսլամական պետության և նրանց միջև..., և քո անձի ու նրանց միջև պատենշ թող լինի Աստծո ուխտն ու հավատարմությունը Աստծո ու նրա մարգարեի հանձնարարությունների նկատմամբ: Քանզի մեծ մարգարեն պատվիրել է «Ես նրա թշնամին եմ լինելու, ով բռնություն կգործադրի իսլամական պետություններում ապրող այլ կրոնների հետևորդների նկատմամբ»⁶¹:

Ոչ մահմեդականների (գիմմի) կարգավիճակը, նրա հարկային պարտավորություններն ու իրավունքները հստակ ձևակերպում են ստանում իսլամական իրավագիտությանը առնչվող Աբու Յուսուֆի «Հարկերի մատյան» աշ-

⁵⁹ Կաթողիկոսական դիվանի նկարագրության մեջ նշված է, որ այն գնվել է Գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող Ալիա Մանուկյանից: Նրա հայրը այն բերել է իր հետ Կարինից:

⁶⁰ Աբու Մուհամմադ Ալի իբն Հուսեյն ալ-Սաջջադը (658–712 թթ.) շիա մահմեդականների չորրորդ իմամն է, որը գրել է իսլամական իրավագիտությանը վերաբերող «Իրավունքների գիրքը» աշխատությունը:

⁶¹ Հիսուն իրավունք ըստ Ալի Էբն Հուսեյնի, 2014, 57:

խատության համապատասխան բաժիններում⁶²: Մասնավորապես «եկեղեցիների, տաճարների ու խաչերի մասին» բաժնում նշվում է, որ նվաճվող այլադավան բնակչության պաշտամունքային վայրերը չեն քանդվել, որովհետև «մահմեդականների ու զիմմիների միջև կնքվել է հաշտության պայմանագիր ջիզյա վճարելու պայմանով և քաղաքները նվաճվեցին այն պարտավորությամբ, որ նրանց տաճարներն ու եկեղեցիները թե՛ քաղաքի ներսում, թե՛ նրանից դուրս չպետք է քանդվեն, որ նրանց կյանքը երաշխավորվում է նրանով, որ մահմեդականները նրանց համար կռվելու են ու թշնամիներից պաշտպանելու: Այս բոլորի դիմաց զիմմիները պետք է մահմեդականներին ջիզյա վճարեն: Այս պայմաններով հաշտության դաշնագիր է կնքվել և գրվել պայմանագիր՝ պարտավորվելով նոր տաճարներ ու եկեղեցիներ չկառուցել»⁶³: Հետագայում որոշ խալիֆաներ ցանկացել են քանդել քրիստոնեական տաճարները: Այն ժամանակ բնակիչները ցույց են տվել այդ պայմանագրերը, որով խաղաղություն է կնքվել մահմեդականների ու նրանց միջև: Ինչ վերաբերում է նոր կառուցված տաճարներին ու եկեղեցիներին, ապա դրանք պետք է քանդվեին⁶⁴:

Դաշնագրերից յուրաքանչյուրը, կախված նրա վերարտադրման ժամանակաշրջանից ու գործածության համար նախատեսված կոնկրետ աշխարհագրական միջավայրից, ունի իր առանձնահատկությունները: Պատահական չէ, որ Իրանում, որտեղ ԺՁ դարից ի վեր պետական կրոնն էր շիա իսլամը, շրջանառվող դաշնագրերի գերակշիռ մասը կամ տրված են Իմամ Ալիի անունից կամ հաստատված նրա կամ մեկ այլ շիա իմամի կողմից (տե՛ս վերը): Ինչպես վերը նշեցինք, որոշ տվյալների համաձայն Իմամ Ալիի անունից տրված դաշնագրերի հնագույն օրինակը պահվում էր Սպահանի Չեհելսոթուն պալատում, որը կառուցվել է Սեֆյան շահ Աբբաս Բ-ի (1632–1666 թթ.) կողմից: Ուստի կարելի է ենթադրել, որ Սեֆյան պետության մայրաքաղաքում գտնվող շահական պալատում պահվող հիշյալ փաստաթուղթը բավականին մեծ կարևորություն է ունեցել իրանահպատակ հայության կյանքում: Սեֆյան պետության ժամանակաշրջանում (1694 թ.) ընդօրինակված մի վավերագրի լուսանցքում, նրան էլ ավելի մեծ ուժ հաղորդելու նպատակով նշվում է, որ պատճենի համապատասխանությունը բնագրին հաստատված է շեյխ Սեֆիի՝ Սեֆյան թագավորական տան հիմնադրի կողմից⁶⁵:

Վերը քննված դաշնագրերում Աստծո անունից և Մուհամմադ մարգարեի ու Իմամ Ալիի հաստատմամբ ամրագրվում էին բոլոր այն հիմնական իրա-

⁶² Արաբ մատենագիրներ Թ-Ժ դարեր, 2005, 99–107:

⁶³ Նույն տեղում, 111:

⁶⁴ Արաբ մատենագիրներ Թ-Ժ դարեր, 2005, 116:

⁶⁵ Մատենադարան, արաբերեն ձեռագրերի ֆոնդ, ձեռ. 357:

վունքներն ու ազատությունները, որ ունեին իրանական տիրապետության տակ ապրող հայերը:

Դաշնագրերում նշվող դրույթներից են այն, որ «զիմմիների վրա դրված ջիզայի չափից ավելին չպահանջեն...», նրանց դեմ թշնամություն չանեն..., բռնի հավատափոխ չանեն և նրանց չարգելեն ճգնավորի կյանքով ապրել..., տեղից-տեղ շրջել..., եկեղեցական զանգերը հնչեցնել..., չքանդեն նրանց տներն ու պաշտամունքի վայրերը..., ոչ մի բան չմտնի նրանց տներից մզկիթների շինությունները և ոչ էլ մուսուլմանների տները..., անգամ եթե զիմմիները օգնության կարիք ունենան, մահմեդականները պետք է այն անհատույց տրամադրեն»⁶⁶, «քրիստոնյա կանանց հետ բռնի չպետք է ամուսնանան, և վերջիններիս կամավոր ամուսնության դեպքում՝ նրանց մահմեդականություն չպարտադրեն»⁶⁷:

Դաշնագրում հանդիպող ձևակերպումները «ջիզյա վճարող զիմմիների» իրավունքների մասին հանդիպում են նաև իրանահպատակ հայերի տարբեր խնդիրների կապակցությամբ մահմեդական աստվածաբանների ու իրավագետների (ուլամաներ ու ֆակիհներ) և մահմեդական հոգևորականների գերագույն ատյանի (դիվան ալ-սադարաթ) կայացրած վճիռներում և հրամանագրերում (ֆաթվա և միսալ), որոնք գերակշռում են հատկապես XVII դարի երկրորդ կեսին: Դա այն շրջանն էր, երբ Սեֆյան պետության թուլացմանը զուգահեռ ուժեղանում էր կրոնական իշխանությունը և ազդեցիկ հոգևորականների, հատկապես մոլլաբաշի Մուհամմադ Բադեր Մաջլեսիի դերը երկրի կյանքում: Վերջինիս մոլեռանդության պատճառով չնայած այն բանին, որ վերոհիշյալ շահերը աչքի չէին ընկնում իրենց կրոնական անհանդուրժողականությամբ, նրանց իշխանության տարիներին ուժեղանում են հալածանքները այլադավան փոքրամասնությունների, այդ թվում նաև քրիստոնյա հայերի նկատմամբ⁶⁸: Այնուամենայնիվ հայ հոգևոր առաջնորդներին հաջողվում է ազատել հայությանը կրոնական հալածանքներից և իրականացնել լայնածավալ եկեղեցական շինարարություն Արևելյան Հայաստանի տարբեր շրջաններում, որ սկսվել էր ԺԷ դարի կեսերից⁶⁹:

Դաշնագրերում շարադրված դրույթներն առկա են մահմեդական հոգևորականների գերագույն ատյանի կողմից հայությանը վերաբերող մի շարք խնդիրների (հայ զիմմիների, ինչպես նաև Հայոց Եկեղեցու սեփականատիրա-

⁶⁶ عهدنامه محمد پیغمبر، ص 14.

⁶⁷ Մատենադարան, արաբերեն ձեռագրերի ֆոնդ, ձեռ. 358:

⁶⁸ تاریخ ایران: دوره صفویان، (پژوهش از دانشگاه کمبریج)، ص. 125.

⁶⁹ Բազմաթիվ եկեղեցիների վերանորոգման մասին է խոսում Առաքել Դավրիժեցին (Առաքել Դավրիժեցի, 1988, 273–278):

կան իրավունքները մահմեդականների ոտնձգություններից պաշտպանելու⁷⁰, հայկական եկեղեցական արարողություններ կատարելու, եկեղեցու զանգերը հնչեցնելու⁷¹, վնասված եկեղեցիները նորոգելու և նորերը կառուցելու⁷², հայկական եկեղեցիների բարձր ու ընդարձակ լինելու պատճառով հայերին չնեղելու⁷³, Իրանի տարբեր շրջաններում շրջող հայ վաճառականներից ջիզյա չպահանջելու ու նրանց հանդեպ բռնի գործողությունները արգելելու⁷⁴) կապակցությամբ կայացրած դրական որոշումներում և դրանց հիման վրա հրապարակված հրամանագրերում: Իրանի հոգևորականության բարձրագույն աստիճանի կայացրած վճիռները արգելում էին նաև տարբեր շրջաններում բնակվող հայ զիմմիներից իրենց իրավունքներին համապատասխան վարվելու համար հավելյալ գումարներ պահանջելն ու խոչընդոտելը⁷⁵, նրանց նկատմամբ բռնի ու անօրինական գործողությունները⁷⁶, որն անշուշտ խոսում է վերոհիշյալ դաշնագրերի գործուն դերի ու նշանակության մասին: Վերը թվարկված կրոնական ազատությունները փաստորեն արտացոլված են նաև դաշնագրերում և մի շարք կետերում, ինչպիսիք են նոր եկեղեցիների կառուցման, եկեղեցական զանգերը հնչեցնելու հնարավորությունը Սեֆյան ժամանակաշրջանում, գերազանցում էին Աբու Յուսուֆի «Հարկամատյանում» նշվող իրավունքները:

Հայ պատմիչները գրի են առել մի շարք դեպքեր, որոնցում երևում է այս դաշնագրերի խաղացած դրական դերը մասնավորապես Օսմանյան սուլթանի կողմից հայերի համար կայացրած վճիռներում⁷⁷:

Այդուհանդերձ, պետք է նշել, որ Մուհամմադ մարգարեի ու նրան հաջորդած խալիֆաների անունից կնքված դաշնագրերը միակ իրավական հիմքը չէին, որ կանխորոշում էին իրանահպատակ հայության դրությունը տարբեր ժամանակաշրջաններում: Հայերի մեծ բռնազաղթը Իրան իրականացնող Աբբաս Ա-ի կողմից 1629 թ., իր մահից քիչ առաջ, հրապարակվում է մի հրամա-

⁷⁰ Մատենադարանում պահվող պարսկերեն հրովարտականների մեծամասնությունը հրապարակված են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ու հայոց վանքերի ունեցվածքի պաշտպանության նպատակով և արգելում են կոնկրետ անձանց ոտնձգությունները դրանց նկատմամբ: Բայց կան նաև վավերագրեր, որոնցով տեսականորեն ապահովվում են զիմմի իրավունքները իրեն պատկանող սեփականությունը տնօրինելու հարցում (Տե՛ս **Կոստիկյան Ք.**, պրակ III, 2005, վավ. 4, 7):

⁷¹ Նույն տեղում, վավերագրեր 31, 34:

⁷² Նույն տեղում, վավերագրեր 19, 20, 29, 32, 33, 35 և այլն:

⁷³ Նույն տեղում, վավերագիր 11:

⁷⁴ Նույն տեղում, վավերագրեր 21, 35:

⁷⁵ Նույն տեղում, վավերագիր 28:

⁷⁶ Նույն տեղում, վավերագրեր 31, 37:

⁷⁷ **Գրիգոր Դարանաղցի**, 1915, 133, 211:

նագիր, որը շրջանառության մեջ է դնում շիա իրավագիտության ձևավորման ակունքներում կանգնած իմամ Ջա'ֆարի օրենքը⁷⁸։ Ըստ այդ օրենքի յուրաքանչյուր զիմմի, որ մահմեդականություն էր ընդունում, առաջնային իրավունք էր ստանում ժառանգելու իր մեռած այլադավան ազգականների ունեցվածքը։ Այս օրենքի կիրառությունը բացահայտ կերպով խրախուսում էր այլադավանների մահմեդականացումը, որը լայն թափ է ստանում Իրան տեղափոխված հայության շրջանում։ Ժամանակակից արևմտյան աղբյուրների վկայությամբ ԺԷ դարի կեսին Սպահանի արվարձաններում բնակվող շուրջ 50000 քրիստոնյաներ, հիմնականում վրացիներ ու հայեր, մահմեդականություն են ընդունում⁷⁹։ Իմամ Ջա'ֆարի օրենքի կապակցությամբ բազմաթիվ բողոքագրեր ու փաստաթղթեր կան պահպանված⁸⁰, որոնց քննությունը ցույց է տալիս, որ այդ օրենքի հիման վրա անգամ ազգակցական կապ չունեցող անձիք փորձել են տեր դառնալ մեռած քրիստոնյաների ունեցվածքին⁸¹ և Հայոց Եկեղեցու վակֆային կալվածքներին⁸²։

Մի այդպիսի դեպք է նկարագրում Հ. Տեր-Հովհանյանը, որ տեղի է ունեցել ԺԹ դարի կեսերին։ Ըստ նրա Նոր Ջուղայեցի պարոն Մնացականի մահից հետո վերջինիս ունեցվածքը ժառանգում է նրա հեռավոր ազգական ոմն Դուլաբի Խաթուն, որը մահմեդականացել էր, հակառակ այն հանգամանքին, որ տեղի մահմեդական հոգևոր առաջնորդին հայ հոգևորականների միջնորդությամբ ներկայացվել էր «զթուղթն՝ զորմէ ասեն ձեռագիր զոլ Մահմեդի, որոյ նիւթ է չնեղել զՀայս այլ ամենայնիւ պատուել զնոսա...»⁸³։

Ավելորդ է ասել, թե ինչպիսի չարիք էր Իմամ Ջա'ֆարի օրենքի կիրառությունը հայության համար, նամանավանդ, որ, երբեմն, ինչպես վերը նկարագրված օրինակում, այդ օրենքն ավելի առաջնային էր դիտվում, քան վերը քննված դաշնագրերը, որոնցում հաստատվում էր քրիստոնյաների կյանքի ու գույքի անձեռնմխելիությունը։ Հայոց Եկեղեցու նվիրյալ առաջնորդները մշտապես ջանացել են դադարեցնել Իմամ Ջա'ֆարի օրենքի կիրառությունը կամ մեղմել նրա կործանարար հետևանքները իրանահպատակ հայության

⁷⁸ Այս հրամանագրի հրապարակման մասին տեղեկություններ կան Կարմենյան տարեգրության մեջ (**Ghougassian V. S.**, 1995, 102, հղում՝ *Chronicle of the Carmelites*, vol. I, 288).

⁷⁹ **Ghougassian V. S.**, 1995, 102–3.

⁸⁰ **Փափազյան Հ.**, 1956, № 3, 87–88:

⁸¹ **Կոստիկյան Բ.**, պրակ III, 18:

⁸² Նույն տեղում, 51:

⁸³ **Տեր-Յովհաննես Զ.**, հ. Ա, 1880, 453:

կյանքում⁸⁴։ Եվ այդ հարցում առանձնակի կարևորություն էին ստանում վերը ներկայացված դաշնագրերը։

Այստեղից էլ գալիս է դաշնագրերի նկատմամբ դարեր շարունակ չթուլացող հետաքրքրությունը, որի մասին է փաստում այն իրողությունը, որ 1909 թ. (հիշրայի 1327 թ.) այդ փաստաթղթի արաբերեն տարբերակը՝ տողատակում պարսկերեն թարգմանությամբ վիմատիպ եղանակով հրատարակվել է Թեհրանում Միրզա Ալի Ասղարի տպարանում։ Ըստ տպագիր օրինակի վերջաբանի՝ այն տպագրվել է Իրանում սահմանադրական շարժման առաջնորդ և ներքին գործերի նախարար Սարդար Աս'ադ Ալի Ղուլի Բախթիարիի հրամանով, Քաշանի բժիշկ Ադա Միրզա Ալի Ռեզայի հոգածությամբ և Մուսթովֆի Մուհամմադ Նաջմաբադիի ձեռքով գրված օրինակից⁸⁵։ Կարծում ենք, որ այս հարցում պետք է, որ կարևոր դեր խաղացած լինի հայերի ակտիվ մասնակցությունը Իրանում սահմանադրական հեղափոխությանը և նրա հայազգի առաջնորդ Եփրեմ խանը, որը 1909 թ. նշանակվել էր Թեհրանի ոստիկանապետ։

Հիշյալ դաշնագրի տպագրությունը առավել տրամաբանական է թվում Իրանում 1905–1911 թթ. տեղի ունեցող Սահմանադրական շարժման և հեղափոխության համատեքստում, որին ակտիվորեն մասնակցում էին Իրանի կրոնական փոքրամասնությունները՝ ջանալով բարելավել իրենց դրությունը։ Սահմանադրական հեղափոխության արդյունքում կրոնական փոքրամասնությունների իրավունքները ամրագրվում են նրա Սահմանադրության մեջ։ Եթե նախկինում Իրանում կրոնական փոքրամասնությունների դրությունը և նրանց նկատմամբ իշխանությունների վերաբերմունքը հիմնականում կախված էր տիրակալի անձնական վերաբերմունքից, նրա վարած քաղաքականությունից, արտաքին մի շարք գործոններից և կրոնական իշխանությունների ազդեցության աստիճանից, ապա Սահմանադրական հեղափոխությունից հետո այդ իրավունքները օրենքի ուժ են ստանում։

Իրանի առաջին սահմանադրությամբ կրոնական փոքրամասնությունները իրավունք են ստանում ունենալու իրենց ներկայացուցիչը Իրանի խորհրդարանում (մաջլես)։ Բոլոր իրանցիները, ներառյալ նաև կրոնական փոքրամասնությունները օրենքի առաջ հավասար են ճանաչվում, հարկային պարտավորությունների հարցում ևս որևէ արտոնություններ ու տարբերություններ չկային։

Պատմական աղբյուրների համաձայն դեռ 1881/2 թ. Ղաջար շահ Նասրադդինի հրամանով ջիզայի գանձումը զրադաշտականներից դադարեցվել

⁸⁴ Կոստիկյան Ք., պրակ IV, 2008, 14–15։

⁸⁵ عهدنامه محمد پیغمبر، ص. 19.

էր: Սահմանադրական հեղափոխությունից հետո ջիզյան այլևս չէր գանձվում նաև քրիստոնյաներից ու հրեաներից⁸⁶:

